# Դ Վ Ի Ն

# I

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1964-1970 թթ.



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ

№ 13

# ДВИН

## I

А. А. КАЛАНТАРЯН

## РАСКОПКИ ЦЕНТРАЛЬНОГО КВАРТАЛА

1964—1970 гг.

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

№ 13

# Դ Վ Ի Ն

## I

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

692

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1964—1970 ԹԹ.

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1976

902 6 (с 43)
Ք 14

Գրակը նվիրված է Դվինի IX դ. նյութական մշակույթի ուսումնասիրությանը, որը կատարված է կենտրոնական թաղամասի պեղումներից հայտնաբերված հարուստ նյութերի հիման վրա։ Հիմնականում քննարկված են արհեստային արտադրանքի կարևոր ճյուղերի՝ մետաղագործության, խեցեգործության, ապակեգործության հետ կապված հարցեր։ Տրված է կենտրոնական թաղամասի շերտագրությունը, աշխարհիկ հուշարձանների ճարտարապետությունը և այլն։ Հիշյալ հարցերի քննությունը կարևոր է Հայաստանի միջնադարյան մշակույթի տարբեր կողմերի լուսաբանման համար։

Պատասխանատու խմբագիր
Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Ք $\frac{0162}{703(02)-76}$ 33—74 © Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976.

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Զորրորդ տասնամյակն է, ինչ շարունակվում են Դվին քաղաքի պեղումները։ Դվին քաղաքի 1937—1950 թթ. պեղումների հաշվետվությունը հրատարակված է արշավախմբի պետ պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» մոնոգրաֆիկ աշխատության մեջ (1952 թ.)։ Հայաստանի միջնադարյան սոցիալ-տնտեսական կյանքի, մշակույթի տարբեր բնագավառների ուսումնասիրության համար Դվինում հայտնաբերված նյութերը կարևոր նշանակություն ունեն։ Հատկապես հետաքրքրական է IX դ. նյութական մշակույթը, որը կարծես նոր էր վերածնվում արաբական գերիշխանությունից ազատագրված ժողովրդի կողմից։

Սույն աշխատանքը արդյունք է հեղինակի՝ Դվինի կենտրոնական թաղամասում 1964—1970 թթ. ընթացքում կատարված պեղումների (Դվինի արշավախմբի պետ՝ պրոֆ. Կ. Ղաֆադարյան, կենտրոնական թաղամասի ջոկատի պետ՝ Ա. Քալանթարյան)։ Այն կրում է հաշվետվության բնույթ և նպատակ է հետապնդում վերհանել հիմնականում VIII դ. վերջի—X դ. արհեստային արտադրության մի շարք ճյուղերի՝ խեցեգործության, մետաղագործության, ապակեգործության հետ կապված հարցեր, տալ նրանց արտադրանքի բնույթն ու առանձնահատկությունը, ինչպես նաև կատարել շերտագրական որոշ դիտողություններ՝ պեղված հատվածի սահմաններում։

Հեղինակը շնորհակալություն է հայտնում Դվինի պեղումների ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Կարո Ղաֆադարյանին՝ նյութերի տրամադրման և մասնագիտական խորհուրդների համար։

Բոլոր տիպի չափագրական և գրաֆիկական աշխատանքները կատարել է Դվինի արշավախմբի պետի տեղակալ ճարտարապետ Գրիգոր Քոչոյանը։ Լուսանկարները կատարել են հեղինակը և ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի լուսանկարիչ Գրիգոր Ժամկոչյանը։

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դվինի կենտրոնական թաղամասում առաջին անգամ պեղումներ է կատարել Խաչիկ վարդապետ Դադյանը[1]։ «Արարատ» ամսագրի հաղորդումից երևում է, որ նա աշխատանքները սկսել է դեռևս 1904 թ.[2]։ Պեղումները հիմնականում կենտրոնացված են եղել կաթողիկե եկեղեցու շրջանում, որտեղ բացվել է եկեղեցու հիմնապատերի ներքին երեսը։ Դվինում Խաչիկ վարդապետը պեղել է նաև միանավ բազիլիկ եկեղեցին, այսպես կոչված՝ Ցիզտբուզիտի վկայարանը, որը սխալմամբ համարել է պատմիչների մոտ հիշատակված սբ. Սարգիս եկեղեցին։ Խիստ ուշագրավ է կաթողիկե եկեղեցու արևելյան աբսիդում բացված խճանկարը Տիրամոր պատկերով, որը հավանաբար VII դ. առաջին տասնամյակներին է պատկանում։ Խաչիկ Դադյանի պեղումների ժամանակ հայտնաբերվել են մեծ քանակությամբ հնագիտական տարբեր իրեր՝ խեցեղեն, մետաղե առարկաներ, ապակի, դրամներ, ինչպես նաև ճարտարապետական մանրամասներ։ Հնագիտական նյութերի մի մասը հետագայում տարվել է Զվարթնոց և այժմ ցուցադրվում է Զվարթնոցի թանգարանում[3]։

Դվինի սիստեմատիկ պեղումները սկսվեցին 1937 թ. և փոքր ընդմիջումով (1940—1945) շարունակվում են մինչև մեր օրերը։ Նախապատերազմյան շրջանում աշխատանքները հիմնականում կենտրոնացված էին կենտրոնական թաղամասում, որտեղ պեղվեցին կաթողիկոսական պալատը, կաթողիկե եկեղեցին և միանավ բազիլիկ տաճարը։ Բացվեցին աշխարհիկ և արտադրական բնույթի շինություններ՝ խիստ ավերված վիճակում։ Պեղումները շարունակվեցին նաև 1946—1954 թթ. (տեղամասի պետ՝ ճարտ. Գր. Քոչոյան)։ Այս ժամանակահատվածում հիմնականում մաքրվեց կաթողիկեն, իսկ նրանից հարավ պեղվեց XI—XIII դդ. շերտը (աղ. I)։ Մյուս հատվածներում բացվեցին մի շարք աշխարհիկ շինությունների հիմնապատերը, միջնաբերդից եկող ջրամատակարարման ցանցի հատվածն իր աղբյուրներով և այլն։ Գտնվեցին կավե, մետաղե, ապակե իրերի և առարկաների բազմաթիվ նմուշներ, դրամներ, տուֆ քարից պատրաստված թևավոր խաչեր, արձանագրություններով տապանաքարեր, շինությունների ճարտարապետական քանդակազարդ բեկորներ և այլն։ Պեղումները կենտրոնական թաղամասում ժամանակավորապես ընդհատվեցին մինչև 1964 թվականը։

---

[1] «Արարատ», Վաղարշապատ, 1907, էջ 506, 659—661, տե՛ս նաև 1909, էջ 173—178.

[2] Խաչիկ Դադյանի պեղումների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Կարո Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 39։

[3] Գր. Կարախանյան, Ա. Քալանթարյան, Զվարթնոցի խեցեղենը, ՊԲՀ, 1964, № 4։



* * *

Դվին քաղաքի կենտրոնական թաղամասը (II տեղամաս) գտնվում է միջնաբերդի արևմտյան մասում։ Միջին դարերում այն բոլորից անջատված է եղել ջրային խրամով։ Թաղամասը միջնաբերդի հետ կապված է եղել խրամի վրա գցված կամրջով։ Քաղաքի այդ հատվածը եղել է պարսպապատ և առանձին միավոր է կազմել։ Այնտեղ կառուցվել են եկեղեցական գլխավոր շինությունները՝ սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցին, միանավ բազիլիկ տաճարը, ինչպես նաև կաթողիկոսական պալատը և տարբեր բնույթի այլ կառույցներ։ Կաթողիկեի շրջապատում թաղվել են անվանի հոգևոր և աշխարհիկ գործիչներ։

Շինությունների այս խումբը մասամբ կործանվում է 893 թ. երկրաշարժի ժամանակ, որից հետո այդ թաղամասում սկսվում են կառուցվել աշխարհիկ, գերազանցապես կավակերտ շենքեր։ Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերը վերաբերում են գերազանցապես VIII—IX դդ։ XI—XIII դդ. առարկաները խիստ նվազում են, որը խոսում է թաղամասի երկրաշարժից հետո քիչ բնակեցված լինելու մասին։

Դվինի կենտրոնական թաղամասում նախորդ տարիներին հայտնաբերված նյութերը մեծ մասամբ հրապարակված են։ 1937—1939 թթ. պեղումների արդյունքները ամփոփված են Ս. Վ. Տեր-Ավետիսյանի ձեռագիր աշխատանքում (գրված է ռուսերեն, գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում), որտեղ հեղինակը կարևոր դիտողություններ է կատարել միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերի պարզաբանման ուղղությամբ։

1937—1939 թթ. և 1946—1950 թթ. պեղումների արդյունքներին է նվիրված պրոֆ. Կ. Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» ծավալուն աշխատությունը։ Հեղինակը ամենայն մանրամասնությամբ տալիս է Դվինի սոցիալ-քաղաքական պատմությունը, վերլուծում ճարտարապետական հուշարձանները և կատարում կարևոր ժամանակագրական ճշտումներ, քննության է ենթարկում արհեստագործական արտադրանքը։ Կարո Ղաֆադարյանի աշխատանքը կարևոր նշանակություն ունի միջնադարյան Հայաստանի հնագիտության ուսումնասիրության համար։ Կենտրոնական թաղամասի նյութերի մի մասը հրատարակված են ՀՍՍՀ ԳԱ իսկական-անդամ Բաբկեն Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.» երկհատորանոց շահեկան աշխատությունում։ Դվինի նյութական մշակույթի տարբեր հարցերին են նվիրված Բ. Շելկովնիկովի[4] (խեցեգործություն), Վ. Հարությունյանի[5] (ճարտարապետություն), Հռ. Ջանփոլադյանի[6] (ապակեգործություն), Խ. Մուշեղյա-

---

[4] **Б. А. Шелковников,** Художественная керамика Двинских раскопок, „Известия Арм. ФАНа", 1940, № 4—5; его же, Средневековая художественная керамика Ближнего и Дальнего Востока. „Известия Арм. ФАНа", 1942, № 6; его же, Керамика и стекло из раскопок гор. Двина, ТГМА, т. IV.

[5] Վ. Մ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950։

[6] Հռ. Ջանփոլադյան, Ապակե փորձանոթներ Դվինի պեղումներից, ՊԲՀ, 1964, № 4։ Նույնի, Դվինի ապակե իրերի ժողովածուն, ՊԲՀ, 1966, № 1։ Նույնի, Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., Երևան, 1974, և այլն։

նի[7] (դրամագիտություն), Վ. Աբրահամյանի[8] (արհեստներ) և այլ հեղինակների մենագրությունները և ուսումնասիրությունները։

1964—1970 թթ. պեղումները երևան բերեցին նյութեր, որոնք կարևոր են IX դարի նյութական մշակույթը համակողմանի ուսումնասիրելու համար։ Բացվեցին հետաքրքիր շինություններ, որոնք իրենց ձևերով սերտորեն առնչվում են հայկական ժողովրդական բնակելի տան հետ։ Գտնված նյութերը բավական շատ են և պահանջում են հետագա մանրազնին քննություն։

[7] Х. А. Мушегян, Денежное обращение Двина, Ереван, 1962.

[8] Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1946։ Նույնի, Միջնադարյան Հայաստանի զենքի տեսակները, ՀՊՊԹ աշխատություններ, հ. 2, 1949։

## I. 1964—1970 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Կենտրոնական թաղամասի պեղումներին մասնակցել են հեղինակը (տեղամասի պետ 1964—1968 թթ. և 1970 թ.), հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատակիցներ Ն. Հակոբյանը և Ֆ. Բաբայանը (1969—1970 թթ.), Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ավագ դասախոս Ռ. Եփրեմյանը (1968 թ.), Երևանի պետական համալսարանի ասպիրանտ, այժմ դասախոս Ի. Ղարիբյանը (1968 թ.), համալսարանի պատմության ֆակուլտետի փորձառու-ուսանողներ (1968—1969 թթ.)։ Ընդհանուր աշխատանքները ղեկավարել է Դվինի արշավախմբի պետ պրոֆ. Կարո Ղաֆադարյանը։

**1964 թ.** պեղումները հիմնականում հետախուզական բնույթ էին կրում։ Նպատակն էր պարզել վաղ միջնադարյան Դվինի արհեստային արտադրանքի հետ կապված մի շարք հարցեր, շերտագրական դիտարկումներ կատարել։ Այդ հարցերը լուծվեցին մասամբ ավելի վաղ շրջանի վերաբերյալ, քանի որ պեղումներից դուրս եկած նյութերը գերազանցապես վերաբերում էին IX դարին։

Աշխատանքները հիմնականում կենտրոնացվեցին տեղամասի արևմտյան հատվածում 1954 թ. ընդհատված-19 գծի e, f, g, h քառակուսիների շրջանում (նկ. 2)։ Այդ տարածությունը փռված է կաթողիկե եկեղեցուց արևմուտք, մոտ 15 մ հեռավորության վրա։ e և f քառակուսիները բոլորովին պեղված չէին, իսկ g և h քառակուսիներում հեռացված էր վերին շերտը։ Նախորդ տարիների պեղումների ժամանակ այդ հատվածում բացվել էր հյուսիսից-հարավ ձգվող ինչ-որ շինության պատի մնացորդներ, որը հնարավորություն էր տալիս ենթադրել մոնումենտալ շենքի առկայության մասին։

Պեղումների հետևանքով բացվեց այդ շինության արևելյան պատի մի մասը 20,0 մ երկարությամբ։ Պատի հաստությունը 1,24 մ է, պահպանված մասի բարձրությունը՝ տեղ-տեղ 80 սմ։ Այն ձգվում էր դեպի հարավ և մտնում d-19 քառակուսու մեջ։ Պատի շարվածքի ձևը՝ եղևնաշար, ցույց է տալիս, որ շինությունը պետք է կառուցված լիներ առնվազը VIII դարում։

Այդ են ապացուցում գտնված նյութերը՝ տաշված օղակներով ապակե թասերի բեկորները, VIII դ. արաբական պղնձե դրամները[1] և այդ շրջանին բնորոշ զարդամոտիվներով խեցեղենը։

Շինության ներսում, գետնի մակերեսից 2,0 մ խորության վրա բացվեց շինության հատակը (աղ. II, 1), որը շատ լավ պահպանված էր։ Հատակը մոտ 10 սմ հաստությամբ ոնդացրած կավից էր, որի տակ 20—25 սմ հաստու-

[1] Կենտրոնական թաղամասում 1964—1970 թթ. հայտնաբերված դրամները որոշվել են Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու Խ. Մուշեղյանի կողմից։

թյամբ լցված էր մանր խիճ, հավանաբար եկեղեցու կամ բուն այդ շինության տաշված քարերի ավելցուկներից։ Ըստ երևույթին IX դարում հատակը մի փոքր բարձրացրել են, որի հետևանքով նկատվում են տեղանքի որոշ անհամաչափություններ։

Շինության սենյակների մեջ մտնող e և f-19 քառակուսիներում բացվեցին երկու մեծ հոր (e-19 քառակուսում բացվածի չափերն են. խորությունը՝ 1,0 մ, բերանի տրամագիծը՝ 1,35 մ, f-19 քառակուսու բացվածինը՝ խորությունը՝ 1,75 մ, բերանի տրամագիծը՝ 1,5 մ, հատակի տրամագիծը՝ 2,0 մ), որոնք կոնաձև են և Դվինում լայնորեն տարածված հորերի սիստեմի նախնական ձևերն են ներկայացնում (աղ. III)։ Այդ հորերի VIII—IX դդ. թվագրման օգտին են խոսում նաև Փայտակարանի (Օրեն-Կալայի) պեղումներից, ժամանակամերձ շերտերում երևան եկած նույնատիպ հորերի առկայությունը[2]։

Հորերը հարուստ էին հնագիտական առարկաներով։ Հայտնաբերվել են խեցեղեն և ապակե անոթների բազմաթիվ բեկորներ։ Ապակե անոթները մեծ մասամբ միատիպ են, մի հանգամանք, որը խոսում է նրանց կիրառման նեղ հնարավորությունների մասին։ Ամենայն հավանականությամբ ապակե անոթների մի մասը պատկանել են եկեղեցական սպասքին։ Ապակե անոթների մեջ մեծ խումբ են կազմել ղամպարները (лампады), որոնք կախված են եղել կաթողիկե եկեղեցու ջահերի վրա։ Մետաղե իրերից հետաքրքիր է բրոնզե փոքր ունելին, որը հավանաբար օգտագործվել է ոսկերչական աշխատանքներում։ Նման աշխատանքներում է հավանաբար օգտագործվել 2305/17 ոսկրե գդալիկը։ Պահպանվել է գդալիկի միայն բերանը պոչի փոքր մասով (նկ. 30$_4$)։ Բերանը բավական լայն է, օվալաձև, պոչը կլոր է (բերանի երկարությունը՝ 3,5 սմ)։ Գդալիկը գտնվել է շինության խոշոր հորերից մեկում։ Գտնված դրամները թվագրվում են VIII դ. վերջով և IX դ. առաջին տասնամյակով։

Թաղամասի e-19 քառակուսու արևելյան մասում, անմիջապես պատի մեջ բացվեց մի փոքրիկ հոր, որի միջից դուրս եկան ձևավոր շուրթով մեկ սափոր և կլոր տափակ աման՝ եռանկյունաձև կանթերով։

IX դ. բարձրացված հատակը, որը մոտավորապես 1,70 մ խորության վրա է, պահպանված է միայն հորերի մոտակայքում, որոնք գտնվել են շինության տնտեսական բաժանմունքում։ g և h-19 քառակուսիներում, երբ հեռացվեցին առաջին շերտերը, պարզվեց, որ շինության հատակն այստեղ ավելի ցածր է, քան հարևան բաժիններում։ Այս մասում, անմիջապես հատակի վրա հայտնաբերվեցին ձևավոր բերանով երկու մեծ կժերի բեկորներ (աղ. II, 2), կարմիր ներկով փայլեցված փոքրիկ կճուճ և այլն, որոնք հիմնականում թվագրվում են VIII—IX դարերով։

Շինության հատակից քիչ բարձր երևան են գալիս ջնարակած թասերի և պնակների բեկորներ (աղ. IV, 2)։ Ընդունված տեսակետների համաձայն, այդ տիպի ջնարակումը (եռագույն՝ դարչնագույն, դեղին և կանաչ երանգավորումներով, բծավոր զարդերով) միջնադարյան ջնարակած խեցեղենի նախնական ձևն է, որը մեկ անգամ ևս ապացուցվում է կենտրոնական թաղամասում հայտնաբերված նյութերով։ Պետք է նշել, որ 1964 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված ջնարակած անոթների թիվը շատ սակավ էր և հնարավորու-

[2] Г. А. Ахмедов, Некоторые итоги археологических раскопок городища Орен-Кала в 1959—1963 гг., в сб „Археологические исследования в Азербайджане", Баку, 1965, стр. 136.






Նկ. 1. Նյութեր վաղ միջնադարյան շերտից։

թյուն չընձեռեց որևէ կոնկրետ եզրակացության հանգել նրանց թվագրման վերաբերյալ։ [-19 քառակուսում 1,45 մ. խորության վրա գտնվեց կաթնավուն ցնարակով պատած և կոբալտով արված զարդանախշով մի պնակի բեկոր (աղ. IV, 1), որը միջագետքյան ծագում ունի և հավանաբար IX դ. ներմուծվել է Սամառայից (Միջագետք)։ [-19 քառակուսին պեղելու ժամանակ ստորին շերտերից գտնվեցին քարե երկու ամանների բեկորներ (պահպանվում են Դվինի հնագիտական բազայում)։ Քարե ամանների գյուտը Դվինի վաղ միջնադարյան շերտերում խիստ հետաքրքիր է, քանի որ դրանք Դվինում գրեթե չեն հանդիպում։ Քարե անոթների պատրաստման կուլտուրան Հայաստանում լայն տարածում ուներ ավելի վաղ ժամանակաշրջանում և հայտնաբերվում են ուրարտական և հին հայկական հուշարձաններում (Էրեբունի, Կարմիր բլուր, Արտաշատ և այլն)։ Վաղ միջնադարյան մի քառականթ անոթ գտնվել է Գառնիի IV—V դդ. շերտում (2235/20), որը իր ձևով շատ է մոտենում Դվինում գտնված ամաններին։

Դվինի ամանները պատրաստված են բազալտից և ունեն բավական լավ մշակում։ Դրանք խորն են, մոտ 24,0—26,0 սմ և հաստ պատերով՝ 4,0—5,0 սմ։ Ամաններն ունեն հորիզոնական կանթեր, իսկ մի բեկորի վրա պահպանվել է ծորակը (նկ. 29,9)։

X—XIII դդ. շերտերն այդ հատվածում շատ վատ են պահպանվել, քանի որ մոտ 1,0 մ խորությամբ ամբողջ շերտերը քանդվել և խառնվել է՝ XVII—XVIII դդ. թաղումների հետևանքով։ Մեզ թվում է, որ ընդհանրապես կենտրոնական թաղամասը 893 թ. երկրաշարժից հետո խիստ տուժել է և այլևս չի բնակեցվել կամ շատ թույլ է բնակեցված եղել։ Այդ են վկայում գտնված ուշ շրջանի խիստ սակավաթիվ նյութերը, ճարտարապետական մանրամասների բացակայությունը և շինությունների աղքատությունը։

Նույն թվականի աշնանը մասնակի պեղումներ կատարվեցին g-19 քառակուսում։ Պեղվեց մի փոքրիկ սենյակ, որտեղ դուրս եկավ մեծ քանակությամբ մոխիր, որի մեջ առկա էին վաղ երկաթի ժամանակաշրջանի կավանոթների բեկորներ։ Ըստ երևույթին, միջին դարերում, հողային աշխատանքների ժամանակ, այդ բեկորները վեր են հանվել ստորին շերտերից։ Գտնվեց կավե փոքրիկ հալոցի բեկոր։

**1965 թ. պեղումները.** Շինության հետ կապված մի շարք հարցեր լուծելու նպատակով այս տարի պեղումները կենտրոնացվեցին երկու կետերում՝ հյուսիսային մասում, ուր անկասկած բացվում էր տնտեսական հարկաբաժինը և հարավային մասում, որտեղ բնակելի մասն էր։ Կարևոր է նշել, որ պեղումները լավ արդյունքներ տվեցին։ Հիմնականում պեղվեցին c, d-19 և -20, g-18 և -19, h-19, i-18 և -19 քառակուսիները (նկ. 4)։ Շինության բնակելի հարկաբաժիններից մեկը սյունազարդ սենյակով (աղ. V) բացվեց c և d քառակուսիների շրջանում։ Սենյակի մեջ հավասար հեռավորությունների վրա պահպանվել էին չորս խարիսխներ՝ փայտե սյուների համար (աղ. VI)։ Հարավային կողմում ձգվում է մի պատ, որը կեսից ընդհատվում է և առայժմ որոշակի բան ասել հնարավոր չէ։ Սյան խարիսխների դասավորությունը և նրանց հեռավորությունը միմյանցից ցույց են տալիս, որ այդ մասում շինությունն ունեցել է հազարաշեն ծածկ (գլխատուն)։ Այս փաստը Հայաստանի միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության համար մեծ կարևորություն է ներկայացնում։ Շինության հատակը շարունակվում է նաև այս քառակուսիներում։ Նյութերը վերստին ցույց են տալիս, որ շինությունը VIII դ. է կառուցվել։






Նկ. 2. Հատակագիծ 1964 թ. պեղված հատվածի։




Նկ. 3. 1964 թ. պեղված հատվածի կտրվածքը հյուսիս-հարավ:

Տեղամասի հյուսիսային կողմում շարունակվեցին նախորդ տարվա պեղումները ց-19 քառակուսում: Բացվեց երկու հոր, որոնցից մեկն ուներ 5,0 մ խորություն և 2,0 մ տրամագիծ: Հորը շատ հարուստ էր առարկաներով և իրերով: Դուրս եկան IX դ. հասարակ և ջնարակած խեցեղենի հիանալի նմուշներ (ամբողջական և բեկորներով), ապակե անոթների բազմաթիվ օրինակներ, մի քանի տասնյակի հասնող ձևերով: Ապակե անոթների մի մասը տարբեր գույների ղամպարներ են, նախորդ տարվա նյութերի նման, որոնք պատկանել են կաթողիկե եկեղեցու խոշոր ջահերին: Ապակե ղամպարների տարբեր գույների ներդաշնակությունը լուսային հետաքրքիր էֆեկտ է ստեղծել եկեղեցու ներսում: Ապակե անոթների այս մեծ ժողովածուի գյուտը լայն հնարավորություններ է ընձեռում ուսումնասիրելու միջնադարյան Հայաստանի ապակեգործության վաղ շրջանը: Ապակե թասերի հիանալի օրինակներ հայտնաբերվեցին ց-18 քառակուսու փոքր հորում: Ըստ երևույթին, այն փոքրիկ թաքստոց էր, որի պատերի տակ շարված էր շուրջ 14 թաս, նույբ երանգներով: Անոթները պատրաստված էին գեղարվեստական բարձր ճաշակով:

Մեծ հորում գտնված իրերի մեջ առանձին խումբ են կազմում միջագետքյան ծագում ունեցող կաթնավուն ջնարակով պատած և կապտավուն զարդանախշերով պնակները, որոնք մեկ անգամ ևս ապացուցում են Դվինի առևտրական լայն կապերը մերձավորարևելյան առաջավոր երկրների հետ:

Նույն հորում գտնվել են նաև մետաղե իրեր, այդ թվում՝ ոսկերչի աշխատանքային գործիքներ, շատ նուրբ հատիչներ, կողպեքի մասեր, զարդեր (2326/ 106, 107, աղ. XXXVI, 7,8) և այլն: Հորի հնագիտական նյութը, որը մի քանի հարյուրի է հասնում (բեկորներով), թվագրվում է IX դ. արաբական դրամներով:

Ջնարակած հիանալի թասեր և ապակեղեն հայտնաբերվեց ց-19 քառակուսում բացված փոքր հորից:

Բացված շինության հյուսիսային և արևելյան կից կառույցները և նրանց փոխհարաբերության հարցերը լուծելու նպատակով, որոշ աշխատանքներ տարվեցին ց-18, i-18 և -19 քառակուսիներում: Այստեղ դեռ նախորդ տարիների պեղումներից բացվել էին կրաշաղախով, հասարակ շարվածքով տարբեր պատերի մնացորդներ: Անհրաժեշտ էր պարզել, թե այդ պատերը որևէ կապ ունե՞ն արքայոք շինության հետ: ց և i-18 քառակուսիներում բացվեցին նրանց մի մասը (աղ. VII, 2), որոնք դեպի արևելք են ձգվում, սակայն ընդհատվում են. ըստ երևույթին, այդ պատերը հետագայում քանդվել են, որը և անորոշ է դարձնում ընդհանուր կապը: i-18 քառակուսում բացվեց հիանալի հատակ բնակելի սենյակի մեջ: Հատակին գտնվեցին փորագիր հաստ ապակե բաժակի բեկորներ, ինչպես նաև եգիպտական ծագում ունեցող շողյուն խեցեղեն թասի շրթնամաս:

Նյութերը ցույց են տալիս, որ այս մասում ևս VIII—IX դդ. աշխարհիկ նշանակություն ունեցող շինություն է եղել: Շինության VIII դ. թվագրելը հաստատվում է նաև պատերի եղևնաձև շարվածքով, ինչպես նաև արաբական մի քանի պղնձե դրամների առկայությամբ:

Պեղվող հատվածի c-19 քառակուսում բացվեց լայն տրամագծով ջրատար խողովակների շարք (տեղում պահպանվել էին երեքը): Խողովակները ձգվում էին դեպի հարավ, c-20 քառակուսին, որտեղ ուրվագծվում էին ինչ-որ հորի մնացորդներ (աղ. VIII): Հորի շրջապատը մաքրելուց և բերանը բացելուց հե-



Նկ. 4. Հատակագիծ և կտրվածք 1964—1965 թթ. պեղված հատվածի։

տը պարզվեց հետևյալ պատկերը։ Հորի բերանին, ուղղահայաց դիրքով, դրված էր դեպի ներս իջնող կավե խողովակ, որի բերանը ծածկված էր թրծած աղյուսով։ Հորը 2,7 մ խորությամբ դատարկ էր։ Բերանի շուրջը, ներսից մոտ 0,7 մ խորությամբ շարված էր հաղարաշենի ձևով մանր թրծած աղյուսներ։ Հորը պեղելու ժամանակ հայտնաբերվեցին XI—XII դդ. մի քանի հարթ և ոլորուն կապույտ գույնի ապակե ապարանջաններ։ Հորի բերանին հավասար բացվեց կավե պնդացրած հատակ, որի վրայից գտնված նյութերը նույնպես թվագրվում են XI—XII դդ., հատկապես բնորոշ է ջնարակած բազմագույն խեցեղենը։ c-19 քառակուսու հարավ-արևելյան անկյունում գտնվեց մի տուֆ քար, որի կենտրոնում խորը փորվածք էր։ Բացված խողովակներով հորը, տուֆ քարը հավանաբար պատկանել են ինչ-որ արտադրական կառույցի։ Կարևոր է նշել, որ խողովակների մեջ կար մանրահատիկ կավի նստվածք, որը հավանաբար առաջացել էր կավակոխության ժամանակ հոսող ջրերից։ Ուշ շրջանի նյութերը խիստ ավերվել են հետագա թաղումների հետևանքով։

Շերտագրական որոշ հարցեր պարզելու նպատակով g-18 և -19 քառակուսիներում խորացանք մոտ 0,5 մ։ Մեզ համար անսպասելի[3] այդ հատվածում բացվեց վաղ երկաթի ժամանակաշրջանի շերտ, նույն դարաշրջանի սև և գորշ փայլեցված խեցեղեն նյութերով։ g-19 քառակուսում բացվեցին սև փայլեցված կարասներ։ Կարասներից մեկի մեջ գտնվեց մի երկարավուն անոթ (նկ. 1,з), որն ակներևաբար գինի վերցնելու համար է ծառայել։ Կարասներն իրենց պատրաստման եղանակով և ձևով կրկնում են Դվինի միջնաբերդում բացված նմանօրինակ նմուշներին, այն տարբերությամբ, որ նրանց իրանների վրա բացակայում են ուռուցիկ զարդանախշերը։

**1966 թ. պեղումները.** Պեղման աշխատանքները տարվում էին c, d-21, f, ջ, h, i-20 և h-18 քառակուսիներում։ Նպատակն էր պարզել շինության արևմտյան և հյուսիսային պատերի առկայության հարցը։ Նշենք, որ արևմտյան մասում պատերի հիմնապատերի հետքերն առայժմ բացակայում են, իսկ հյուսիսային մասում պատերը խիստ քայքայված են և լրիվ պատկեր կազմելը անհնար է։

Տեղամասի c և d-21 քառակուսիները պեղվեցին շինության մակարդակին հավասար։ Այս հատվածում ևս շարունակվում էր շինության կավածեփ հատակը։ Հատակին, իր տեղում բացվեց մի մեծ դեղնավուն կճուճ, լայն բերանով և գնդաձև իրանով։ Կճուճի բերանին դրված էր մարմարե հարթ, լավ հղկված տախտակի բեկոր։ Նույն մասում գտնվեցին քարե փոքրիկ խաչ (նկ. 30,ա), փորագիր ապակե անոթների բեկորներ, որոնք թվագրվում են VII—VIII դդ.։ h-18 քառակուսում նույն խորությունից գտնվեցին եղևնազարդ վերադիր գոտիով կարասի բեկորներ, որոնք բնորոշ են վաղ ֆեոդալական ժամանակաշրջանին։

h-19 քառակուսում բացվեց մի հոր, որն անմիջապես շինության հյուսիսային (տնտեսական) հատվածի արևելյան պատի տակ էր գտնվում։ Հորի միջից գտնված իրերը (ջնարակած բազմագույն և միագույն անոթներ, ապակե թասերի բեկորներ, եռաթև նետասլաքի բեկոր և այլն) թվագրվում են IX դ., բայց մի փոքր ավելի վաղ, քան շինության մեծ հորի նյութերը։

[3] Թվում էր, թե կենտրոնական թաղամասի այդ հատվածում ի հայտ կգան V—VII դդ. շինությունների հետքեր և կգտնվեն վաղ միջնադարյան նյութեր։ Ըստ երևույթին, կաթողիկե եկեղեցին կառուցելուց հետո այդ հատվածը հրապարակի դեր է կատարել։

Պեղավայրի f, g, h, i-20 քառակուսիների շրջանում (աղ. IX), որը բացվեց 2,0 մ խորությամբ, ոչ մի էական հարց չպարզվեց՝ կապված շինության հետ։ Միայն կենտրոնական մասում բացվեց հում կավե աղյուսներով շարված հաստ պատի մնացորդներ, քայքայված վիճակում։ f-20 քառակուսում 1,80 մ խորության վրա գտնվեց մի տուֆակերտ, ճոխ հարդարված խոյակ, որը թվագրվում է V—VI դդ. (նկ. $6_2$)։

Խոյակի բարձրությունը մոտ 42 սմ է։ Այն երեք կողմից ունի հիանալի քանդակներ, որոնք բնորոշ են վաղ միջնադարյան քանդակագործությանը և բազմիցս հանդիպում են կոթողների և ճարտարապետական հուշարձանների վրա։ Խոյակի վերին մասը խիստ քայքայված է։ Այն հավանաբար ունեցել է ատամնաշար, որը հանդիպում է նույնատիպ այլ խոյակների վրա։ Մի կողմից օղակի մեջ պատկերված է հավասարաթև խաչ, վերցված ոճավորված տերևների մեջ։ Երկրորդ երեսին արված է հովհարաձև զարդ, իսկ հաջորդում՝ սիմետրիկ քանդակված է շատ տարածված լոտոսը, ոճավորված տերևների մեջ։ Չորրորդ կողմում նկատվում են ինչ-որ զարդերի հետքեր, բայց խիստ մաշված են և չեն վերականգնվում։ Խոյակի կենտրոնով, երկու կողմից անցնում են խորը ակոսներ։ Նույն տիպի խոյակ հայտնաբերվել է Ջրվեժի գերեզմանատանը, որը դրված է եղել թևավոր խաչով աստիճանավոր կոթողի սյան վրա[4]։ Կաթողիկե եկեղեցու և կաթողիկոսարանի մոտ նկատվում են քառակուսի և ուղղանկյուն հատակագծով հիմքերի հետքեր, որոնք շարված են լավ մշակված քարերով։ Թևավոր խաչերի բեկորների մեծ մասը գտնվել են դրանց շրջապատում։ Հավանաբար Դվինում թևավոր խաչերով կոթողների թիվը շատ է եղել, քանի որ գտնվել են կոթողներին պատկանող սյուների, խարիսխների և խոյակների բազմաթիվ օրինակներ[5]։

Արտադրության միջոցների ուսումնասիրության համար կարևոր է երկփեղկ կաղապարի մի մասի գյուտը, որը երկար օգտագործելուց խիստ դեֆորմացիայի է ենթարկվել (նկ. $29_2$)։ Կաղապարի մեջ հավանաբար ձուլել են աշխատանքային ինչ-որ գործիք։ Նկատվում է բերանի մի մասը, իսկ մի կողմում արված է թմբիկ, հավանաբար կոթառի անցքի համար (2450/68, երկարությունը՝ մոտ 15,0 սմ, լայնությունը՝ 11,0 սմ)։

Ինչպես նախորդ տարիներին, 1966 թ. ևս X—XIII դդ. շերտը խիստ աղքատիկ է, չկան շինության հետքեր, իսկ նյութերը սակավ են։

**1967 թ. պեղումները.** Պեղումները հետաքրքիր նյութեր տվեցին շինության հարավային հատվածի վերաբերյալ, շինության կառուցման թվագրության ճշտման կապակցությամբ, ինչպես նաև Դվինի կենտրոնական թաղամասի նախաքրիստոնեական շրջանի պատմության, մասնավորապես պաշտամունքին վերաբերող հարցերի պարզաբանման վերաբերյալ։ Պեղումները հիմնականում կենտրոնացված էին շինության հարավային և արևմտյան հատվածում e-20 և -21, b-19 և -20, a-19 քառակուսիներում (աղ. X)։

Դեռևս 1965 թ. բացված հարավային պատի մեջ երևան եկավ մուտքը (աղ. XI), որը կապում էր երկու սենյակներ։ Շինության արևելյան պատը ձգվում էր հարավ՝ a,—a-19 քառակուսիների ուղղությամբ։ Ըստ երևույթին, այստեղ մենք գործ ունենք տարբեր բաժանմունքներով մեծ կոմպլեքսի հետ։

---

[4] Տե՛ս Ն. Մ. Տոկարսկու վերականգնումը, **Н. М. Токарский,** Джрвеж, II, 1964 Вохджаберд, результаты раскопок 1958—1962 гг., Ереван, 1964, стр. 39—44, рис. 16, 23

[5] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 146—152։



Հետաքրքիր նյութեր տվեցին e-20 և -21 քառակուսիների պեղումները։ Այստեղ արևելքից արևմուտք ձգվում էր մի նեղ առվակ, որի եզրերը շարված էին մանր քարերով։ Առվակը ծածկված էր վառ կարմիր, թրծված հաստ աղյուսներով։ Հավանաբար այն արված էր տանիքից թափվող անձրևաջրերը հեռացնելու համար։ e-22 քառակուսու մեջ, ուր ուղղված է առվակը, նկատվում են հորերի մնացորդներ։ Պեղվող հատվածում եղել է սենյակ, նկատվում են խիստ քայքայված հիմնապատեր, իսկ e-21 քառակուսու արևելյան մասում ընկած էր մեծ չափերով մի խարիսխ, որն իր հարդարանքով հիշեցնում էր Դվինի V—VI դդ. թվագրվող խարիսխները։

Շինությունը VIII դ. թվագրվելը այլևս ոչ մի կասկած չի հարուցում։ Այդ են վկայում հատակին գտնված հնագիտական բնորոշ իրերն ու առարկաները։ b-20 քառակուսում, անմիջապես նոր բացված մուտքի մոտ, գտնվեց երկաթե եռաթև նետասլաք, որն իր լավ պահպանված վիճակով Դվինում միակն է։ Ինչպես հայտնի է, նետասլաքների այս խմբի թվագրությունը Հայաստանում և Անդրկովկասում չի անցնում մ. թ. VIII դարից[6]։ a-19 քառակուսում 2,0 մ խորությունից դուրս են գալիս ռելիեֆ եղևնաձև զարդագոտիով խոշոր կարասի բեկորներ, որոնք թվագրվում են VI—VIII դդ.[7], b-20 քառակուսում, անմիջապես եռաթև նետասլաքի մոտ, հայտնաբերվեց բարձր հենակով, տանձաձև իրանով մի անոթ, որն ունի հարուստ զարդանախշեր, բնորոշ վաղ միջնադարյան խեցեղենին։

IX դ. նյութերը գերազանցապես դուրս են գալիս հորերից։ Հորերից մեկը e-20 քառակուսում, նորից հատած կոնի տեսք ուներ և բավականին մեծ չափեր։ Հորից գտնվեցին երկու ապակե երկար վզով հիանալի տափաշշեր։ b-20 քառակուսում բացվեց երկու հոր, որոնցից մեկը տվեց ապակե անոթների հիանալի նմուշներ։ Անոթներից մեկը բարակ պատերով թաս է, դարչնագույն ներկով արված հարուստ զարդանախշերով։ Թասի ծալված պսակի տակով շուրջանակի նշմարվում է արաբատառ մի արձանագրություն։ Նկարազարդ այս անոթը եզակի նմուշ է և պատմա-հնագիտական մեծ արժեք է ներկայացնում։ Ապակիների մեջ բավական մեծ խումբ են կազմում կանելյուրներով թասերը, ղամպարները, որոնք հայտնի են նաև նախորդ տարիների պեղումներից։ Գտնվել են նաև ապակե տափակ թասերի մի քանի օրինակներ, որոնք մեր կողմից դիտվում են որպես ջահերի ստորին մեծ ղամպարներ։ Նույն տեղում հայտնաբերվել են միագույն և բազմագույն ջնարակած և հասարակ խեցեղենի բազմաթիվ բեկորներ։

Զափազանց կարևոր է կենտրոնական-կրոնական թաղամասում հեթանոսական մեհյանի ռեհասեղանի կավե պատկերազարդ տախտակի գյուտը։ Այդօրինակ տախտակներ նախորդ տարիների պեղումներից հայտնի էին միայն Դվինի միջնաբերդում[8]։

Ինչպես նշեցինք, 1965 թ. g-18 և g-19 քառակուսիներում երևան էր եկել

---

[6] Ա. Ա. Քալանթարյան, Զենքերը V—VIII դդ., ՊԲՀ, 1965, № 4, նույնի, Материальная культура Двина IV—VIII вв., автореферат кандидатской диссертации, Ереван, 1966

[7] Գ. Մ. Տիրացյան, Հացավան ամրոցի պեղումները 1963 թ., «Տեղեկագիր» հաս. գիտ., 1964, № 10։

[8] Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին, ՊԲՀ, 1966, № 2 (33), էջ 52—57։





Նկ. 5. 1. Հատակագիծ —19 քառակուսում բացված շինության հետքերի։ 2. Հատակագիծ շինության հարավային պատի և 19—20 քառակուսում բացված սենյակի։

վաղ երկաթի ժամանակաշրջանի նյութեր։ b-20 քառակուսու հորերը պեղելիս պարզվեց, որ ստորին շերտը մոտ 1,5 մ հաստությամբ հագեցված է այդ նյութերով։ Դուրս եկան սև փայլեցրած կավե անոթների բեկորներ, բնորոշ փորագիր զարդերով։ Հորի միջից դուրս եկավ նաև պատկերազարդ տախտակի մի բեկոր։ Նախնական զննությունը ցույց տվեց, որ IX դ. հորը խորացնելու ժամանակ ծակել և իջել են ատրուշանի կենտրոնով։ Տեղում մոտ 4.0 մ խո-



րության վրա պահպանված էր կավե հիմքը, որի վրա հենվում էր տախտակը, քարերի կլոր շարվածքը, որի մեջ այրվում էր կրակը։ Կավե պաշտամունքային կուռքերի գյուտը մեծ նշանակություն է ստանում և վերստին հաստատում է Դվինի պաշտամունքային խոշոր կենտրոն լինելը։




1



2

Նկ. 6. 1. Թևավոր խաչերի քանդակազարդ բեկորներ։ 2. Հուշասյան խոյակի տեսքը և կտրվածքները։

**1968 թ. պեղումները.** *Աշխատանքները սկսվեցին* b-21, a-20 և -21,-a-19 *քառակուսիներում։ Հիմնականում նպատակն էր պարզել շինության հարավային սենյակի սահմանագծերը և գտնել շինության արևմտյան պատը։* a և b-21 *քառակուսիների հարավ-արևմտյան անկյունում բացվեց 1,5 մ բարձրությամբ կավե պատ, որի հիմքում ընկած էր փուլ եկած եկեղեցու բեկորներ։*

*Որոշ հետախուզական աշխատանքներ կատարվեցին* j-19 *քառակուսում (նկ.* $5_1$*)։ Այստեղ ուրվագծվեց ինչ-որ շինության պատի հետքեր, որոնք գընում էին դեպի հյուսիս, կաթողիկոսարանին զուգահեռ։ Բացվեց շինության պատի հարավ-արևմտյան անկյունը ներսի մասում։ Քարերը լավ մշակված են, իսկ պատի հաստությունը մոտ 1,0 մ է։ Այդ հատվածում գտնվեցին երկու կավանոթներ, բուսական և երկրաչափական զարդերով, ապակե անոթների բեկորներ, խաչքարերի քանդակազարդ բեկորներ (նկ.* $6_1$*), ինչպես նաև մեծ կարասի մնացորդներ։*

**1969 թ. պեղումները.** *Պեղումները շարունակվեցին հարավային մասում, որտեղ սկսվեցին նշմարվել հաստ պատի հետքեր։ Բացվեց նաև 1965 թ.* c-20 *քառակուսու աղյուսաշեն բերանով հորի նման մի այլ օրինակ, որը նույնպես դատարկ էր։ Հյուսիսային թևում շինության հետքեր չեն երևում։ Բացվեց ջրատարի մի հատված։*

**1970 թ. պեղումները.** *Աշխատանքները նորից կենտրոնացված էին հարավային և հյուսիսային հատվածներում (աղ. XII)։ Հարավային մասում* a-19 *և -20 քառակուսիներում բացվեց մոտ 3,0 մ հաստությամբ պարսպապատ, որին արտաքին կողմից հենված էին աղյուսաշեն պատեր (աղ. XIII)։*

*Այս պարիսպը և շինությունները կառուցվել են եկեղեցու փլուզումից հետո, քանի որ նրա հիմքերը շարված էին եկեղեցու կրաշաղախ մեծ բեկորներով։ Գտնված նյութերը սակավաթիվ են, հիմնականում ապակի և խեցեղեն։*

*Պեղավայրի հարավային հատվածի սենյակներից մեկում, ստորին շերտից գտնվեց մուգ կապտավուն բազալտից պատրաստված մի թասի կես (նկ.* $25_7$*)։ Այն ունի կլոր հատակ և ուղղահայաց կարճ պատեր։ Թասի վրայով անցնում են զարդագոտիներ, որոնք կատարված են մեծ հմտությամբ։ Վերին գոտին կազմված է կենտրոնում կետով շրջագծերից։ Ստորին գոտու զարդը կեռմանաձև միմյանց կցված ծայրերով լայն տերևներ են։ Գոտիները միմյանցից բաժանված են շուրջանակի նուրբ ակոսներով։ Թասի կենտրոնով ուղղահայաց իջնում են շրջագծերով արված միջնորմներ, որոնք հորիզոնական զարդը բաժանում են երկու հատվածի։ Անոթն իր մշակումով և զարդով կատարյալ է։ Այն իր վրա է կրում քարե անոթների պատրաստման հելլենիստական և անտիկ արվեստի ազդեցությունը, մի հանգամանք, որը նկատվում է վաղ միջնադարյան արհեստագործական մի շարք ճյուղերի վրա (ապակի, զենք, զարդ և այլն)։*

*Կենտրոնական թաղամասում հայտնաբերված քարե ամանների մեջ իր ուրույն տեղն է գրավում մոխրագույն մարմարից պատրաստված տափակ կլոր հատակով, ուղղահայաց պատերով անոթը (բեկոր), որն ունի անթերի մշակում։ Այն իր ձևով նույնանման է նույն թաղամասում գտնված կավե, ապակե անոթներին, որոնք թվագրվում են VIII—IX դդ. (նկ.* $29_6$*)։*

*Նույն վայրից գտնվել է նաև տափակ, լայն պոչով գդալիկ, որն իր վրա ունի շեղանկյուն զարդեր (նկ.* $30_5$*)։ Պոչի վերին ծայրը և բերանի երկու կողմերը զարդարուն են։ Բերանը փոքր է և քիչ երկար (երկարությունը՝ 7,0 սմ, պոչի լայնությունը՝ 1,0 սմ, բերանի երկարությունը՝ 1,0 սմ)։ Հյուսիսային մասում բացվեց արևելքից-արևմուտք ձգված մոտ 2,0 մ լայնությամբ մի պատ, որի շարվածքի մեջ հայտնաբերվեց անտիկ շրջանի քարե արձանների երեք գլուխ, որոնցից մեկը՝ կիսամշակ։*



## II. ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*1964 թ. վերսկսված կենտրոնական թաղամասի պեղումների հիմնական նպատակն էր հստակություն մտցնել Դվինի վաղ միջնադարյան (IV—VIII դդ.) շերտագրության մեջ։ Որպեսզի պատկերը քիչ թե շատ ամբողջական ստացվեր, պեղումների վայր ընտրվեց մինչ այդ բոլորովին չպեղված մի հատված՝ կաթողիկե եկեղեցուց արևմուտք (մոտ 15,0 մ)։ Պեղավայրը ձգվում էր հյուսիսից-հարավ և բաժանված էր 50 քառակուսու 5×5 մ,—*a+p*, քառակուսիները—19-21 գծով։*

*Առաջին տարվա պեղումները ցույց տվեցին, որ այդ հատվածում վաղ միջնադարյան կառույցները բացակայում են և այդ ժամանակաշրջանի նյութերը խիստ սակավ են։ Պեղավայրը, որն անմիջապես հարում է եկեղեցուն, հավանաբար IV—VII դդ. եղել է եկեղեցու շրջակա հրապարակի մի մասը, որտեղ թաղվել են հոգևորական և աշխարհիկ անվանի գործիչներ։ Նախորդ տարիներին եկեղեցու շրջակայքում գտնվել են մեծ քանակությամբ թևավոր խաչերի բեկորներ, տապանաքարեր։ 1964—1970 թթ. պեղումների ընթացքում բացվել են գերեզմաններ, որոնք փորված են եղել անմիջապես հրապարակում փռված խճաքարերի տակ։ Մյուս կողմից, կան առանձին մանրամասներ, որոնք վկայում են, որ եկեղեցու շրջապատը եղել է ազատ։ Եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց նկատվում է երկշարք սալահատակ՝ 10,0 մ երկարությամբ։*

*VIII դ. վերջում այդ հատվածում կառուցվել է մի մեծ աշխարհիկ շինություն (նկարագրությանը մանրամասն կանդրադառնանք հետագայում)։ Պեղումների հետևանքով առայժմ բացված են հիմնականում IX դ. շերտերը, գետնի մակերևույթից 2,0—2,20 մ խորության վրա։ Միայն* g-18 *և* h-19 *քառակուսիներում հետախուզական նկատառումներով խորացվել է մոտ 2,7 մ, ուր բացվել են ավելի վաղ շրջանի շերտեր (վաղ երկաթի ժամանակաշրջանի)։ Պեղումների ընթացքում բացված միջնադարյան հորերի ուղղահայաց կտրվածքների նախնական քննությունը ցույց է տալիս, որ մայր հողը խիճ է, խառնված ավազահողի հետ և գտնվում է գետնի մակերեսից մոտավորապես 4,0—5,0 մ խորության վրա։*

*Քանի որ այդ տեղամասում գտնվող նյութերը գերազանցապես VIII—IX դդ. են, մենք մանրամասն վերլուծության կենթարկենք այդ շերտերը ողջ պեղվող տարածության վրա։ Մյուս կողմից, պեղվող հատվածի նախնական շերտագրությունը պարզելու համար, հարկ ենք համարում շատ համառոտակի անդրադառնալ ավելի վաղ շերտերի քննությանը, որքան այդ հնարավոր է բացված քառակուսիների հատվածում։ Թեև XI—XIII դդ. շերտերը վատ են պահպանված, սակայն կաշխատենք ընդգծել նաև դրանց սահմանները։*

Վաղ շերտերը սկսվում են մակերեսից 2,20—2,50 մ խորությունից մինչև 4,0—5,0 մ, կապված տեղանքի հետ։ Առայժմ ամենախոր տեղը Ե-20 քառակուսում է, որտեղ միջնադարյան հորը պեղելու ժամանակ բացվեց այդ շերտը ուղղահայաց կտրվածքով։ Ց, Ի-18 և -19 քառակուսիններում վաղ երկաթի շերտը սկսվում է 2,20 մ խորությունից, անմիջապես VIII—IX դդ. շերտերի տակ։ Հարկ է նշել, որ առայժմ այդ շերտերում շինության հետքեր չեն նկատվում, սակայն Ի-19 քառակուսում, ելնելով նյութերի առկայությունից, եղել է մառանային մաս։ Այդ հատվածում 2,60 մ խորության վրա հայտնաբերվեցին մի գծի վրա դրված երկու մեծադիր սև փայլեցրած կարասի բեկորներ, երրորդ կարասը հավանաբար գտնվել է Ց-19 քառակուսում բացված միջնադարյան մեծ հորի տեղում, քանի որ հորը դատարկելու ժամանակ պատի մեջ գտնվեցին այդ կարասներից մեկի բեկորները։

Վաղ երկաթի ժամանակաշրջանի շերտերը Դվինում, որոնք թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ. բավական նյութեր են տալիս։ Միջնաբերդում հայտնի են նախորդ տարիներին գտնված կավե տարբեր անոթները և առարկաները, որոնց մի մասը անշուշտ պաշտամունքային նշանակություն ունեն։ Գտնվել են մետաղե իրեր, զարդեր և այլն, որոնք վերստին հաստատում են այդ նյութերի թվագրությունը։

Կենտրոնական թաղամասում այդ շերտերը հարուստ են ինչպես հնագիտական նյութերով (գերազանցապես կավանոթների բեկորներ), այնպես և կենդանական մնացորդներով։ Շերտն իրենից ներկայացնում է սևահող, որով լրիվ տարբերվում է միջնադարյան շերտերից, որոնք կավահող են։ Տեղ-տեղ նկատվում են հրդեհի հետքեր, դուրս են գալիս մոխրաշերտեր։

Այդ շերտում գտնված նյութերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում կավե տախտակի բեկորը կուռքի պատկերով (նկ. $1_1$), ճիշտ նման այն օրինակին, որը գտնվել է Դվինի միջնաբերդում և պահպանվում է տեղում։ Բեկորի վրա պահպանվել է աստվածությունների մեկի պատկերը, որը խիստ ոճավորված խոյի դեմք է արտահայտում։ Ամբողջ ստորին մասը փորագիր ալիքավոր զարդ է, որը, հավանաբար, երկնակամարն է պատկերում։ Միջնաբերդում պահպանված օրինակի վրա երկնակամարը շատ ցայտուն է արտահայտված, որի վրա պատկերված են տարբեր լուսատուներ, իսկ ստորին մասում տախտակի ողջ լայնությամբ փռված է գալարվող օձը։ Ամենայն հավանականությամբ, ինչպես նշեցինք վերևում, կենտրոնական թաղամասում բացվում է մեհյան՝ պահպանված զոհարանով։ Միջնաբերդի նման կառուցվածքների պես, այստեղ ևս պահպանվել է կավե պնդացած հենարանը, որի վրա ամրացված է եղել պատկերազարդ տախտակը։ Տախտակի առջև, մանր գետաքարերով կիսաշրջանաձև շարված փոքր տարածություն է, որը լցված էր մոխրով և մանր ածուխներով։ Թվում է, որ այն զոհարան է, որի առջև մշտապես վառ պահպանվել է կրակը։ Տախտակի բեկորի հետ միասին նույն տեղից դուրս են եկել սև փայլեցրած անոթների զարդարուն բեկորներ (նկ.1, 2, 4—6)։ Անոթների մի մասն ունի փորագիր երկրաչափական զարդեր, որոնց մեջ նկատվում են կարմիր ներկի հետքեր։

Կարևոր է նշել, որ կենտրոնական թաղամասի այս պեղավայրում գտնվում են նաև III հազարամյակի խեցեղենի առանձին բեկորներ։ Միջնաբերդում այդ շերտի գոյությունը անկասկած է։ Առայժմ դժվար է ժխտել այդ շերտի գոյության փաստը կենտրոնական թաղամասում, քանի որ հետագա



պեղումները ստորին հորիզոններում կարող են որոշակի նյութեր տալ շերտի առկայության փաստը լուծելու ուղղությամբ։

Նույն պեղավայրում պատահական գտնվել են նաև հելլենիստական շրջանի (մ. թ. ա. III—մ. թ. I դդ.) գունազարդ խեցեղենի մի քանի բեկոր և ծածկի քարե սալիկի կեսը (նման Գառնիի հեթանոսական տաճարի քարե սալիկներին)։ Բացառված չէ, որ կենտրոնական թաղամասում եղել են այդ շրջանի շինություններ։ Հատկապես հետաքրքիր է այն փաստը, որ կաթողիկեի տեղում եղել է հեթանոսական տաճար, որը քրիստոնեությունը ընդունելուց հետո վերածել են եկեղեցու։ Վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր հայտնի են Դվինի նախորդ տարիների պեղումներից։ 1946—1950 թթ. կաթողիկոսարանի և միանավ բազիլիկ եկեղեցու շրջանում հայտնաբերվել են հելլենիստական շրջանի կարասային թաղումներ։ Միջնաբերդի ստորին շերտերը տալիս են անտիկ շրջանի բավական հարուստ նյութեր, որոնք խիստ հետաքրքիր են (հատկապես գունազարդ խեցեղենը) անտիկ շրջանի նյութական մշակույթի առանձին հարցերի քննության ուղղությամբ։

Ինչո՞վ կարելի է բացատրել հելլենիստական և վաղ միջնադարյան նյութերի սակավությունը և կառույցների բացակայությունը պեղվող հատվածում։ Ուսումնասիրողների մի խումբ (Կ. Ղաֆադարյան, Վ. Հարությունյան և ուրիշներ) իրավացիորեն նշում են, որ Դվինի եռանավ բազիլիկը կառուցվել է ավերված հեթանոսական սրբավայրի տեղում։ Այդ մասին են վկայում թեական ձևով նաև պատմական աղբյուրները և հնագիտական նյութերը։ Պարզ է, որ հեթանոսական տաճարը, իսկ հետագայում քրիստոնեական եկեղեցին (առավել կաթողիկեն) պետք է ունենար իրեն հարող հրապարակը[1]։

Միայն այս ձևով կարելի է բացատրել վաղ հայկական և վաղ միջնադարյան շինությունների բացակայությունը եկեղեցուն հարող տարածության վրա և, ընդհակառակը, թևավոր խաչերի, տապանաքարերի և այլն հետքերի գյուտերը։ Հետագայում՝ VIII—IX դդ. անտեսվել է այդ հրապարակի անհրաժեշտությունը (կարող են լինել նաև մեզ համար անհայտ պատճառներ) և կառուցվել են շինություններ անմիջապես եկեղեցուն կից։ Այդ շինությունները կարող են կառուցվել միայն սկսած VII դ. II կեսից, երբ կաթողիկոսարանը Դվինից տեղափոխվում է Նորակերտ Զվարթնոց և Դվինի գլխավոր եկեղեցին այլևս այն դերը չէր կատարում, ինչ հոգևոր կենտրոնի ժամանակ։

Պեղվող հատվածում VIII—IX դդ. շերտերը սկսվում են գետնի մակերեսից 1,50—1,60 մ մինչև 2,0—2,20 մ խորությունը (նկ. 2—4)։ Շերտը գերազանցապես բաց-դեղնավուն կավահող է՝ հագեցված խեցանոթների և ապակու բեկորներով, օրգանական մնացորդներով։ Մետաղ համեմատաբար քիչ է գտնվում։ Տեղ-տեղ անցնում է մոխրաշերտ և մանր խճավազ։ Այս շերտում

---

[1] 1972 թ. կենտրոնական թաղամասում, կաթողիկե եկեղեցուց հարավ-արևմուտք 3,5 մ խորության վրա բացվեց մի մեծ խարիսխ և պնդացրած կավե լավ հատակ, մոտ 50 քմ տարածությամբ։ Հավանաբար, այստեղ բացվում են ինչ-որ մոնումենտալ շինության հետքեր։ Կասկածից վեր է, որ այդ շինությունը ունեցել է սյունազարդ մեծ դահլիճ։ Տեղում շերտագրական կտրվածքների զննումը հետաքրքիր նյութեր տվեց։ Այդ շինությունը գտնվում է անմիջապես VII դ. սկզբում կաթողիկե եկեղեցու վերակառուցման ժամանակ օգտագործված տուֆ քարերի տաշվածքից առաջացած թափոնի տակ և թվագրվում է V—VI դդ.։ Մեր շերտագրության օգտին են խոսում նաև գտնված խեցեղեն անոթների բեկորները, եռաթև նետասլաքները և հրդեհված ապակիների բեկորները։ Շինության հետագա պեղումները խոստումնալից նյութեր կտան Դվինի վաղ միջնադարյան մշակույթի վերաբերյալ։

բացված ճարտարապետական մանրամասները վերաբերում են մեծ շինու-թյանը։ Քննենք դրանք առանձին-առանձին։

Շինության ողջ ներսի տարածությունը, հատկապես նրա հարավային բնակելի թևը a-e -19-21 քառակուսիներում ունի կավածեփ հատակ, որը բաց-վել է 1,90 մ խորության վրա։ Հատակի հաստությունը մոտ 10—15 սմ է, նրան հաջորդում է 15—20 սմ հաստությամբ մի շերտ, որը հագեցված է շի-նության վրա դրված քարերի տաշված թափոններով։ Այդ շերտը շարունակ-վում է նաև շինության հյուսիսային թևում, տնտեսական բաժիններում։ Այս-տեղ արդեն հատակը խիստ քայքայված է ուշ շրջանի թաղումների հետևան-քով։ -19 գծին զուգահեռ -a-h գծով անցնում է շինության արևելյան քարա-կերտ պատը 0,8—0,9 մ լայնությամբ։ Տեղ-տեղ պատն ունի եղևնաձև շար-վածք g-19 և h-19 քառակուսիների հատվածում (աղ. XIV, 2)։ Եղևնաձև հա-տարակ շարվածքը Դվինում մեզ չի հանդիպում ավելի ուշ կառուցված շինու-թյունների վրա։ Նույն տիպի շարվածք հայտնի է Հացավան ամրոցի վերին շերտերի ճարտարապետական կոմպլեքսներում, որոնք թվագրվում են VI—VII դդ.[2]։ Ընդհանրապես եղևնաձև շարվածքը բյուզանդական շինարվեստում բնորոշ է եղել վաղ միջնադարում, մի հանգամանք, որն ընդունելի է նաև հայ-կական հուշարձանների համար։

Շինության հարավային մասում՝ c-19 քառակուսու հատվածում, հատա-կից քիչ ցածր նկատվում են ավելի հին կառույցի հիմնապատեր. նույն հետ-քերը նկատվում են նաև d-19 և -20 քառակուսիներում։ Դժվար է ասել, թե դրանք վաղ միջնադարյան կառույցներ են, քանի որ ողջ պեղվող տարածու-թյան վրա դրանք միակն են։ Ըստ երևույթին, այդ մասերում լրացուցիչ շար-վածք է եղել, կամ հավելյալ մասեր՝ բնակելի բաժնում։

Շինության բնակելի բաժինն ունեցել է երկու մուտք, մեկն արևելյան մասում, որն անմիջապես կապել է բակի հետ, իսկ մյուսը հարավային մա-սում, որը սյունազարդ սրահը կապել է կից սենյակի հետ (աղ. XIV, 1)։ 1967 թ. այդ սենյակում հայտնաբերվեցին պատի ծեփի մնացորդներ, որոնք ներկված էին բաց մանուշակագույն, որպես ընդհանուր ֆոն և ունեին սև ներ-կով արված լայն գծեր։ Նույն տեղում, անմիջապես դրան մոտ, գտնվեց եռաթև նետասլաք և գետնի մեջ թաղված բարձր հենակով, լայն իրանով և բե-րանով երեք կանթանի մի զարդարուն անոթ, որն, անշուշտ, VIII—IX դդ. է վերաբերում իր ձևով և զարդանախշերով (անոթների նկարագրությունը տե՛ս համապատասխան գլխում)։

Բնակելի շինության արևմտյան պատը շարված է եղել հում աղյուսներով։ Այդ պատի խիստ քայքայված մնացորդները նշմարվում էին հատված առ հատված b, c, d-20 քառակուսիներում։ Շինության կենտրոնական մասում բացվել է չորս սյուներով մի սրահ (աղ. XV), որը իր ձևով հիշեցնում է հայ-կական ժողովրդական տունը. (գլխատուն)։ Պետք է նշել, որ սյուների նման դասավորությունը (հեռավորությունը միմյանցից 7×7 մ վրա) լայն տարա-ծում ուներ Արարատյան դաշտի XIX դ. նույնատիպ շինություններում։ Ազգա-գրական նյութերը ցույց են տալիս, որ նման շինություններում գլխավոր մուտքը պարտադիր արևելյան կամ հարավ-արևելյան կողմից է եղել, իսկ ճակատային պատը՝ արևելյան կողմից և խուլ փակ։ Դվինում այս հանգա-

[2] Գ. Ա. Տիրացյան, նշվ. աշխ.։





Նկ. 7. Հատակագիծ շինության 1964—1966 թթ. պեղված հատվածի։

մանրը ակնառու կերպով երևում է, քանի որ արևելյան ամբողջ պատի երկայնքով, բացի d-19 քառակուսու նշված մասից, ոչ մի ուրիշ հետքեր չեն նկատվում:

Շինության հյուսիսային թևում եղել է տնտեսական բաժինը (նկ. 7), որից առայժմ բացվել են մի մեծ սենյակ e, i-19 քառակուսիներում, երեք փոքր սենյակ g, h-19, -20 քառակուսիներում, ինչպես նաև մի փոքրիկ հավելված i, g, h-18 քառակուսիներում: Ըստ երևույթին, շինությունն ունեցել է նաև մառանային սենյակներ, որոնց մնացորդները բացվում են c-21 և b-19 և -20 քառակուսիներում (նկ. $5_2$): Այստեղ տեղում պահպանված էին տնտեսական կարիքների համար (ըստ երևույթին կաթնամթերքներ պահելու համար) օգտագործվող երկու մեծ անոթներ, որոնցից մեկի վրա դրված էր մարմարե լավ կոկած հարթ սալիկ:

Շինության հյուսիսային մասում՝ i-18 և -19 քառակուսիներում 1965 թ. հայտնաբերվեցին տարբեր չափերի կարասների բեկորներ: Կարասների առատությունը ենթադրել է տալիս, որ այդ մասում հավանաբար եղել է նույնպես մառանային սենյակ, որի հետքերը, ցավոք, չեն պահպանվել: Խոշոր կարասներն ունեն կարճ վիզ, ուռուցիկ իրան և հորիզոնական լայն պսակ: Իրանի վերին մասով անցնում է «եղևնաձև» գոտի: Համեմատաբար փոքր կարասները նույնպես ունեն թեք, ներճկված փոսիկներով ուռուցիկ գոտիներ: «Եղևնաձև» զարդով մեծ կարաս կիսով չափ պահպանված գտնվել է a-19 քառակուսում 2,0 մ խորությունից: Այդ կարասները թեև թվագրվում են V—VII դդ., սակայն նրանց առկայությունը VIII—IX դդ. շերտում օրինաչափ է, քանի որ նրանք կարող էին պահպանվել մի քանի հարյուրամյակ:

Շինության երկու մասերն իրարից բաժանվել են փոքրիկ բակով, որը պետք է լիներ d, e-19 -20 քառակուսիների շրջանում: Այստեղ բացվեց քարաշար պատերով ոչ խորը և ոչ լայն առվակի հետքեր (աղ. XVI): Այն սկսվում էր e-19 քառակուսում և ձգվում դեպի արևմուտք մոտ 11,0 մ երկարությամբ: Այդ ուղղությամբ առվակն ունի թեքություն: Առվակը գտնվում է սյունազարդ սենյակից 9,0 մ հեռավորության վրա և անցնում է շինության հատակի մակարդակով (մոտ 2,0 մ. գետնի մակերեսից): Պետք է ենթադրել, որ սյունազարդ սենյակին կից եղել են հավելվածներ, որոնց հիմնապատերը բացվել են e-20 և -21 քառակուսիներում: Նույն տեղում բացվել է քարակույտերի մեջ շուռ եկած մի խարիսխ:

Պեղվող հատվածում, շինության ներսի տարածությունում բացվել են 9 հոր, որից 4-ը՝ մեծ, 5-ը՝ փոքր (տրամագծով): Հորերի միևնույն ժամանակին պատկանելը ոչ մի կասկած չի հարուցում, քանի որ հայտնաբերված նյութերը, հատկապես խեցեղենը (ջնարակած և հասարակ) և ապակին իրենց պատրաստման ձևերով, զարդերով և որակով միատիպ են: Միաժամանակ այդ նյութերն ուղեկցվում են VIII—IX դդ. թվագրվող արաբական մի քանի տասնյակ դրամներով:

Մեծ հորերը գլանաձև են (մի մասը՝ հատած կոնի ձև), բերանի մասում ունեն մոտ 2,0 մ տրամագիծ, խորությունները տատանվում են 2,0—6,0 մ: g-19 քառակուսու հորը, որը բացվել է 1965 թ., ունի 5,5 մ խորություն, իսկ նրա բերանը հայտնաբերվել է գետնի մակերեսից 3,2 մ խորության վրա: Այդ հորերի միջից, մյուս նյութերի հետ զուգահեռ, դուրս են եկել մեծ քանակությամբ թրծած աղյուսներ տարբեր չափերի (պահվում են Դվինի հնագի-



տական բազայում): Ըստ երևույթին, հորերի բերանների շուրջը՝ հատակը եղել է աղյուսներից պատրաստված, որը հետագայում փուլ է եկել և լցվել հորի մեջ: Այս ենթադրությունը հաստատվում է նաև նրանով, որ աղյուսները գտնվել են գերազանցապես հորերի վերին շերտերում: Նման մեծ հորեր հայտնի են նաև Դվինի միջնաբերդի պեղումներից, սակայն այն տարբերությամբ, որ այդ հորերը զուրկ են եղել իրերից և օգտագործվել են հացահատիկ կամ գյուղատնտեսական այլ մթերքներ պահելու համար: Կենտրոնական թաղամասում բացված մեծ հորերը իրենց մեջ հարուստ նյութեր են պարունակում: Միայն g-19 քառակուսու հորից հանվել է մոտ 200 իր, որոնց մի մասն՝ ամբողջական: Միաժամանակ e-20 քառակուսու հորից հայտնաբերվել է ընդամենը 2 ամբողջական ապակե տափաշիշ:

Փոքր հորերը շատ չեն, սակայն իրենց նյութերով խիստ հետաքրքրական են: g-18 քառակուսու հորից գտնվեցին շուրջ երկու տասնյակ գունավոր ապակե բաժակաձև գավաթներ, որոնք հերթականությամբ շարված էին հորի պատի տակ:

Ի տարբերություն միջնաբերդում բացված հարյուրավոր հորերի, որոնց գերակշռող մասը օգտագործվել է կոմունալ նպատակների, կերի ավելցուկը և կոտրված անոթները հեռացնելու համար, կենտրոնական թաղամասի պեղված հատվածի հորերը զուտ թաքստոցներ են, որտեղ պահվել են առարկաներ, որոնց մի մասն ամբողջությամբ հետագայում հանվել է, իսկ կոտրվածները և գեղարվեստական պակաս արժեք ունեցողները թողվել են տեղում: Անոթները միատարր են, միատիպ (գավաթներ, սափորներ, քրեղաններ, ապակե ղամպարներ և այլն): Որոշ անոթներ պատրաստված են գեղարվեստական բարձր ճաշակով: Դրանք հավանաբար եկեղեցու սպասքի մի մասն են կազմել և կարող էին թաքցվել միայն եկեղեցու կողմից: Այս միտքը լոկ ենթադրություն է, որը կարող է հաստատվել հետագա պեղումների ընթացքում:

Հորերը, ինչպես իրականում պետք է լիներ, բացվել են շինության տնտեսական բաժանմունքում և մառանային սենյակներում: Չորս մեծ և երեք փոքր հորերը բացվել են հյուսիսային թևի սենյակներում: Երկու փոքր հոր բացվել է b-20 քառակուսում: Շինության բնակելի մասում հորերի հետքեր չկան: Դվինի միջնաբերդում XII—XIII դդ. աշխարհիկ շինությունների սենյակների կենտրոններում առկա են հորեր, որոնք ծածկված են եղել կավե և քարե գեղեցիկ հարդարանք ունեցող խփերով: Այդ խփերը կենտրոնում ունեն անցք՝ ջուրը հորը թափվելու համար: Որպես կանոն այդ հորերը լրիվ զուրկ են իրերից: Կենտրոնական թաղամասի շինությունում ջրի հարցը այլ կերպ է լուծվել՝ ջրհորդան խողովակներով թափվել է բակի առվակի մեջ և հեռացվել:

Պեղավայրի XI—XIII դդ. շերտերը հարուստ չեն նյութերով: Շերտերը սկսվում են 70—80 սմ խորությունից մինչև 1,5—1,6 մ: Ամբողջական շինության հետքեր իսպառ բացակայում են: Կան աղյուսաշեն պատերի առանձին մասեր, ճարտարապետական բեկորներ: Պետք է նշել կարևոր մի հանգամանք, որը շատ ծանր հարված է հասցրել XI—XIII դդ. նյութական մշակույթին: Սկսած XVII—XVIII դդ. Դվինի կենտրոնական թաղամասը համատարած վերածվել է մերձակա գյուղի գերեզմանոցի և թաղումները տակն ու վրա են արել այդ շերտերը: Թաղումները խիստ շատ են և գտնվում են տարբեր խորություններում: Պեղվող յուրաքանչյուր քառակուսում երբեմն հանդիպում է 15—20 գերեզման: Ուշ շրջանի թաղումները ծածկված են քարե սալերով, իսկ

րում գերեզմանները շարված են թրծած աղյուսներով։ Համեմատաբար խոր շերտերում հանդիպում են թաղումներ, որ իրենց ձևերով լրիվ տարբերվում են ուշ թաղումներից։ Դրանք ծածկված են քարերով, եկեղեցու կրաշաղախ բեկորներով։ Երբեմն հանդիպում են քարե խաչերի մասեր, թևավոր խաչերի բեկորներ, իսկ f-20 քառակուսում, հանգուցյալի գլխի մասում դրված էր մի ամբողջական զարդարուն խոյակ, որը պատկանել է թևավոր խաչի պատվանդանի և թվագրվում է V—VI դդ.։ Այս ամենը մեզ ենթադրել է տալիս, որ Դվինի կենտրոնական թաղամասը, մասնավորապես եկեղեցու շրջակա ողջ տարածությունը, կարող էր մասսայական գերեզմանոցի վերածված լինել քաղաքի կործանումից անմիջապես հետո։ Ավելի վաղ այդ տեղի ունենալ չէր կարող, քանի որ XI—XIII դդ. մենք ունենք հետաքրքիր նյութեր և կոմունալ կառույցների հետքեր։

.Շերտագրական առումով խիստ հետաքրքիր է c-20 քառակուսում բացված հորը (նկ. 8, աղ. VII, 1) խողովակաշարով։ Աղյուսաշեն բերանով հորը Դվինի նախորդ պեղումներից հայտնի են միայն կենտրոնական թաղամասում։ Սա արդեն ապացույց է այն բանի, որ դրանք հատուկ կիրառություն են ունեցել և կապվել են ինչ- որ արտադրական օղակի հետ։ Շերտը ցայտուն կերպով բաժանվում է պնդացրած հատակով, որի վրա կային թափված հում աղյուսի մեծ թվով բեկորներ, որոնք այդ շրջանի կառույցի պատերին են պատկանել։ Խողովակները դեղնավուն կավից են և լավ թրծված։ Դրանք տարբերվում են վաղ միջնադարյան խողովակներից իրենց անթերի մշակմամբ։ Նույն խորության վրա -a-19 քառակուսում բացվել է ևս մեկ հոր, որի նյութերը աղքատիկ են, բայց բնորոշ XI—XII դդ. համար։ c-20 քառակուսու հորի շերտը ճշտելու համար այն մաքրվեց։ Մաքրվելու ընթացքում հայտնաբերվեցին խիստ սակավաթիվ նյութեր, աննշան բեկորներով, սակայն բնութագրական XI—XII դդ. համար։ Առաջին հերթին խոսքը վերաբերում է ապակե ապարանջաններին, որոնք ունեն հարթ մակերես և բաց կապտավուն են։ Նույն հորից գտնվեց ապակե սրվակի մի փոքրիկ կտոր, որն իր ձևով և ապակու որակով լրիվ տարբերվում է նույն տեղամասում գտնված ապակիների հոծ խմբից և, ընդհակառակը, մոտ է միջնաբերդի ուշ շրջանի շերտերում գտնված ապակիներին։ Հորը խորացվեց մոտ երեք մետր, որից հետո սկսեցին դուրս գալ վաղ երկաթի դարաշրջանի խեցեղեն։ Պեղավայրի c-19 քառակուսում, նույն շերտում գտնվեց տուֆե սանդանման ոչ խորը փոսով մի քար։ Դժվար է կռահել, թե ինչի համար է այն օգտագործվել, սակայն մեր նախնական կարծիքով նրա մեջ կարող էին կավ մանրացնել։ Պատահական չէ, որ c-21 քառակուսում դուրս եկան մեծ քանակությամբ հալված կավե տձև զանգվածի բեկորներ, որոնք ապակու տեսք էին առացել։ Նույնպիսի առանձին բեկորներ հայտնաբերվել են նաև b-19 և -20 քառակուսիներում։ e-20 քառակուսում հայտնաբերվեց մոտ 25 սմ տրամագծով կավագունդ։ Կարևոր է նաև նշել, որ վերոհիշյալ հորի միջից դուրս էր գալիս մանր կավահող և այն էլ մաքուր վիճակում։ Ըստ երևույթին, մենք այստեղ գործ ունենք կավագործության հետ կապված ինչ-որ կառույցի մնացորդների հետ, որը խիստ ավերվել է հետագա թաղումների ընթացքում։ Միաժամանակ պետք է նշել, որ պեղավայրը դեռևս լրիվ պեղված չէ և որոշ սպասելիքներ կարող են լինել ապագայում։

X—XIII դդ. նյութերը շատ աղքատիկ են։ Այդ նյութերի մեջ որոշ մաս են կազմում ջնարակած խեցեղենը, իր բնորոշ ձևերով և զարդամոտիվներով (միագույն կանաչ և բազմագույն փորագիր զարդերով)։ Հասարակ խեցեղենը






Նկ. 8. Շինության սյունազարդ սենյակի և աղյուսաշեն հորի շերտագրական կտրվածքը։

շատ անպաճույճ է համեմատած IX դ. խեցեղենի հետ։ Ապակին շատ քիչ է և լրիվ տարբերվում է IX դ. ապակիներից։ Այստեղ բնորոշ են մուգ դարչնագույն. սևին հասնող ապակե փոքրիկ անոթների բեկորները։ Այս տիպի ապակիները լայն տարածում են գտնում XI—XIII դդ.։ Մետաղ գրեթե չի հանդիպում, լրիվ բացակայում են ուշ շրջանի դրամները[3]։ Այս շերտում գտնված նյութերի մեջ հետաքրքրական է կավե այան բեկորը, որի վրա դրոշմելու միջոցով արված են երկրաչափական և բուսական զարդեր։

XI—XIII դդ. շերտերին բնորոշ են հախճապակուց պատրաստված ուլունքները (2305/16) և ապակե ապարանջանները (2449/97)։ Ուլունքներից մեկը հարթ է և վերին մասում ունի փոքրիկ ունկ՝ թելից կախելու համար։ Երկրորդ ուլունքը ժանիքաձև է (նկ. 30 16.17 )։ Ապարանջանները գերազանցապես կապույտ ապակուց են՝ շատ նեղ ոլորներով (նկ. 30 8.9 )։

Եկեղեցուց հարավ-արևմուտք, -a -19 և -20 քառակուսիների ուղղությամբ, դեպի արևելք ձգվում է մի թանձր պատ (լայնությունը 2,5—3,0 մ), որի հիմքում շարված են եկեղեցու կրաշաղախ մեծ բեկորներ։ Հենց այս հանգամանքը թույլ է տալիս ասելու, որ պատը (պարիսպը) կառուցվել է X դ. ոչ շուտ և հավանաբար եկեղեցին բաժանել է քաղաքային թաղամասերից։ Պարիսպը նկատվում է շուրջ 60—70 մ երկայնքով։ Այն շարված է մեծ հում աղյուսներով և սվաղված է կավով։ Բուն պարսպին հարավային կողմից հպվում են կավակերտ շինությունների պատեր։ Այս հատվածում, որը պեղվել է 1970 թ., բացվել են նույն շրջանի սենյակներ, առանձին մուտքերով։ Հետագա պեղումները հետաքրքիր նյութեր կտան միջնադարյան քաղաքի առանձին թաղամասերի և շինությունների փոխհարաբերության հարցերը լուծելու ուղղությամբ։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դվինի կենտրոնական թաղամասում բացված մեծ շինության հատվածում առկա են մի քանի շերտեր, որոնցից վաղագույնը վերաբերում է վաղ երկաթի ժամանակաշրջանին (մ. թ. ա. IX—VII դդ.)։

Վաղ միջնադարում այդտեղ եղել է հրապարակ կաթողիկե եկեղեցու շուրջը։ Այդ շրջանի հնագիտական նյութերը պատահական են և սակավաթիվ։

Եկեղեցուց արևմուտք շինությունը կառուցվել է VIII դ. վերջում և իր գոյությունը պահպանել մինչև 893 թ. երկրաշարժը։ Շինության հորերից գտնված նյութերը առանց վերապահության թվագրվում են IX դ.։ Գտնված նյութերի մեջ ստվար խումբ են կազմում խեցեղենը՝ ջնարակած և հասարակ, ապակին ու մետաղը։ Կան մեծ թվով ներմուծված ջնարակած անոթներ, որոնք սերում են մերձավոր-արևելյան արհեստագործական կենտրոններից (Սամառա, Անտիոք, Շոշ և այլն)։

X դ., անմիջապես երկրաշարժից հետո, եկեղեցու շրջապատը հավանաբար բնակեցված չի եղել։ XI—XIII դդ. կան շինությունների հետքեր և նյութեր, սակայն դրանք քիչ են, իսկ մի մասն էլ ավերված է հետագա թաղումներով։ XIII դ. հետո նյութեր չեն հանդիպում և այդ թաղամասը վերածվում է գերեզմանոցի։

---

[3] Գտնվել է եկտկուղյան մեկ դրամ։



# III. ՄԵՏԱՂԵ ԻՐԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Դվինը միջնադարյան Հայաստանի մետաղագործական խոշոր կենտրոններից մեկն էր։ Քաղաքի բազմամյա պեղումների ժամանակ գտնվել են մետաղի հետ կապված արհեստային արտադրանքի տարբեր նմուշներ՝ սովորական գամերից մինչև բարձրարվեստ մշակումով հիանալի ոսկյա զարդեր, բացվել են արհեստանոցների մնացորդներ արտադրական գործիքների հետ մեկտեղ[1]։

Դվինի կենտրոնական թաղամասում 1964—1970 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերված և լավ թվագրված մետաղե իրերն ու առարկաները սակավաթիվ լինելով հանդերձ, մեծ նշանակություն են ձեռք բերում VIII—IX դդ. Հայաստանի նյութական արտադրության ուսումնասիրության ուղղությամբ և միաժամանակ լրացնում են մեր գիտելիքները Հայաստանում արհեստային արտադրանքի նոր վերելքի սկզբնական էտապի վերաբերյալ։

Մետաղե իրերի թվում, որոնք պատրաստված են հիմնականում երկաթից, կան աշխատանքային գործիքներ, զենքեր, զարդեր և այլն։

**Աշխատանքային գործիքներ.** Իր նրբությամբ աչքի է ընկնում 1964 թ. Լ-19 քառակուսու հորի մեջ հայտնաբերված բրոնզե փոքր ունելին (2306/41)։ Այն վերին ծայրում ունի օղակ, հավանաբար թելով կախելու համար։ Ունելին ամրություն տալու համար, վերին մասում, որտեղից սկսվում են թևերը, առկա են երկկողմանի թմբիկներ։ Թևերը ճոխ հարդարված են։ Ունելին շատ լավ պահպանված է, մասնավորապես սուրին աշխատող մասերը։ Երկարությունը՝ 7,3 սմ է, աշխատող մասի երկարությունը՝ 5,0 սմ (նկ. $9_1$)։

Նույն տեղում, բայց շերտից հայտնաբերվել է պղնձե տափակ մի ձողիկ (նկ. $10_{12}$, աղ. XVII, 3), որը ստորին մասում ունի ակոս (2306/32)։ 1965 թ. Ց-19 քառակուսու մեծ հորում գտնվեցին բրոնզե երեք փոքր բրիչներ (3225/37), որոնց հատվածքը մի ծայրում կլոր է, իսկ մյուսում՝ տափակ։ Բրիչների բերանները սուր են և մի կողմի վրա թեք կտրվածք։ Հավանաբար նրանք օգտագործվել են փորագրության համար։ Երկարությունը՝ 4,7—5,0 սմ (նկ. $9_5$, աղ. XVII, 4)։ Նույն հորի միջից դուրս եկավ նաև բրոնզե փոքրիկ գդալիկ (դեղդիր), որն օգտագործվել է, ըստ երևույթին, փոշի լցնելու համար։ Նույն նպատակի համար է օգտագործվել նաև 1970 թ. -a-20 քառակուսում գտնված փոքրիկ գդալիկը (նկ. $12_5$), որն ունի համեմատաբար երկար պոչ։ Պոչի և փոքրիկ բերանի միացման տեղը քառակող է ու իր վրա կրում է զարդեր։

Գործիքների այս խումբը կիրառական տեսակետից կարող է ծառա-

---

[1] Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Ա, Երևան, 1958, Բ, Երևան, 1963 և ուրիշներ։



3—306




Նկ. 9. Երկաթից և պղնձից աշխատանքային գործիքներ և նիզակներ։



յել ոսկերիչ արհեստավորի, ոսկուց կամ արծաթից պատրաստվող իրերի վրա փորագրություններ կատարելու և աշխատանքի ընթացքում տարբեր դեղափոշիներ օգտագործելու համար։ Ոսկերիչի արհեստանոցի առկայությունը կենտրոնական թաղամասում ակնհայտ է։ Դեռևս նախորդ տարիների պեղումների ժամանակ[2] նույն թաղամասում գտնվել են տարբեր տիպի գործիքներ, հալոցներ, ինչպես նաև այդ արհեստի հետ կապված պատրաստի իրեր (օր. արծաթե զարդերի գանձը՝ 1848/81), իսկ 1946 թ. բացվել է արհեստանոցի հետքեր քուրայով, սակայն խիստ ավերված վիճակում։ 1964 և 1965 թթ. գտնվել են մի փոքրիկ հալոցի բեկոր՝ ուժեղ թրծված հատակով, ինչպես նաև ոսկրե փոքրիկ գդալիկ։ Աշխատանքային գործիքներ, հավանաբար կացին ձուլելու կավե կաղապարի մի փեղկ է հայտնաբերվել 1967 թ. a-19 քառակուսում։ Կաղապարը երկար օգտագործվելուց խիստ վատ է պահպանվել։

Դանակները ներկայացված են մի քանի օրինակով (նկ. $9_{2-4}$ և $12_3$, աղ. XVII, 17)։ Նրանցից երկուսը դուրս են եկել e-19 քառակուսում և ժամանակագրական տեսակետից IX դարին են պատկանում։ Դանակներից մեկը (2306/19) ունի բարակ տափակ շեղբ, առանց բռնակի։ Երկարությունը՝ 11,5 սմ, լայնությունը՝ 2,5 սմ։ Երկրորդ օրինակն իր կորությամբ մոտենում է վաղ միջնադարյան կորաշեղբ դանակներին[3]։ Այստեղ բացակայում է ծայրը, իսկ ստորին մասում ունի լեզվակ՝ փայտե կոթին միանալու համար (պահպանված մասի երկարությունը՝ 6,0 սմ)։ Դանակների բեկորներ հայտնաբերվել են նաև 1968—1970 թթ. պեղումների ժամանակ, որոնք իրենց ձևերով խիստ բնորոշ են այդ ժամանակաշրջանին։ Դանակների սակավությունը մեզ հնարավորություն չի տալիս ավելի որոշակի խոսել նրանց ձևերի և զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ։ Սակայն ակնհայտ է, որ IX դ. դանակների ձևերը արդեն կապող օղակ են վաղ միջնադարին բնորոշ դանակների և զարգացած միջնադարի տափակ, նեղ, երկարավուն շեղբով դանակների միջև։

1967 թ. e-20 քառակուսում գտնվեց դուրի մի բեկոր (2451/26)։ Պահպանվել է դուրի միայն ստորին մասի լայնացող կտրիչ-բերանը, որը կոտրված է հավանաբար կոթառի մոտ։ Հնարավոր է, որ այն օգտագործվել է քարի վրա քանդակներ անելու համար և իր արտաքին տեսքով նման է Զվարթնոցի վարպետների բարձրաքանդակներում հանդիպող այդօրինակ գործիքներին։ Փորագրական գործիքի մի բեկոր հայտնաբերվել է 1966 թ., սակայն այստեղ այն քառակող է և աշխատանքային մասը կոտրված (2448/19)։

Փականագործությունը միջնադարյան Հայաստանում նորույթ չէր և նույնիսկ դիտվում էր որպես առանձին արհեստ, «կողպայքարար» անունով[4]։ Անիում գտնվել են կողպեքների մի քանի տեսակներ, այդ թվում՝ մարդու և կենդանիների արձանիկների տեսքով։ Դվինի կենտրոնական թաղամասում 1965 թ. հայտնաբերվեց մի փոքրիկ կողպեք (2325/49), որն իր ձևով տարբերվում է Անիի օրինակներից(նկ. $10_1$, աղ. XVII, 5)։ Պահպանվել է միայն կողպեքի վերին աշխատանքային մասը երկար ձողիկով (ձողիկի երկարությունը՝ 7,8 սմ, աշխատանքային մասի երկարությունը՝ 2,5 սմ)։ Աշխատանքային մասը մի քառակող երկայնակի սնամեջ թմբուկ է, որը ներսից բաժանված է

[2] Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 57։
[3] **А. А. Калантарян,** Материальная культура Двина IV—VIII вв., стр. 8.
[4] Բ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ., Ա, էջ 139—140։




Նկ. 10. Երկաթից և պղնձից աշխատանքային գործիքներ և զարդեր։

երկու մասի։ Ստորին մասը, որը բացակայում է, հավանաբար ունեցել է երկու ճողիկներ, որոնք մտել են թմբուկի մեջ և փոքր անցք, ուր հագել է ճողիկի սուր ծայրը։ Դժվար է ասել, նման կողպեքները եղել են զսպանակավոր, թե ոչ։ Զուտ աշխատանքային տեսակետից նման կողպեքներ հայտնի են Սար-



կելում, որոնք, սակայն, թվագրվում են ավելի ուշ ժամանակաշրջանով[5]։ Նույն տիպի կողպեք հայտնի է Ղրիմում, Բակլա ամրոցի պեղումներից (դաշտային համար 28)։

**Զենքեր.** Դվինի զինագործական խոշոր կենտրոն լինելու փաստը ոչ մի կասկած չի հարուցում։ Այդ առթիվ մեզ հասել են նաև պատմական վկայություններ[6]։ Պեղումների ժամանակ գտնված զենքի տարբեր տեսակները քանակական և կիրառման հնարավորությունների տեսակետից վերստին գալիս է հաստատելու այդ փաստը։

Կենտրոնական թաղամասի պեղումներից հայտնաբերված զենքերը սակավաթիվ են, սակայն շատ բնորոշ տվյալ դարաշրջանի համար։ Զենքը զուտ երկաթից է և շատ վատ պահպանված։ Միջնադարյան բազմաթիվ զենքերից գտնվել են թրի բեկորներ, նետասլաքներ՝ ամբողջական և բեկորներով, ինչպես նաև նիզակի բեկորներ։

Միջնադարյան սրեր և թրեր շատ քիչ են հայտնի պեղումներից։ Երկաթյա մի սուր գտնվել է Անիում՝ Բագրատունիների պալատի նկուղում[7] (մոտ 1,0 մ երկարությամբ)։ Թրերի բեկորներ հայտնի են Անիի, Դվինի, Գառնիի, Ամբերդի պեղումներից։

1967 թ. Դվինի կենտրոնական թաղամասում e-20 քառակուսում, անմիջապես շինության հատակի վրա գտնվեց թրի շեղբի ծայրի մասը (2451/18, նկ. $13_6$)։ Պահպանված բեկորը (երկարությունը՝ 16,5 սմ) ցույց է տալիս, որ թուրը եղել է երկսայրի։ Նույն քառակուսում, բայց հորի միջից գտնվեց թրի մի դաստապանակի բեկոր, վերին ուռուցիկ, բուրգանման մասով (2451/1)։ Դաստապանակը պատրաստվել է կռելու եղանակով։ Այն հագել է փայտե կոթին, քանի որ սնամեջ է և իր մեջ կրում է փայտի մնացորդներ (նկ. $13_9$)։ Ն-19 քառակուսում, հայտնաբերվեց թրի մի բեկոր պատյանի մնացորդներով (2451/27)։ Ընդ որում թուրը պատրաստված է երկաթից, իսկ պատյանը՝ պղնձից, որը բարակ թերթիկներից է արված (նկ. $13_8$)։ Այս համեստ խումբը ինչ-որ չափով լրացնում է միջնադարյան զենքերի վերաբերյալ մեր ունեցած գիտելիքները, եթե հաշվի առնենք, որ մասնավորապես թրերի վերաբերյալ մեր ունեցած նյութերը խիստ սակավ են և լրացվում են միայն պատմիչների հայտնած վկայություններով։

Նետասլաքները միջնադարյան ամենատարածված զենքերից են։ Դվինում դրանք մոտ 200-ի են հասնում։ 1964—1970 թթ. կենտրոնական թաղամասի պեղումների ժամանակ նետասլաքներ քիչ են գտնվել, թվով 6 հատ՝ երեքը եռաթև, մեկը քառակող և երկուսը ձվաձև հատվածքով (նկ. $13_{1-4, 7}$)։

1967 թ. Ь-20 քառակուսում, անմիջապես սյունազարդ սենյակի հարավային մուտքի մոտ գտնվեց երկաթե եռաթև պոչուկավոր մի նետասլաք (2451/14), որն իր պահպանվածությամբ միջնադարյան նույնանման նետասլաքների մեջ միակն է։ Նույն տիպի նետասլաք, բայց ավելի վատ պահպանվածությամբ, գտնվել է 1966 թ. (2448/29)։ 1970 թ. a-21 քառակուսում գտնվեց եռաթև մի նետասլաք, ամբողջական։ Այն թվագրվում է նաև նույն

[5] **С. С. Сорокин,** Железные изделия Саркела-Белой Вежи, МИА, № 75, М.—Л., 1959, стр. 171—180, рис. 20, 23.

[6] Պատմություն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138։

[7] Բ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 149, նկ. 22։

*տեղից գտնված, VIII դ. վերջում և IX դ. սկզբում կտրված արաբական դրամով, որը վկայում է նրանց վաղ միջնադարյան լինելու օգտին։*



*Նկ. 11. Երկաթե գամեր, պայտեր և պղնձե մատանիներ։*

*Այս նետասլաքների վրա ցայտուն արտահայտված են նիստերը և միացման տեղերը։ Ոչ մի կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ եռաթև նետասլաքները պատրաստվել են կաղապարներում, մի եղանակ, որը բնորոշ է ավելի վաղ ժամանակաշրջանի համար։ Հետագայում՝ IX—XIII դդ. նետասլաքները պատրաստվում էին կռելու եղանակով, ինչպես նաև երկաթը տափակեցնում էին և կտրում մկրատով (մոնղոլական շրջանի տերևաձև նետասլաքները)։*

*Եռաթև նետասլաքների ձևերի կիրառության և թվագրության վերաբերյալ կա հարուստ գրականություն։ Բոլոր ուսումնասիրողները եռաթև նետասլաքների թվագրության վերին սահմանը համարում են VIII—IX դդ*[8]*։ Հայաստանում եռաթև երկաթե նետասլաքների վաղ տիպերը հայտնի են Կարմիր բլուրի քաղաքային մասի պեղումներից*[9]*, Արմավիրից*[10] *և Արտաշատից*[11]*։ Մ. թ. ա. IV—III դդ. թվագրվող նետասլաքներ գտնվել են Գառնիում 1964 թ., վաղ հայկական դամբարաններում։ Դվինում եռաթև նետասլաքները մի քանի տասնյակ են և թվագրվում են V—VIII դդ.։ Նետասլաքների այս տիպն իր նախահիմքն ունի շատ վաղ ժամանակներից։*

*1967 թ. a-19 քառակուսում գտնվեց ձվաձև հատվածքով նետասլաք, որի պոչուկը բացակայում է։ Նետասլաքը նույնպես թվագրվում է VIII—IX դդ.։*

*Քառակող նետասլաքները լայն տարածում ունեին զարգացած միջնադարում։ Նրանք մեծ քանակությամբ հայտնաբերվել են Անիի, Դվինի, Գառնիի պեղումներից*[12]*։ Կենտրոնական թաղամասում 1966 թ. հայտնաբերված նետասլաքը այդ տիպի նախնական ձևերից է։*

*Նետասլաքների այս փոքրիկ խմբի քննությունը ցույց է տալիս, որ IX դ. դեռ շարունակվում էր նրանց մի մասի կիրառումը, որը, սակայն, աստիճանաբար իր տեղը պետք է զիջեր, պատրաստման եղանակով տարբեր, ավելի գործածական ձևերի։*

*Նիզակները, որոնք գտնվել են Դվինի կենտրոնական թաղամասում, ընդամենը չորսն են (նկ. $9_{6-9}$), այն էլ բեկորներով։ Նրանցից երկուսը սայրեր են և ունեն օվալաձև հատվածք (2306/24, 2325/19)։ Իրենց տիպով նիզակները չեն տարբերվում նախորդ դարաշրջանի նիզակների ձևերից*[13]*։ Ըստ երևույթին, ողջ միջնադարում նիզակների ձևերի մեջ էական փոփոխություն տեղի չի ունեցել։ Առանձնապես ուշագրավ է 1965 թ. i-19 քառակուսում հայտնաբերված նիզակի բեկորը (2325/20, նկ. $9_9$, աղ. XVII, 8)։ Այն իր ձևով նման է*

---

[8] Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 161—162, Բ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 145, Ա. Ա. Քալանթարյան, Զենքերը V—VIII դդ., նույնի, Материальная культура Двина; **Л. А. Чилашвили.** Некоторые моменты археологического исследования Урбниси, ВГМГ, т. XXIV-B, Тбилиси, 1963; его же. Городище Урбниси (на гр. языке), Тбилиси, 1964; **Г. М. Асланов.** Материальная культура Мингечаура в I-VII вв. (автореф. канд. дисс.), Баку, 1963; **Р. М. Ваидов.** Мингечаур в III-VIII вв. (на азерб. языке), Баку 1961; **А. М. Беленицкий,** Раскопки здания № 1 на шахристане Пенджикента (1947), МИА, № 15; его же. Общие результаты раскопок городища древнего Пенджикента (1951—1953), МИА, № 66; **А. И. Тереножкин.** Археологическая разведка на городище Афрасиаб 1945 г., КСИИМК, вып. XVII, 1947; **Б. А. Литвинский.** Среднеазиатские железные наконечники стрел, СА, 1965, № 2; **R. Girshman**, Recherches archèologiques et historiques sur les Kouchans, MDAFA, II, Caire, 1946 և ուրիշներ։

[9] **А. А. Мартиросян,** Город Тейшебаини, Ереван, 1961, стр, 137—138, рис. 61.

[10] **Г. А. Тирацян,** Древнеармянская керамика из раскопок Армавира, ИФЖ, 1971, № 1, стр. 226, табл. IV, 1, 2. Թվագրվում են մ. թ. ա. II-I դդ.։

[11] *1972 թ. պեղումների ժամանակ (արշ. պետ ՀՍՍՀ ԳԱ խնկ. անդամ, պրոֆ. Բ. Ն. Առաքելյան) գտնվել են հարյուրավոր նետասլաքներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում եռաթև սլաքները (II—I դդ. մ. թ. ա.)։ Նյութերը հրապարակված չեն։*

[12] Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 162, Բ. Ն. Առաքելյան և Գ. Հ. Կարախանյան, Գառնի, 3-րդ պրակ, Երևան, 1962, էջ 52, նկ. 9։

[13] Ա. Քալանթարյան, Զենքերը V—VIII դդ., էջ 245։




Նկ. 12. Պղնձե և բրոնզե զարդեր և այլ առարկաներ։

Նույն թաղամասում 1938 թ. գտնված բոլորատեգ նիզակին (1617/65)[14]։ Նի-
զակների այս տիպը զուրկ է կոթառից, մեկ ամբողջական զանգվածից է։ Նրա

[14] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., նկ. 145, Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., նկ. 18բ, Ս. Քալանթարյան, նշվ. աշխ., էջ 245, աղ. III, 4։



ստորին մասը, որը մտնում է փայտե բնի մեջ, սնամեջ է և մի կողմից խորը
բացվածք ունի։ Նիզակների այս տիպը հիշատակվում է պատմահայր Մով-
սես Խորենացու մոտ[15] և ամենայն հավանականությամբ միջնադարյան վաղ
ֆեոդալական զենքի բնորոշ օրինակներից է։ Ողջ զարգացած միջնադարում
մեզ այս ձևի նիզակներ չի հանդիպում և առայժմ հայտնի չէ ոչ մի պեղա-
վայրից։ հարցերը լուծելու կա-
Նիզակի (կոթառի հետ միասին) և բնի միացման
պակցությամբ ուշագրավ է 1965 թ. i-18 քառակուսում հայտնաբերված նի-
զակի խողովակաձև կոթառի երկու բեկորը (2325/29)։ Կոթառի ստորին վեր-
ջավորության վրա արված է պղնձե օղակ (նկ. 9$_7$), որից դուրս են գալիս երկու
պոչեր և ամուր գրկում են խողովակի ստորին մասը, ըստ երևույթին կոթառին
ամրություն տալու և բնի հետ պինդ միանալու համար։ Պեղումներից մեզ
շատ են հասել ամբողջական կոթառով նիզակներ, սակայն այս օրինակն
առայժմ միակն է, որը բնի հետ միացման հարցը լուծում է այս եղանակով։
Նման տիպի հետաքրքիր նիզակ հայտնաբերվել է Հյուսիսային Կովկասում
1968 թ. կատակոմբային թաղումներից։ Նիզակն ամբողջական է և կոթառի
վրա կրում է լրացուցիչ թերթիկներ (պղնձե), որոնք ամրություն են տալիս
կոթառին[16]։ 1969 թ. գտնվեց մի տեգ (նկ. 13$_5$), զենքի մի տեսակ, որը բազ-
միցս հիշատակվում է պատմիչների մոտ, սակայն պեղումներից հազվադեպ
է գտնվում։ Այն ունի տերևաձև սլաք, սնամեջ կոթառ և իր չափերով զիջում
է նիզակներին (երկարությունը՝ 11,5 սմ, 2456/15)։

**Մետաղե այլ առարկաներ.** Պեղումների ժամանակ կենտրոնական թաղա-
մասում հայտնաբերվել են պղնձից և երկաթից պատրաստված տարբեր կի-
րառության իրեր և առարկաներ։ Դրանց մեջ առանձին խումբ են կազմում
զարդերը, որոնք գերազանցապես պղնձից են։ 1964 թ. e-19 քառակուսում
ուշ շրջանի գերեզմաններից մեկում գտնվեց պղնձե երկու բարակ մատանի
(նկ. 11 11-12)։ Այդ մատանիները թվագրվում են IX դ. և հետագայում պատահա-
կան ընկել են գերեզմանի մեջ։ Նրանցից մեկը վերին մասում ունի բրգաձև
հավելված, որը կեղծ քարի տպավորություն է տալիս նրան։ Երկրորդ մատանու
վերին մասում քառակուսի է արված և տափակեցված է։ Նույն թվին ſ-19 քա-
ռակուսում հայտնաբերվել են պղնձե օղեր-մատանիներ։ Գտնվել են նաև
պղնձե կախիկներ, որոնք բարակ ձողից են, որոնց վրա ամրացված են փոք-
րիկ կիսագնդեր (2 հատ)։ Կախիկների այդ ձևը գալիս է դեռևս վաղ միջնադա-
րից։ Ըստ երևույթին, դրանք լայն տարածում ունեին IX դ. ոչ միայն Հայաս-
տանում։ Նմանօրինակ մի կախիկ հայտնի է նաև Օրեն-Կալայում[17]։

Հիշատակության է արժանի 1969 թ. գտնված բրոնզե կիսալուսնաձև
կրծքազարդը (նկ. 12$_1$)։ Այն տափակ է, սուր ծայրերով և իր վրա կրում է
շրջանաձև զարդեր։ Վերին մասում ունի մի երկրաչափական զարդ և խիստ
մաշված արաբատառ արձանագրություն։ Կրծքազարդը կենտրոնում ունի
փոքրիկ ունկ, թելից կախելու համար։

[15] Մովսես Խորենացի, II, 9։

[16] **В. А. Кузнецова,** Исследования Змейского катакомбного могильника в 1958. г., МИА, № 114, М., 1963, стр. 17, рис. 6.

[17] **А. Л. Якобсон,** Раскопки на городище Орен-Кала в 1953—1955 гг., МИА (ТАЭ), № 67, 1959, стр. 140, рис. 113 ж.




Նկ. 13. Երկաթե զենքերի տեսակներ։



Հետաքրքիր են զոտու ճարմանդները և ֆիբուլաները։ 1964 թ. Ì-19 քառակուսուց գտնվեց մի հետաքրքիր պղնձե ճարմանդի բեկոր՝ լեզվակը (2306/26)։ Այն ունի քառակուսի հիմք, որի վրա սուր ծայրով զոդված է լեզվակը։ Հիմքի և լեզվակի վրա առկա են շրջկենտրոն ակոսավոր զարդեր (նկ. $10_8$, աղ. XVII, 6)։ Նման ճարմանդներ առայժմ չեն բաղդատվում։

1965 թ. գտնվեց մի հետաքրքիր ֆիբուլա (2325/46), որը վաղ միջնադարյան է, և պատահականորեն ընկել է ուշ շրջանի նյութերի մեջ։ Այն պղնձե տափակ ձողից է պատրաստված, ստորին մասը ծալված է, իսկ վերին մասն անցնում է կորությամբ։ Հիմնական աշխատանքային մասը կոտրված է (նկ. $10_9$, աղ. XVII, 12)։ Նման ֆիբուլաները լայն տարածում ունեն Անդրկովկասում, հատկապես վաղֆեոդալական դամբարաններում են հայտնաբերվում։ Նման մի ֆիբուլա գտնվել է Խնիսլիում (Ադրբեջան) և թվագրվում է V—VI դդ.[18]։ Ճարմանդների մասեր հայտնի են նաև 1966 և 1969 թթ. նյութերում (2448/7,8, 2456/5, նկ. $12_{11,12}$, $14_1$)։

1965 թ. հայտնաբերվել է նաև պղնձե կոնաձև անամեջ մի իր, որը հավանաբար զանգակի մաս է[19] (նկ. $10_7$)։

Պեղումների ժամանակ գտնվել են տարբեր տեսակի պղնձե թիթեղներ (2325/52), լարեր (2451/24) (նկ. $10_{11}$, $12_{10}$) և այլն։ Հետաքրքրական է 2325/48 առարկան, որը գտնվել է Ì-18 քառակուսում։ Այն սակրաձև բրոնզե փոքր իր է, որը վերին մասում ունի երկու անցք (նկ. $10_6$, աղ. XVII, 16)։ Դատելով առարկայի ձևից, այն պետք է, որ երկփեղկ եղած լիներ։ Ստորին մասում նկատվում են ինչ-որ հետքեր, որն առաջացել է այն օգտագործելուց։

Առարկայի կիրառման հնարավորությունների մասին հնարավոր չէ որևէ բան ասել։ Խիստ ինքնատիպ է բրոնզե փոքր կաթսայի զարդարուն ոտքը (2456/23, նկ. $12_2$)։

Բավականին շատ են տարբեր տեսակի գամերը (նկ. $11_{1-4,9}$, $14_{3,4,8.}$ )։ Արժանի է հիշատակության մեծագլուխ կարճ գամերը, որոնք հավանաբար հատուկ կիրառություն ունեին։ Նրանց մի մասն օգտագործվել է տանիքի հարթ կղմինդրներն ամրացնելու համար։ Բացառված չէ, նաև, որ նրանք զարդագամեր են և ամրացվել են փայտե դռների վրա։

Հաճախ հայտնաբերվում են պայտեր (նկ. $11_{57}$ )։ Որոշ օրինակների վրա պահպանված է ամրացվող գամը (2325/22)։

Երկաթե և բրոնզե մյուս իրերից է ձիու սանձի մասը (նկ. $14_{12}$), դռան փակի տարբեր տիպի օղեր (2306/26), իրար մեջ ագուցված ձվաձև օղեր (նկ. $14_{10}$), ապարանջաններ (նկ. $12_{8,9}$), շղթաներ (նկ. $12_6$) և այլն։

Ինչպես տեսնում ենք, Դվինի կենտրոնական թաղամասում հայտնաբերված մետաղե իրերն ու առարկաները, թեև քանակով մեծ չեն, սակայն կիրառման հնարավորություններով և ձևերով բազմազան են, մի հանգամանք, որը խոսում է մետաղի լայն տարածման մասին։

Քննարկվող նյութը սակավ լինելով հանդերձ, հնարավորություն է ընձեռում որոշ զուգահեռներ անցկացնելու և համեմատելու նախորդ շրջանի (V—VIII դդ.) մետաղե իրերի և առարկաների հետ։ Նախնական դիտողություննե-

[18] **Д. А. Халилов.** Древнее поселение в Хынысды, ИАН Азерб. ССР, серия общ. наук, 1961, № 3, табл. VIII, 10.

[19] **А. Л. Якобсон,** ук. соч., рис. 113 б.



Նկ. 14. Երկաթից աշխատանքային գործիքներ, գամեր և այլ առարկաներ։

րը թույլ են տալիս ասելու, որ որոշակի կտրուկ տարբերություններ վաղ միջնադարյան և IX դ. արտադրանքի մեջ չի նկատվում։ Խորը կերպով զգացվում է նախորդ ավանդույթների կիրառումը մետաղագործական արհեստում, մի երևույթ, որը չի նկատվում արդեն կավագործության և ապակեգործության մեջ։



Սակայն որոշ ձևերի համար նկատելի են շեղումներ, որոնք կարծես թե սկսում են համարվել նոր դարաշրջանի նոր պահանջներին (դանակներ, նետասլաքներ, աշխատանքային և կենցաղային իրերի մի մասը)։ Այս երևույթը էլ ավելի խորանում է հետագա դարերում՝ մասսայական արտադրության և շուկայական հարաբերությունների բուռն ծաղկման ժամանակ[20]։

---

20 Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.*, հ. Ա, 1958 և հ. Բ, 1963։

# IV. ԽԵՑԵՂԵՆ

Դվինի IX դ. հասարակ խեցեղենի քննությունը կարևոր նշանակություն է ձեռք բերում Հայաստանի միջնադարյան խեցեղենի ուսումնասիրության բնագավառում այն առումով, որ հիշյալ ժամանակաշրջանը անցման օղակ է նախորդ շրջանի և մասսայական արտադրության ժամանակաշրջանի միջև։ Այդ անցման առանձնահատկությունները դիտելու համար անհրաժեշտ է հայացք ձգել նախորդ դարաշրջանների խեցեղենի արտադրության բնույթին։

Խեցեղենի արտադրության տեխնիկան, ինչպես ցույց են տալիս Գառնիից, Արմավիրից, Արտաշատից և այլ հնավայրերից գտնված նյութերը՝ սկսած վաղ հայկական ժամանակաշրջանից մինչև III—IV դդ. գտնվում էր բարձր մակարդակի վրա, չնայած իր բնույթով անընդհատ փոխվում էր։ Սակայն IV դ. սկսած անոթների պատրաստման տեխնիկան նկատելիորեն հետադիմեց, որն արտահայտվում էր անոթների ավելի հասարակ ձևերի պատրաստման մեջ (լայնավիզ սափորներ, ձեռքով պատրաստված կճուճների և այլ անոթների աճ և այլն)։ Վաղ միջնադարը նախորդ շրջանի հետ համեմատած բնորոշ է խեցեղեն անոթների պատրաստման, նրանց ձևերի ավելի մեծ անկումով, որն արտահայտվում էր ցածրորակ կավերի օգտագործմամբ, հասարակ ձևերի ավելացմամբ, ինչպես նաև անոթների արտաքին ձևերի փոփոխմամբ։ Արհեստային արտադրության մեջ կատարվող այս կտրուկ փոփոխությունները կարելի է բացատրել միայն արտադրական հին հարաբերությունների և քաղաքների անկումով, արհեստավորական կենտրոնների տեղափոխմամբ քաղաքներից՝ ավանները, ամրոցները, իսկ հետագայում՝ արաբական գերիշխանությամբ։

Սկսած VIII դ. վերջից նկատվում է զգալի աշխուժացում խեցեղենի արտադրության մեջ։ Առաջին հերթին այն արտահայտվում է ջնարակի մուտքով, որը հեղաշրջում էր խեցեղենի արտադրության բնագավառում։ Նկատելի կերպով երևան է գալիս կավե անոթների ստանդարտիզացիան, որն արդեն մասսայական արտադրության սկիզբ էր նշանակում։ Որոշակի փոփոխություններ են նկատվում անոթների ձևերի մեջ։ Եթե կարասները և կճուճները հիմնականում փոփոխության չեն ենթարկվում, ապա սափորների և քրեղանների ձևերի մեջ այդ անցումները շատ զգալի են։ Գրեթե անհետանում են տանձաձև իրանով և լայն հատակով սափորները, որոնց փոխարինում են կլոր, քիչ երկարավուն իրանով անոթները։ Փոխվում է նաև նրանց կանթերի ձևը։ Եթե նախորդ ժամանակաշրջանի կանթերն իրենց ձևով և միացմամբ որոշ աղերսներ ունեին անտիկ շրջանի խեցեղեն անոթների կանթերի հետ, այստեղ արդեն միացումները բոլորովին այլ ձևով են կատարվում։ Քրեղանների ձևերը հատկապես ցայտուն երևան են գալիս ջնարակած անոթների մեջ։ Բոլորովին



նոր տիպ են օղակավոր նստուկով, թեք բարձր պատերով և դեպի ներս ծալված պսակով թասերը, թեև դրանց նախատիպերը ինչ-որ ձևով հանդես են գալիս Արտաշատի I—II դդ. շերտերում։

Նկատելի փոփոխություն է զգացվում անոթների արտաքին հարդարանքում։ Նյութի հետագա շարադրանքում կաշխատենք ավելի կոնկրետ օրինակների վրա ցույց տալ այդ փոփոխությունները։

Դվինի կենտրոնական թաղամասի 1964—1970 թթ. պեղումների ժամանակ գտնված խեցեղենը խիստ հետաքրքրական է իր տարբեր ձևերով, զարդամոտիվներով։ Այն բաժանվում է երկու մեծ խմբի՝ հասարակ և ջնարակած։ Իր հերթին յուրաքանչյուր խմբի ներսում կատարված են ստորաբաժանումներ, ելնելով անոթների ձևերից և կիրառման հնարավորություններից։ Առանձին տրված են ներմուծված ջնարակած անոթները։

## ՀԱՍԱՐԱԿ ԽԵՑԵՂԵՆ

**Կարասներ.** Հիմնականում դուրս են գալիս (միայն բեկորներով) շինության տնտեսական բաժիններից։ Հարավային մասում՝ a-19 քառակուսում բացվեց մի մեծ կարաս, որն իր արտաքին հարդարանքով և ձևով տարբերվում է մյուսներից։ Կարասը (բերանի տրամագիծը՝ 40 սմ, բարձրությունը՝ մոտ 1,5 մ) պատրաստված է խոշորահատիկ կավից, ունի բավական լավ մշակում, արտաքուստ փայլեցված է։ Իրանի կենտրոնական մասով անցնում է ուռուցիկ եղևնաձև լայն գոտին։ Նման կարասները թվագրվում են VI—VII դդ.։ Դրանց բազմաթիվ նմուշները հայտնի են Դվինի վաղ միջնադարյան շերտերում, մասնավորապես գտնվել են 1966—1967 թթ. միջնաբերդի պեղումների ժամանակ բացված շինությունների շրջանում։ Այդօրինակ կարասներ հանդիպում են Հացավան ամրոցում և թվագրվում են նույն ժամանակաշրջանով[1]։

«Եղևնաձև» ուռուցիկ գոտիով կարասների բեկորներ հայտնաբերվել են Արարատի շրջանի Այգեվան գյուղի մոտ գտնվող բլուրի (ակադ. Բ. Պ. Պիոտրովսկու պեղումները 1971 թ.) վերին շերտերում, որոնք, ամենայն հավանականությամբ, թվագրվում են IV—V դդ., ինչպես նաև Արտաշատից։

Կարասների մյուս բեկորները դուրս են եկել շինության հյուսիսային թևից։ Նրանք իրենց ձևերով և զարդամոտիվներով ավելի վաղ կարասների անմիջական զարգացումն են։ Եղևնաձև զարդն այստեղ ձևափոխվում է, նեղանում կամ ընդհանրապես դառնում է ուռուցիկ գոտի, որի վրայով անցնում են նեղ շեղադիր գծիկներ (աղ. XVIII, 1)։ Որոշակի փոփոխություն է նկատվում կարասների բերանների հարդարման մեջ։ Այստեղ արդեն մենք ունենք պսակներ, որոնց՝ իրանի հետ միացման տեղում առկա են ալիքաձև, ներճկված զարդեր։ Կարասների հաստությունը և ընդհանրապես չափերը նվազում են։ 1968 թ. j-19 քառակուսում հայտնաբերվեց մի կարասի մնացորդներ իր տեղում։ Կարասը պսակ չուներ, այդ մասում այն ավելի ուռուցիկ էր և պատրաստման ժամանակ կրկնակի անգամ հաստացված էր (պարզորոշ նկատվում էր կտրվածքում)։ Կարասի իրանի վերին և ստորին մասերով անցնում էր

[1] Գ. Մ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1963, № 12, էջ 109, նկ. 7։




*Նկ. 15. Սափորներ և մեծ կժերի բեկորներ։*



*շուրջանակի ուռուցիկ զարդերով վերադիր գոտի։ Դժբախտաբար, կարասի մի մասը հանված և ոչնչացված էր դեռևս նախորդ պեղումների շրջանում, որը և հնարավորություն չավեց մոտավորապես վերականգնել նրա չափերը։*

*Կարասների գոյությունը Դվինում պատահականություն չէ։ Հայտնի է, որ Արարատյան դաշտի այդ հատվածում դեռ վաղ ժամանակներից բարձր զարգացում է ապրել խաղողագործությունը, այդ հիմքի վրա՝ գինեգործությունը։ Դվինի մ. թ. ա. IX—VII դդ. շերտերում մենք ունենք 1000 լիտր տարողությամբ կարասներ։ Կարասներում պահել են նաև հացահատիկ և այլ գյուղատնտեսական մթերքներ։*

**Լայնաբերան կժեր.** *Պեղումների ընթացքում գտնվել է 6 հատ (բեկորներով), որից երկուսը՝* Ի-19 *քառակուսում (2305/127, 138), շինության պատերից թափված քարերի տակ։ Հավանաբար, այդ անոթներում պահվել է ձեթ (պահպանվել են մնացորդները)։ Նույն տեղում գտնվել են նաև VIII դ. վերջով և IX դ. սկզբով թվագրվող արաբական դրամներ, որոնցով և թվագրվում է շերտը։ Կժերը պատրաստված են մանրահատիկ դեղնավուն կավից, ունեն ձվաձև, երբեմն կլոր իրան (բարձրութ.՝ 50—55 սմ, հատակի տրամագիծը՝ 12—16 սմ, բերանի բացվածքը՝ 9—12 սմ)։ Վիզը համեմատաբար կարճ է։ Կտրվածքում տափակ կանթերը մի կողմից հենվում են իրանի ուսին, մյուս կողմից՝ անմիջապես միանում պսակին։ Վիզը պատրաստելու ժամանակ ձևավորել է նաև բերանը, որի երկու կողմից մատով սեղմելու հետևանքով առացել են եռատերև տեսք, ավելի շուտ՝ առջևի մասում ծորակաձև հատված է (նկ. 15 աղ. XIX, 1)։ Անմիջապես պսակի տակով անցնում է խորը ակոս, որը պսակին կրկնակի բնույթ է տալիս։ Կժերի մի մասն ունեն զարդեր (սանրի օգնությամբ շրջանաձև և ալիքաձև զարդեր, գերազանցապես իրանի վերին մասում), որոնք սակայն բնորոշ չեն նման անոթներին։ Պետք է ասել, որ տվյալ զարդերը գալիս են դեռևս վաղ միջնադարից, գուցե և՝ անտիկ շրջանից։ Հացավան ամրոցում առաջին դարերով թվագրվող հնագիտական շերտում, ըստ Գ. Տիրացյանի բանավոր հայտարարության, հայտնաբերվում են նման զարդերով խեցեղենի բեկորներ։ Նշենք, որ կժերի այս ձևերը բավական կայուն են եղել և պահպանվել են հետագա դարերում։ Դվինի X—XIII դդ. շերտերում մենք ունենք այս տիպի անոթների ամբողջական օրինակներ, սակայն նրանց մեծ մասի բերանները կլոր են։ Ակոսավոր պսակով կժեր հայտնի են նաև Ոռոտնավանքում, որոնք թվագրվում են X դ. վերջով և XI դ. սկզբով[2]։ Նման տիպի անոթներ հայտնի են նաև անտիկ շրջանում։ Մասսիվ կանթով մի մեծ կժի բերանի մաս է գտնվել 1970 թ. Արտաշատի (Խոր-Վիրապ) հարավային բլրի վրա (պատահական), որը թվագրվում է I—IV դդ.։*

**Սափորներ.** *Հիմնականում դուրս են եկել 1965 թ.* Ց-19 *քառակուսու մեծ հորից։ Իրենց ձևերով դրանք միօրինակ են, բայց միաժամանակ կրկնում են նախորդ շրջանի նույնատիպ անոթների ձևերը։ Սափորները պատրաստված են դեղնավուն մանրահատիկ մաքուր կավից։ Թրծումը կատարվել է համահավասար, որի հետևանքով կտրվածքում թրծման շերտերը շատ թույլ են նշմարվում։ Այս հանգամանքը խոսում է թրծման բարձր որակի մասին։ Անոթների արտաքին մակերեսը հարթ է, մի մասի մոտ այն փայլեցրած տեսք ունի։*

---

[2] Ա. Ա. Քալանթարյան. *Ոռոտնավանքի խեցեղենը, «Լրաբեր» հաս. գիտ., 1967, N 4, տախտ. 2* 2.5'

Սափորների հատակները գերազանցապես հարթ են, ուղիղ կտրված։ Իրանները ուռուցիկ են, քիչ ձգված ստորին և վերին մասերում։ Վզերը համեմատաբար լայն են և կարճ։ Պսակները երկու տիպի են՝ ուղիղ կտրված և ակոսավոր (հաստատված կրկնակի գծով)։ Սափորներից երկուսը հանդես են գալիս եռերկնուկաձև պսակով։ Կանթերը կտրվածքում ձվաձև են։ Դրանք միանում են ուղղակի պսակին, իսկ այնուհետև գրեթե ուղիղ անկյան տակ իջնում են և մյուս ծայրով հենվում իրանի վերին մասում։

Սափորները պատրաստված են մեծ վարպետությամբ։ Անոթների տարբեր մասերի հարաբերությունները նույնն է, որը ցույց է տալիս նրանց մեկ արհեստավորի կամ մեկ արհեստանոցի պատկանելու մասին։ Պեղումների ժամանակ գտնվել է մոտ երկու տասնյակ ամբողջական սափորներ (նկ. $15_{3-5}$, $16_{1-2}$ $21_2$, աղ. XIX, 2, XX, XXI, 1, 2)։ Միաժամանակ հայտնաբերվել են մոտ 100 սափորի պրոֆիլավորված մասեր (պսակներ, վզեր, հատակներ, կանթեր և այլն)[3]։ Չափումների հետևանքով հետևյալ պատկերը պարզվեց։ Պսակի տրամագծի հարաբերությունը իրանի ամենալայն մասի տրամագծի հետ՝ կազմում է 1։2,5, պսակի տրամագծի հարաբերությունը հատակի տրամագծի հետ՝ 1։1,3։ Շատ կարևոր է սափորի ողջ բարձրության հարաբերությունը վզի բարձրության հետ՝ 1։0,38։ Ստացված թվական տվյալները կարևոր են անոթների ձևերը վերականգնելու համար առանձին բեկորներով։ Այս ձևով կարելի է որոշակի նշել IX դ. անոթների բնութագրական կողմերը և թվագրության հարցերում պակաս սխալներ թույլ տալ։

Սափորները քիչ են զարդարված։ Զարդերը հիմնականում արված են սանրի օգնությամբ, որն անցնում է իրանի վերին մասով, կանթի վզի հետ միացման տեղից քիչ ներքև։ Զարդերի մի մասը շրջանաձև 3—4 շարք ակոսներ են։ Վզերը զուրկ են նախշազարդումից, եթե չհաշվենք այն ակոսները, որոնք արվել են անոթի վիզը դուրգի պտտելու ժամանակ ձևավորելիս (բարձրութ՝. 29—32 սմ, հատակի տրամագիծը՝ 9—11,5 սմ, բերանի տրամագիծը՝ 7—8 սմ)։ 2305/94 սափորը (թերի է) մշակմամբ և առանձին մանրամասներով տարբերվում է IX դ. համար բնորոշ ձևերից։ Անոթը մոխրագույն է, արտաքուստ՝ փայլեցրած։ Համեմատաբար լայն և կարճ վիզն ավարտվում է սեղմված բերանով, որի վրա դրված են երեք կոճականման զարդեր (նկ. $16_5$)։ Կանթը միանում է վզի տակ և որոշ չափով ոճավորված է (վերին հորիզոնական մասում ունի ուղղահայաց բարձրացող ելուստ)։ Սափորի իրանի վերին և ստորին մասերով անցնում են երեք զույգ շուրջանակի գնացող ակոսներ. Նման արտաքին մշակում ունեցող անոթներ Դվինի կենտրոնական թաղամասում հայտնի են նախորդ տարիների պեղումներից (խաղողազարդով փոքր կարասի բեկորը և թվագրվում են VII—VIII դդ.։ Թվում է, որ տվյալ սափորը ևս կարող է նույն ժամանակաշրջանին պատկանել (գտնվել է Ե-19 քառակուսում, շինության պատի տակ)։

Սափորների այս խումբը իր արտաքին ձևերով և մշակմամբ բնորոշ է եղել Անդրկովկասի խեցեղեն արտադրանքում։ Նույնանուն սափորների մենք

---

[3] Բեկորների մի մասը պահպանվում է Դվինի հնագիտական բազայում, իսկ մնացածը՝ մանրակրկիտ չափումներից հետո, հեռացվել է, ավելորդ տեխնիկական դժվարություններ չստեղծելու համար։






Նկ. 16. Սափորներ շինության հորերից։

հանդիպում ենք Օրեն-Կալայում[4] և Թբիլիսում[5], որտեղ ևս այդ անոթները թվագրվում են IX դարով։

Սափորների մեջ աչքի են ընկնում երկուսը, որոնք իրենց ձևով և զարդանախշերով տարբերվում են ընդհանուր խմբից։ Նրանցից մեկը (2326/76) ունի երեքնուկաձև պսակ, որը թերի է. կանթը կոտրված է։ Իրանն ավելի ձգված է և սլացիկ։ Վիզն իրանին միանալու տեղում առկա է շուրջանակի անցնող թմբիկ։ Իրանի ամբողջ մակերեսը ծածկված է շրջանաձև անցնող խիտ ակոսներով, որի վերին մասում արված է ալիքաձև դեպի ներքև ձգվող զարդ։ Սափորը պատրաստված է դեղնավուն մանրահատիկ կավից և թրծված է մեծ հմտությամբ։ Չափերն են. բարձրութ.՝ 39 սմ, հատակի տրամագիծը՝ 12 սմ, իրանի տրամագիծը՝ 20 սմ (նկ. $16_3$, աղ. XXI, 4)։

Մյուսը՝ փոքրիկ, դեղնավուն, նուրբ պատրաստված սափոր է (գտնվում է Դվինի հնագիտական բազայում), ունի նեղ, երկար վիզ, որն ավարտվում է դեպի դուրս փռվող պսակով (աղ. XXI, 3)։ Սափորի իրանը խորը լայն ակոսով բաժանված է երկու մասի։ Վերին մասում մեծ վարպետությամբ շուրջանակի արված են ալիքավոր և զիգզագաձև զարդեր, իսկ ստորին մասի կեսը զարդարված է շրջանաձև անցնող նեղ ակոսներով (շուրջ երեք տասնյակ)։

Պետք է ասել, որ նման զարդամոտիվը բնորոշ չի եղել հայկական միջնադարյան խեցեղենի զարդարմանը։ Այն գրեթե չի հանդիպում նաև ավելի վաղ շրջանում։ Նման զարդով սափորներ հանդիպում են Վրաստանում, առավելապես միջնադարյան շերտերում։

**Կճուճներ.** Պեղումների ընթացքում գտնված կճուճների թիվը շուրջ երեք տասնյակի է հասնում։ Քիչ լինելով հանդերձ այդ անոթները ստորաբաժանվում են մի շարք խմբերի և իրենց ձևերով, պատրաստման եղանակով, հարդարումով, հատկապես կանթերի ձևերով լուրջ հետաքրքրություն են ներկայացնում և որոշակի հարցերի պատասխան տալիս։ Նախ, շատ կարևոր է կճուճների ուղղակի համեմատությունը նախորդ շրջանի նյութերի հետ և IX դ. ձևերի համար բնորոշ առանձնահատկությունների վերհանումը։ Պետք է ասել, որ այս հարցերը լուծվում են տվյալ նյութի սահմաններում և բացահայտվում են խեցեղենի արտադրության հետ կապված առանձին հարցեր նրա հատվածներում։ Նախքան այս հարցերի առաջքաշումը նպատակահարմար է մանրամասն վերլուծության ենթարկել կճուճների տիպերը, որոնք բացառապես IX դ. են թվագրվում, եթե չհաշվենք մեկ-երկու օրինակ, որոնք շերտագրությամբ գալիս են VIII դ. 2-րդ կեսից։

Կենտրոնական թաղամասում հայտնաբերված կճուճները բաժանվում են երկու մեծ խմբի՝ կանթով և անկանթ։ Այս ստորաբաժանումն ինքնին իրեն արդարացնում է, քանի որ կանթերն անկախ անոթների չափերից և ձևերից միատիպ են, իսկ անկանթ անոթների մանրամասների ձևավորումը կատարված է միևնույն սկզբունքով։

Կանթով կճուճներն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ կիսակլոր կանթերով անոթներ և ձևավոր՝ ալիքաձև ու ելուստաձև կանթերով (ունկերով) անոթներ։

[4] **А. Л. Якобсон,** Археологические исследования на городище Орен-Кала в 1957 г., МИА № 133, М.—Л., 1965, стр. 13, рис. 4.

[5] **И. Гзелишвили, О. Ткешелашвили,** Памятники материальной культуры г. Тбилиси (на груз. языке), Тбилиси, 1961, табл. 19.






Նկ. 17. Կճուճներ կիսակլոր կանթերով։

**Կիսակլոր կանթերով** կճուճները ժողովածուի մեջ ընդամենը չորսն են։ Նման կանթերով անոթների բեկորներ շատ են հայտնաբերվել (միայն 1965 թ. Ց-19 քառակուսու մեծ հորում շուրջ երկու տասնյակ). ընտրովի կարգով վերցված է մի քանիսը, իսկ մնացածները կրկնօրինակներ էին և հեռացել են գեղարվեստական և հնագիտական արժեք չունեցող այլ նյութերի հետ միասին։

Այս տիպի անոթների մեջ խիստ ուշագրավ է կարմրավուն խեցի ունեցող, ձեռքով պատրաստված կճուճը։ Այն ունի ուռուցիկ իրան, համեմատաբար նեղ, կարճ վիզ և բերան, պսակը նեղ է և քիչ դուրս փռված։ Հատակը հարթ է և ավելի լայն, քան բերանը։ Կավը խոշորահատիկ է, իսկ թրծումը կատարված է անբավարար, որը երևում է կոտրվածքում։ Չնայած տեխնիկական որոշ բացասական կողմերի առկայության, անոթը կատարյալ է հարդարանքով և չափերի համեմատականությամբ (պահպանվել է կճուճի մի կեսը ուղղահայաց առանցքով)։ Կանթերը (մեկ զույգ) կտրվածքում տափակ են (լայնությունը՝ 3 սմ), վերին մասով հենվում են անոթի ուսին, անմիջապես վզի միացման տեղում, իսկ ստորին մասով՝ անոթի իրանի կենտրոնից քիչ ներքև։ Ուսի վրայով շուրջանակի անցնում է լայն գոտի՝ երկրաչափական զարդով։ Ինքը՝ զարդը փորագիր է և կազմված է իրար հատող շեղ գծերից, որի հետևանքով առաջացել են շեղանկյուններ և եռանկյուններ։ Ամբողջ զարդը վերին և ստորին կողմերից վերցված է ակոսի մեջ, որի վրայով գնում են փորագիր ստորակետանման փոքր գծիկներ։ Կանթի վերին մասի միացման աջ կողմում արված է ներճկված կլոր փոսիկ, որը կարծես թե կապ չունի ընդհանուր հարդարանքի հետ։ Երկրորդ կանթը բացակայում է։ Չափերն են. բարձրութ՝. 26,5 սմ, հատակի տրամագիծը՝ 15 սմ, բերանի տրամագիծը՝ 13 սմ, (նկ. $17_1$, աղ. XIX, 3)։

Նույն խմբի մեջ է մտնում մի այլ կճուճ (պահպանվել է 1/3 չափով, հորիզոնական առանցքով դեպի վեր)։ Նախորդի համեմատությամբ այն պատրաստված է դուրգի վրա, վիզը կարճ է, իսկ բերանը լայն (20,5 սմ)։ Պսակը շատ լավ ձևավորված է։ Այն ակոսով բաժանված է երկու մասի՝ վերին մասը հարթ է, իսկ ստորինը հղման միջոցով ալիքաձև տեսք է ստացել։ Կանթն աչքի է ընկնում իր գեղարվեստական ձևավորմամբ։ Այստեղ այն վերին մասով հենվում է պսակին։ Կանթն իր վրա երկու կողմից կրում է ակոսներ։ Իրանի հետ միացման տեղում կանթի ստորին մասից տարածվում են վերադիր ալիքաձև հավելվածներ, որոնք կանթին զոոմորֆ տեսք են տալիս։ Կճուճը ներկված է կարմիր գույնով, բայց ներկը հավասարաչափ չի տարածված։ Ընդհանրապես գունազարդման անտիկ ավանդները շատ աննշան ազդեցություն ունեցան հաջորդ ժամանակաշրջանների խեցեղենի արտադրության վրա։ Վաղ միջնադարում այն գրեթե չի հանդիպում։ Ավելի ուշ՝ անոթները ներկվում են միայն կարմիր գույնով՝ կամ ամբողջությամբ, կամ առանձին հատվածներով։ Կարելի է նշել, որ IX դ., խեցեղենի մասսայական արտադրության սկզբնավորման նախնական էտապում ներկը որևէ էական դեր չի կատարել անոթների արտաքին ձևավորման մեջ և մենք առայժմ այդ շրջանից ունենք շատ քիչ նմուշներ։

Կճուճի իրանի վերին մասով շուրջանակի գնում է նույն զարդագոտին, որը նկարագրվեց նախորդ անոթի կապակցությամբ։ Սակայն այստեղ զարդը կատարված է ոչ թե փորագրման եղանակով, այլ փայլեցումով (նկ. $17_2$)։

Այս երկու, գրեթե միանման անոթների քննությունը (պահպանվում են



Դվինի հնագիտական բազայում) հիմք է տալիս եզրակացնելու, որ զարդարման այս ձևը միջնադարում երևան է գալիս IX դ. և կիրառվել է միայն կճուճների հարդարման վրա։ Ամբողջ վաղ միջնադարում նման զարդեր չեն հանդիպում[6]։ Այդ զարդը չի հանդիպում նաև հետագա դարերում, որն, ըստ երևույթին, կապվում է նրա սխեմատիկ բնույթի հետ և խեցեղենի արտադրության մեջ չի կիրառվել։ Հետևապես կարելի է ենթադրել, որ նման զարդամոտիվը բնորոշ է IX—X դարերին։

Հետաքրքիր են նաև փայլեցումով կատարված զարդերը։ Այս տեխնիկան հայտնի է շատ հնուց։ Միջին դարերում այն տարածված էր հատկապես վաղ ֆեոդալական ժամանակաշրջանում։ Այսպիսի զարդերով անոթներ հայտնի են Գառնիի V—VI դդ., Դվինի V—VIII դդ. շերտերում (տե՛ս 1964 թ. պեղումների 2305/62 ամբողջական քրեղանը, որը հայտնաբերվել է Դվինի միջնաբերդի արևելյան լանջին, ներքուստ ամբողջովին պատած է փայլեցրած գծերով, որոնք արված են կարմիր գույնի ֆոնի վրա)։ Նման տիպի անոթներ հայտնի են նաև կենտրոնական թաղամասի ժողովածուում։ Սակայն IX—X դդ. այդ զարդանախշը ընդհանրապես դուրս է գալիս կիրառությունից։ Նման երևույթը մենք բացատրում ենք նաև այն հանգամանքով, որ IX—X դդ. արդեն խեցեղեն անոթների զարդարման մեջ լայն տարածում էր ստանում դաճը, որն ավելի ճոխ էր գեղարվեստական տեսակետից և հեշտ՝ աշխատանքային առումով։

Կիսակլոր կանթերով կճուճների գրեթե մեծամասնության մոտ կանթերը անմիջապես միանում են բերանի պսակին։ Կանթերը զուրկ են նախշազարդումից։ Նրանց վրա արվում էին ակոսներ երկու կողմից, իսկ առանձին նմուշների վրա վերին մասում սուր կլոր գործիքով արված են զույգ շրջաններ։

Ուշադրության է արժանի 2305/96 կճուճի բեկորը շրթի և վզի պահպանված մասով։ Կճուճը պատրաստված է ձեռքով, այն բաց կարմրավուն է և շատ վատ է թրծված։ Կճուճի բերանը նեղ է (9 սմ) և ստորին պահպանված մասից երևում է, որ ունեցել է նեղ, երկար իրան։ Անոթն ունի զույգ՝ կլոր հատվածքով փոքր կանթեր, որոնք վերին մասում միացած են պսակին, իսկ վզի կենտրոնական մասում ունի երկու ելուստաձև կանթ, որոնք, ըստ երևույթին, դեկորատիվ նշանակություն ունեն։ Կենտրոնական թաղամասում հայտնաբերված նյութերի մեջ սա միակ դեպքն է, երբ երկու տիպի կանթեր հանդես են գալիս միասին (նկ. $17_3$)։

Կճուճների ձևերի ընդհանուր զարգացման դիտելը մեկ հարյուրամյա ժամանակահատվածում խիստ դժվարություններ է ներկայացնում, քանի որ հասարակ խեցեղենի արտադրության մեջ անոթների ձևերը պահպանողական են և կարող են շարունակվել դարեր շարունակ։ Սակայն կան առանձին մանրամասներ, որոնցով կարելի է դիտել այս կամ այն ժամանակահատվածում բնորոշ ձևերի առաջացումը, մյուս ձևերին զուգահեռ։ Քննարկվող նյութերում, այդ առումով մեծ տեղ է հատկացվում կանթերին, նրանց զարգացմանը։ Պետք է ասել, որ կանթերի ձևերը բխելով մեկը մյուսից, հանդես են գալիս միաժամանակ և ժամանակագրական տեսակետից չեն անջատվում։

**Ձևավոր կանթերով** կճուճները հանդես են գալիս չորս խմբով, ելնելով առանձին մասերի հարդարումից։

---

[6] Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970։

*Առաջին խմբի համար բնորոշ է 2326/83 անոթը։ Այն կարմրավուն է, ձեռքով պատրաստված և վատ թրծված, կճուճը զուրկ է նախշերից։ Հատակը հարթ է, իսկ բերանը խիստ լայն (բարձրութ.՝ 16,8 սմ, հատակի տրամագիծը՝ 10,5 սմ, բերանի տրամագիծը՝ 17,1 սմ)։ Կճուճի իրանը ուռուցիկ է, վիզ գրեթե չունի, պսակը կլոր է և մոտ 60°-ի տակ դուրս թեքված։ Կճուճն ունի չորս կանթ, երկուսը ուսի վրա (մեծ) և երկուսը՝ իրանի կենտրոնում (փոքր)։ Կանթերը կիսակլոր են, սակայն ամրացված են հորիզոնական դիրքով (նկ. $18_1$)։ Կանթի այս ձևերը շատ են հանդիպում հետագայում, հատկապես խոհանոցային անոթների և մեծ կաթսաների վրա։ Որպես պարտադիր կանոն այս տիպի անոթները խիստ մրապատ են։ Դրանք օգտագործվել են խոհանոցային նպատակների համար և անոթները դրվում էին օջախի վրա։ Նման կանթերը քիչ ավելի այլ մշակմամբ և ժամանակաշրջանով ավելի ուշ (X—XI դդ.) հանդիպում են Սյունիքում[7], Լեռնային Ղարաբաղի հուշարձաններում[8], Օրեն-Կալայում[9] և այլուր։ Դվինի միջնաբերդում ևս այդ տիպի կանթով կճուճներ հայտնի են, բայց քիչ քանակությամբ։ Կանթերի այս տիպը, բացի կիրառական տեսակետից, հետաքրքիր է նրանով, որ սրանք մի տեսակ անցում են կիսակլոր կանթից դեպի ձևավորը, եռատաձև կանթերը։*

*Ականջաձև կանթերով (ունկերով) կճուճները հիմնականում երկու տիպի են՝ դուրգի վրա պատրաստված և ձեռքով։ Դուրգի վրա պատրաստված անոթները աչքի են ընկնում իրենց լավ մշակումով, կավի համեմատաբար լավ որակով։ Չափերն ավելի համաչափ են, իսկ վզի, բերանի, և պսակի ձևավորումը՝ կատարյալ։ Ձեռքով պատրաստված կճուճների արտաքին մակերեսներն անհարթ են, հատակները՝ կպցրած, բերանները թերի մշակված։ Երկու տիպերն էլ կարմրավուն կավից են, խիստ մրապատ (կիրառական տեսակետից այս անոթներն առնչվում են առաջին խմբի հետ)։ Անոթները լայնաբերան են, ուռուցիկ իրանով և հարթ հատակով, (նկ. $18_{2,5}$, $19_6$, աղ. XIX, 5)։ Այս տիպի կճուճների մոտ հետաքրքիր օրինաչափություն է նկատվում՝ բերանների տրամագծերի և անոթների բարձրությունների համապատասխանություն (բարձրութ.՝ 14—22,5 սմ, հատակի տրամագիծը՝ 10,5—12 սմ, բերանի տրամագիծը՝ 13,5—22,5 սմ)։*

*Կճուճներն ունեն պրիմիտիվ զարդեր, որոնք շուրջանակի գնացող ակոսներն են ալիքաձև մի գծանի և, համեմատաբար շատ տարածված, փայտե սուր ծայրով սեղմված զարդեր, որոնք գերազանցապես անոթի ուսի վրայով են գնում։ Կճուճների մեկի պսակի տակով սեղմումով արված ալիքաձև զարդ է գնում (2449/49) (նկ. $18_{3,4}$, $19_1$, աղ. XXII, 1)։*

*Կճուճների ունկավոր կանթերը դրված են իրանի ուռուցիկ մասում, ամրացված են հորիզոնական դիրքով և սեղմված են դեպի վեր։ Կանթերը ըստ երևույթին առաջացել են հորիզոնական գծով ամրացված կիսակլոր կանթերի անմիջական ազդեցության տակ։ Նման կանթերով անոթները հանդիպում են գերազանցապես IX—X դդ. շերտերում ինչպես Դվինում, այնպես և Անդրկովկասի այլ հուշարձաններում։ Այս տիպի կանթերը Դվինում երևան են գալիս հավանաբար VII—VIII դդ.[10], և բավական լայն տարածում են ստանում IX դ.։*

---

[7] Ա. Քալանթարյան, *Որոտնավանքի խեցեղենը*, տախտ. III, 1, 3։

[8] *Ցուցադրված է Ստեփանակերտի գավառագիտական թանգարանում։*

[9] **Г. М. Ахмедов,** Неполивная керамика Орен-Кала, IX-XIII вв., МИА № 67.

[10] Ա. Քալանթարյան, *Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ.*, աղ. XXVI, 1, 2, 4։






Նկ. 18. Կճուճներ հորիզոնական կանթերով։



Նկ. 19. Կճուճներ հորիզոնական կանթերով:



Երրորդ տիպի կճուճներն իրենց արտաքին տեսքով նման են նախորդ անոթներին (բարձրութ.՝ 12,5—14 սմ, հատակի տրամագիծը՝ 9—10,5 սմ, բերանի տրամագիծը՝ 14—15 սմ), տարբերվում են միայն կանթերի ձևերով։ Այս խմբի համար բնորոշ են 2326/82 և 2449/51 կճուճները։ Երկուսն էլ պատրաստված են ձեռքով, կարմրավուն խոշորահատիկ կավից և ունեն անբավարար թրծվածք։ Կճուճներն ունեն հորիզոնական դուրս ցցված պսակ և շատ կարճ վիզ։ Զարդերը պարզ են և կազմված են ուսի վրայով գնացող և վզի մասում առկա շուրջանակի ակոսներից՝ երկուսից չորս զույգ։ Կանթերն ալիքաձև են և ականջավոր կանթերի ուղղակի հետևանք (նկ. $19_{2,4}$, աղ. XX, 2)։ Նման կանթերով կճուճներ հանդիպում են Թբիլիսիի միջնադարյան շերտերում[11]։

Բավական սովոր են հորիզոնական ու ուղղահայաց դիրքով եղջյուրաձև կանթերով կճուճները։ Նրանք իրենց ձևերով բազմազան են և տարբեր կիրառական նշանակությամբ են հանդես գալիս։ Ի տարբերություն նախորդ տիպերի, այս խմբի մեջ մտնող անոթներն ունեն կատարյալ մշակում, կավը մանրահատիկ է և գերազանցապես դեղնավուն։ Անոթները պատրաստված են դուրգի վրա։

Եղջյուրաձև կանթերով կճուճների մեջ ուշագրավ է 2326/43 անոթը (նկ. $22_4$, աղ. XXIV, 6)։ Այն համեմատաբար փոքր է (բարձր.՝ 9 սմ, հատակի տրամ.՝ 6,6 սմ, բերանի տրամ.՝ 10,2 սմ), լայն բերանով և քիչ թեքությամբ իջնող պատերով, որը իրանի ստորին մասում կտրուկ անցում է կատարում դեպի հատակը։ Ունի նեղ, քիչ դեպի վեր բարձրացող պսակ։ Իրանի կենտրոնով անցնում է ալիքաձև զարդ, որը վերցված է երկու զույգ շուրջանակի գնացող ակոսների մեջ։ Կճուճն ունի չորս եղջյուրաձև կանթեր՝ երկուսը հորիզոնական, իսկ երկուսը ուղղահայաց դիրքով, որոնք սիմետրիկ դասավորված են իրանի կենտրոնական մասում։ Պետք է ասել, որ նման տիպի կճուճներ հայտնի են Մերձավոր Արևելքում՝ հատկապես Սամառայում, ուր նույնպես թվագրվում են IX դարով[12]։ Նույն տիպի անոթներ, ըստ երևույթին, արտադրվել են նաև Միջին Ասիայում։ Եղջյուրաձև հորիզոնական կանթով, հարթ հատակով ուռուցիկ անոթներ հայտնի են Մերվում, որոնք նույնպես թվագրվում են IX դարով[13]։ Նման ձևերի լայն տարածումը խոսում է նրանց թվագրման կենտրոնական մասին։ Նույնատիպ կանթերով կճուճներ Դվինի կենտրոնական թաղամասում հայտնի են և մի քանի օրինակով։ 1965 թ. g-19 քառակուսու մեծ հորում հայտնաբերվեցին մի քանի բեկորներ, որոնց մեջ իր զարդարումով աչքի է ընկնում դեղնավուն մանրահատիկ կավից պատրաստած մի անոթի կեսը (անհամար, պահպանվում է Դվինի հնագիտական բազայում)։ Կճուճն ունի քիչ ուռուցիկ իրան, մոտ 18 սմ բարձրություն։ Այստեղ ևս հորիզոնական և ուղղահայաց եղջյուրաձև կանթերը զուգորդում են մեկը մյուսին, միայն այն տարբերությամբ, որ կանթերը դրված են իրանի վերին մասում։ Կանթերի այս դիրքը բնորոշ է Սամառայի խեցեղենին։ Անոթի մակերեսը փայլեցված է և կրում է մի քանի զույգ ակոսավոր շուրջանակի գնա-

[11] **И. Гзелишвили, О. Ткешелашвили,** ук. соч., табл. 28 182.

[12] **F. Sarre,** Die Ausgrabungen von Samarra. Band II. Die Keramik von Samarra Berlin. 1925, էջ 21, նկ. 65։

[13] **С. Б. Лунина,** Гончарное производство в Мерве X—начала XIII вв., ЮТАКЭ т. XI, Ашхабад, 1962, стр. 227, рис. 7.

ցող զարդեր։ Կճուճն ունի փոքրիկ, դուրս թեքված, տափակ պսակ։ Պսակի վերին մասում արված է ալիքաձև զարդ, որն ավելի քան հարստացնում է անոթի տեսքը (նկ. $20_1$, աղ. XXIV 3)։

Հետաքրքիր է նշել, որ ելուստաձև կանթ ունեցող անոթները պարտադիր իրենց վրա կրում են այլ տիպի կանթեր, որոնք զուտ դեկորատիվ նշանակություն ունեն։ Այսպես, անոթներից մեկը (պահպանվել է վերին մասը, գտնըվում է Դվինի հնագիտական բազայում), իր ձևով և կավի որակով նման է նախորդ անոթին, ունի ելուստաձև կանթ, որն անմիջապես դրված է պսակի վրա (նկ. $20_3$)։ Անոթն ունի երկու դեկորատիվ կանթեր, որոնք անմիջապես պսակի տակ են։ Կանթերը վերադիր են, մատով սեղմված և ունեն ալիքաձև տեսք։ Նույնատիպ կանթերով մեկ այլ անոթ, միաժամանակ ունի երկու կողմից ուռուցիկ գլանաձև ելուստներ։ Վերջին երեք անոթներն իրենց մշակմամբ, գույնով, կանթերի ձևով և զարդերով այնքան մոտ են կանգնած միմյանց, որ նրանց միևնույն արհեստանոցի արտադրանքին վերագրելը տարակարծություններ չի կարող առաջացնել։ Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նրանք գտնվել են միևնույն տեղից և ժամանակագրական տեսակետից թվագրվում են IX դ.։

Ելուստաձև հորիզոնական և ուղղահայաց դիրքով կանթեր Դվինում հայտնի են ինչպես վաղ միջնադարում, այնպես և ավելի ուշ՝ XII—XIII դդ. նյութերի մեջ[14]։ Սակայն ավելի ուշ շրջանում դրանք սակավ են հանդիպում։ Պետք է ասել, որ XII—XIII դդ. նման կանթով անոթներն իրենց վրա կրում են բրոնզե կաթսաների ձևերի անմիջական ազդեցությունը։ Այդ ավանդույթը հավանաբար գալիս է շատ վաղ ժամանակներից։

Անոթների երկրորդ մեծ խումբը ներկայացված է անկանթ կճուճներով։ Դրանք տարբեր են ինչպես իրենց չափերով, այնպես և զարդամոտիվներով։ Այս տարբերություններով հանդերձ անոթներն ունեն որոշ ընդհանրություններ, մանավորապես պսակների ձևավորման ուղղությամբ։ Քննարկվող անկանթ կճուճների երեքի պսակները եռատիճան են և իրենց վրա կրում են փորագիր զարդեր։ Պետք է նշել, որ նման պսակներով անոթների բեկորներ շատ են հանդիպում կենտրոնական թաղամասում, հատկապես IX դ. շերտում։

1968 թ. Ժ-21 քառակուսում, 2,0 մ խորության վրա հայտնաբերվեց մի մեծ կճուճ (բարձ.՝ 33 սմ, բերանի տրամ.՝ 24 սմ, հատակի տրամ.՝ 25 սմ), ուղղահայաց կանգնած վիճակում, կիսով չափ թաղված գետնի մեջ, բերանը ծածկված ողորկ մարմարի տձև սալով (նկ. $21_1$, աղ. XXIII)։ Կճուճը պատրաստված է դեղնավուն կավից, լավ մշակված է։ Ունի կլոր իրան, հարթ հատակ, համեմատաբար երկար վիզ և լայն բերան։ Պսակը միջին, ուռուցիկ մասում ունի փայտով սեղմված զարդեր։ Վզի և իրանի միացման տեղում անցնում է ակոսավոր զարդ, իսկ իրանի վերին մասում շուրջանակի անցնում է սանրի օգնությամբ արված նեղ ալիքաձև զարդամոտիվ, որը վերցված է երկու կողմից երեք շարք ակոսների մեջ։ Կճուճն օգտագործվել է մթերք պահելու համար։

Նույն տիպի պսակով դեղնավուն մի կճուճ հայտնի է 1964 թ. Ե-19 քառակուսու հորից (2449/52)։ Այստեղ իրանը ավելի երկարավուն է, ունի հազիվ նշմարվող լայն վիզ, բերանը ավելի լայն է, հատակը հարթ (բարձրութ.՝

[14] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., նկ. 174։





Նկ. 20. Կճուճներ անկանթ և հորիզոնական ու ուղղահայաց ունկերով




Նկ. 21. Անկանթ կճուճներ և սափոր։




Նկ. 22. Խոշոր ման թրեղաններ և փոքր կճուճների բնորոշ տիպեր։

22,5 սմ, բերանի տրամ.՝ 16,5 սմ, հատակի տրամ.՝ 10,5 սմ։ Կճուճն իր զարդով պատրաստման տեխնիկայով, ինչպես նաև չափերի համամասնությամբ համապատասխանում է նախորդի հետ և ամենայն հավանականությամբ միևնույն արհեստանոցի կամ վարպետի արտադրանք է։ Երկու անոթներն էլ թվագրվում են IX դարով (նկ. $20_2$, աղ. XIX, 4)։

1964 թ. հ-19 քառակուսում VIII—IX դդ. շերտում հայտնաբերվեց նրբախեցի մի կճուճի բեկորներ։ Կճուճի արտաքին մակերեսը փայլեցրած է։ Խեցին շատ ամուր է, որը խոսում է լավ թրծման մասին։ Անոթն ունի քիչ ուռուցիկ իրան, կարճ, լայն վիզ։ Պսակը հետ է ծալված և սեղմումով ալիքաձև տեսք է ստացել։ Իրանի և վզի միացման տեղում առկա է փոքր, ուռուցիկ, շրջանաձև գնացող զարդ։ Նույն տեղում գտնվեց նաև մի ուրիշ կճուճի հատակի բեկոր իրանի մի մասով։ Այն ևս պատած է կարմիր ներկով և փայլեցված։ Սակայն այստեղ առկա է փայլեցումով կատարված զարդը, որն անոթին առանձին շքեղություն է տալիս։

Անկանթ կճուճներից մեկը իր արտաքին տեսքով շատ նման է ունկավոր կանթերով մեծ կճուճների ձևերին։ Վերջինս իր վրա է կրում տարբեր զարդեր՝ ակոսներ, ալիքներ, փայտով փորագրված զարդեր։ Անոթը կարմրախեցի է, կավը խոշորահատիկ (նկ. $20_4$)։

1967 թ. Ե-20 քառակուսու հորից դուրս եկավ մի փոքրիկ կճուճ (նկ. $22_2$), որը դեղնավուն կավից է պատրաստված։ Այն ունի համեմատաբար լայն բերան, փոքր դուրս եկած պսակ, հարթ հատակ (բարձր.՝ 9 սմ, բերանի տրամ.՝ 6 սմ, հատակի տրամ.՝ 4,5 սմ)։

**Քրեղաններ.** Կենտրոնական թաղամասում գտնված քրեղանները գերազանցապես խորն են, հաստապատ և ունեն հարթ հատակ։ Այս ձևը գալիս է դեռևս նախորդ շրջանից և բավական լայն տարածում է ստանում X—XIII դդ. ինչպես Դվինում, այնպես և հայկական այլ հնավայրերում։ Քրեղանները պատրաստված են դուրգի վրա, ունեն բավական լավ մշակում, պսակները լայն են և դեպի հետ ծալված (2326/81. քրեղանի պսակը բացակայում է, անոթի պատերը կորությամբ վեր բարձրանալով կտրուկ ներս են թեքվում։ Չափերն են. բարձրութ.՝ 9—13,5 սմ, հատակի տրամագիծը՝ 10,5—13,5 սմ, բերանի տրամագիծը՝ 22,0—36,0 սմ, (նկ. $22_{1,3,5}$ աղ. XXIV, 1, 2, 4, 5)։ Այս խմբի մեջ են մտնում նաև կանթավոր անոթները, որոնցից շատ բնորոշ է 2305/119 քրեղանը (նկ. $22_6$)։ Արտաքուստ, վերին մասում անոթն ունի 3—4 շարք ակոսավոր ներճկված զարդեր։ Կանթերը կտրվածքում կլոր են և անմիջապես միանում են փոքր և ուղիղ կտրված պսակին։ Հատակը նույնպես հարթ է (բարձրութ.՝ 22,0 սմ, բերանի տրամագիծը՝ 12,0 սմ, հատակի տրամագիծը՝ 10,0 սմ)։ Քրեղանների այս օրինակները գտնվել են շինության հատակի վրա և թվագրվում են VIII—IX դդ.։ Նման քրեղանների բեկորներ մեծ քանակությամբ հանդիպում են պեղվող ողջ հատվածում։

Նստուկով, բարակապատ քրեղանների բեկորներ գրեթե չեն հանդիպում։ Սակայն նույն տիպի, բայց ջնարակած անոթների առկայությունը խոսում է այն մասին, որ նրանք ևս պետք է լայն տարածում ունենային այդ դարաշրջանում։

**Ծորակով անոթներ.** Դվինի միջնաբերդում ծորակով անոթներ, մասնավորապես սափորներ գտնվել են մեծ քանակությամբ։ Կենտրոնական թաղամասում դրանք հայտնի են միայն 1965 թ. պեղումներից, այն էլ քիչ քանակությամբ։ Անոթներից մեկը գտնվեց Ց-19 քառակուսու մեծ հորում։ Այն կճուճ



է (2326/69), լայն բերանով և երկար վզով։ Կանթերն անոթի համեմատությամբ մեծ են և ստորին մասով միանում են կճուճի ուռուցիկ իրանին։ Իրանի կենտրոնում կա ծորակ, որն անփույթ միացվել է անոթին (ծայրը կոտրված է)։ Կճուճը պատրաստված է ձեռքով, դեղնավուն կավից։ Չափերն են. բարձրութ.՝ 13,0 սմ, բերանի տրամագիծը՝ 9,0 սմ, հատակի տրամագիծը՝ 7,5 սմ (նկ. $23_6$, աղ. XXVI, 2)։ Երկու այլ բեկորներ (պահպանվում են Դվինի հնագիտական բազայում), պսակներ են և պատկանում են կաթնամանների (նկ. $23_{3,5}$ աղ. XXVI, 1)։ Դրանք ունեն փոքրիկ ծորակներ, որոնք արված են անմիջապես պսակի տակ։ Անոթներից մեկը պսակի վրա ունի հորիզոնական տափակ կանթ։ Ուշագրավ է ծորակով սափորի բեկորը գտնված նույն տեղից։ Այն ունի զույգ, իրար կպած ծորակներ, որոնց երկու կողմերից, իրենց հիմքում արված են կռճականման զարդեր (նկ. $24_1$, աղ. XXIV, 3)։ Սափորը պատրաստված է մանրահատիկ դեղնավուն կավից։ Զույգ ծորակներով սափորներ Դվինում չեն հայտնաբերվել և այդ առայժմ միակ օրինակն է։

**Խփեր և կափարիչներ.** Շինության տնտեսական բաժիններից, մասնավորապես Ց-19 քառակուսու հորից դուրս են եկել մեծ քանակությամբ խփերի բեկորներ, որոնք իրենց ձևերով բազմազան են և տարբեր նպատակների համար են օգտագործվել։ Խփերի առկայությունը կենտրոնական թաղամասում և նրանց բազմազանությունը բխում է տնտեսական նշանակություն ունեցող կավանոթների առատությունից։ Իրենց ձևերով խփերը բաժանվում են հետևյալ խմբերի. կարասների խփեր, լայն բերանով մեծ կճուճների խփեր և նեղ բերանով անոթների խփեր և կափարիչներ։

Կարասների խփերը մեծ են իրենց տրամագծով (մոտ 50,0—55,0 սմ) և խիստ մասսիվ են։ Նրանք պատրաստված են ձեռքով, խոշորահատիկ կավից և վատ են թրծված, որը ցույց է տալիս խփի կտրվածքը։

Խփերն ունեն կլոր հորիզոնական բռնակ և զուրկ են նախշազարդումից, եթե չհաշվենք եզրերին մատով սեղմված ներճկված զարդերը։ Այս տիպի խփերը կենտրոնից քիչ շեղված ունեն կլոր անցք, որը հավանաբար արված է քաղցուի եռման ժամանակ գազերի դուրս մղման համար (աղ. XVIII, 2)։ Պետք է ասել, որ կենտրոնական թաղամասում 1964—1970 թթ. հայտնաբերված եղնաձև լայն գոտեզարդ ունեցող կարասների բերանների տրամագծերը համընկնում են այս տիպի խփերի տրամագծին։ Նման խփեր մեծ քանակությամբ հայտնի են Դվինի միջնաբերդում, որտեղ դրանց մի մասը իր վրա կրում է տարբեր դրոշմներով արված հարուստ զարդանախշեր։

Օրեն-Կալայում հայտնի են այդ խփերի առանձին ձևերը, բայց նրանք գերազանցապես օգտագործվել են թոնիրների համար և զուրկ են կենտրոնական անցքից։ Դրանք հանդիպում են վաղ շերտերում (IX—X դդ.), սակայն իրենց գոյությունը շարունակում են նաև հետագա դարերում[15]։

Երկրորդ տիպի խփերը համեմատաբար քիչ են։ 1968 թ. գտնված օրինակներից մեկը կլոր սկավառակ է, կենտրոնական տափակ հորիզոնական բռնակով (պահպանվել է բռնակի կեսը)։ Բռնակը երկու կողմից ունի ներճկված, սեղմումով կատարված փոսիկներ։ Ի տարբերություն նախորդ տիպի, խփերի այս խումբը որոշ չափով զարդարուն է։ Հորիզոնական բռնակի տակ

[15] **Г. М. Ахмедов,** Неполивная керамика Орен-Кала IX-XIII вв., МИА, № 67, М.—Л., 1959, стр. 207.




Նկ. 23. Սորակով անոթների բեկորներ և խփեր։

անցնում են չորս շրջկենտրոն ակոսներ։ Միջին մասով անցնում է մեկ զույգ ակոս, որոնք ավելի լայն են։ Համեմատաբար գեղեցիկ է հարդարված խփի եզրը։ Այստեղ անցնում են մեկ զույգ ակոս և սեղմումով արված ներճկված զարդեր, որոնք նրան ալիքի ձև են տալիս։ Խուփը պատրաստված է բաց դեղնավուն մանրահատիկ կավից, ձեռքով, սակայն զարդերը, որոնք շատ



համաչափ են, ըստ երևույթին, արվել են դուրգի վրա։ Չափերն են. տրամագիծը՝ 32,0 սմ, հաստութ.՝ 2,4 սմ (նկ. $23_1$, աղ. XXV, 2)։

Մյուս խփերն աչքի են ընկնում իրենց փոքր չափերով և լավ մշակմամբ։ Այստեղ արդեն բռնակները ուղղահայաց դիրք ունեն, որը վերջանում է քիչ փոս ընկած ծայրով։ Այս խփերը գերազանցապես պատրաստված են կարմիր բռնավուն կավից և լավ թրծված են։ Չափերն են. տրամագիծը՝ 16,0 սմ, բռնակի բարձրութ.՝ 2,4 սմ (նկ. $23_2$, աղ. XXV, 1)։ 1967 թ. գտնվել է մի փոքրիկ կափարիչ, որի տրամագիծը՝ 7,0 սմ է. այն ունի ուղղահայաց բարձրացող բռնակ (նկ. 23 ), որի ծայրը կոտրված է (տրամագիծը՝ մոտ 3,6 սմ)։

Այստեղ մենք չենք ուզում կանգ առնել պատրաստման եղանակի ընդհանուր կողմերի վրա, որովհետև նրանք պարտադիր են գրեթե ողջ միջնադարի համար։ Սակայն խփերի առանձին մասերի ձևավորման գործում, իհարկե, մեծ դեր են խաղացել կոնկրետ ժամանակահատվածում գործող ձևերը, ճաշակը և այլն։ Այդ են վկայում բռնակների ձևերը։ Հորիզոնական բռնակները նույթ չէին խնցեղենի արտադրության մեջ։ Սակայն այս տիպերը հանդես են գալիս VIII-IX դդ. և տարբեր ձևերով գոյատևում մինչև XIII դ. (Դվինում)։ Պետք է ասել, որ այս երևույթը ավելի ցայտուն երևան է գալիս կավանոթների արտադրության մեջ։ Ուղղահայաց բռնակները, զարգացած միջնադարում լայն զարգացում ստացած փոսիկավոր բռնակներով խփերի նախնական տիպերն են։ Նախնական այս դիտողությունը խփերի մասին կարող է հետագայում որոշ փոփոխություններ կրել նոր նյութերի բացահայտման շնորհիվ, սակայն նույն երևույթը դիտվում է Անդրկովկասի միջնադարյան այլ հուշարձաններում՝ Օրեն-Կալայում[16], Թբիլիսիում[17] և այլուր։

Չիրաճրագներ. Կենտրոնական թաղամասում ձիթաճրագներ քիչ են գտնվել, սակայն նրանց համար բնորոշ է միատիպությունը։ Ճրագներն ունեն կլոր ուռուցիկ իրան, ոչ շատ լայն պսակ, խողովակաձև երկար քթիկ (անցկլոր ուռուցիկ իրան, ...) որն իրանին միացվել է առանձին։ Կանթերը կտրվածքում կլոր են և քով), որն իրանին միացվել է առանձին։ Կանթերը կտրվածքում կլոր են և վերին մասով միանում են պսակին, հատակները հարթ են, տափակ։ Բոլոր ճրագները պատրաստված են ձեռքով։ Չափերն են. բարձրութ.՝ 4,5—8,0 սմ, բերանի բացվածքը՝ 4,0—5,0 սմ, հատակի տրամագիծը՝ 4,0—5,0 սմ (նկ. $25_5$, աղ. XXVI, 6,7)։ Ելնելով ճրագների արտաքին տեսքից, կարելի է ենթադրել, որ նրանք կապվում են մետաղական ձևերի հետ[18]։ Բացառված չէ նաև այն փաստը, որ նրանք անտիկ շրջանի նավակաձև ճրագների հետագա զարգացած ձևերն են։ Ճրագների այս տիպը Հայաստանում երևան է գալիս VII—VIII դդ. (Դվին), Անդրկովկասում այն հայտնի է Մինգեչաուրից[19] և Թբիլիսիից[20]։ Պոչուկավոր ճրագների բացակայությունը IX դ. շերտում, արդեն խոսում է այն մասին, որ դրանք, մասնավորապես Դվինում, երևան են գալիս սկսած X դ. և լայն տարածում են ստանում XII—XIII դդ.։

Այլ անոթներ. Կենտրոնական թաղամասում հայտնաբերված կավանոթ-

---

[16] Г. М. Ахмедов, ук. соч., стр. 205—210.

[17] И. Гзелишвили, О. Ткешелашвили, ук. соч.

[18] O. M. Dalton, Catalogue of early christian antiquities and objects from the Christian East in the Departament of British and Mediaval antiquities and etnography of the British Museum, London. 1901, էջ 103, աղ. XXVII, 525.

[19] Р. М. Ваидов, նշվ. աշխ., աղ. 8/9։

[20] И. Гзелишвили, О Ткешелашвили, նշվ. աշխ., աղ. 29/193։

ները երբեմն կրում են զարդեր, որոնք իրենց կատարման տեխնիկայով շատ մոտ են այլ նյութերով պատրաստված առարկաներին։ Խոսքն այստեղ, իհարկե, տարբեր արհեստների մեջ կիրառվող զարդարման ձևերի փոխազդեցության մասին է։ Կոնկրետ, մենք ունենք մի քանի անոթներ, որոնք իրենց հարդարումով շատ մոտ են փայտի փորագրման տեխնիկային։ Այս տիպի փորագրված անոթների լավագույն ձևերը գտնվել են 1965 թ. Ց-19 քառակուսում։ Նրանից մեկը կրում է մուգ կանաչ ջնարակ[21], իսկ մյուսը դեղնավուն մանրահատիկ կավից է։ Անոթը կլոր է (2326/36), ուղիղ պատերով և հարթ հատակով։ Պսակի և հատակի մասում շուրջանակի անցնում են զիգզագաձև զարդեր, որի հետևանքով առաջացել են խորը փորագրված եռանկյուններ։ Անոթն արտաքուստ ուղղահայաց ակոսով բաժանված է երկու մասի (պահպանվել է 1/3 չափով), որոնց զարդերը միմյանցից տարբերվում են։ Մի մասում գերիշխում է ռոմբաձև փորագիր երկրաչափական զարդը, իսկ մյուս մասում՝ բուսական, նման մանր տերևների, ծաղկի թերթիկների (նկ. $24_2$, աղ. XXVI, 5)։ Մի ուրիշ նույնատիպ անոթի բեկոր, հարթ հատակով և երկրաչափական զարդերով հայտնի է 1966 թ. պեղումներից, սակայն իր գեղարվեստական արժանիքներով այն շատ ու շատ զիջում է նախորդ անոթին։

Զարդարման այս եղանակը և անոթների ձևը նորույթ չէ խեցեղենի արտադրության բնագավառում. ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես և Անդրկովկասում։ Դրանք թվագրվում են VIII—IXդդ.։ Սամառայում այս տիպի զարդարումով անոթները բացառապես կապտա-կանաչավուն ջնարակով են պատած[22]։ Իսկ Օրեն-Կալայում հանդիպում են և միագույն կանաչ ջնարակով, և անջնարակ, դեղնավուն խեցիով, շատ նման Դվինի օրինակներին։ Օրեն-Կալայում այդ անոթների վաղ տիպերը նույնպես թվագրվում են IX դ., սակայն դրանք հանդիպում են նաև ավելի ուշ՝ XII դ.[23]։ Նույնպիսի զարդերով անոթներ հայտնի են նաև Կապաղակից, որոնք թվագրվում են IX—X դդ.[24]։

Դվինի միջնաբերդում այս տիպի անոթներ առայժմ չեն հանդիպում. այդ խոսում է դրանց կիրառման քիչ հնարավորությունների և արտադրության բարդ ձևերի մասին։

1966 թ. գտնվեց քառատանի տափակ անոթի մի բեկոր (աղ. XXXVI, 2), որը նույնպես զարդարված էր փորագրման եղանակով և իր վրա կրում էր երկրաչափական զարդեր (քառակուսին ուղիղ գծերով բաժանված է 4 եռանկյունիների)։ Այս տիպի անոթները քառակող էին և IX դ. բավական տարածում ունեին։ Նման անոթներ, գրեթե նույն զարդերով հայտնի են Օրեն-Կալայում և թվագրվում են նույն ժամանակաշրջանով[25]։ Ա. Յակոբսոնը այն միտքն է հայտնում, որ դրանք հենակ-տակդիրներ են, որը սակայն ժխտվում է, քանի որ դրանց վրա ոչ մի կրակի և մրի հետք չի նկատվում։ Նույնատիպ անոթներ

[21] Մանրամասն տե՛ս հաջորդ բաժնում։

[22] **F. Sarre**, նշվ. աշխ., աղ. V, 8,9։

[23] **А. Л. Якобсон,** Художественная керамика Байлакана, стр. 282—286, гр. II, табл. XXXVII—XXXVIII; его же. Археологические исследования на городище Орен-Кала, стр. 17—18, рис. 8.

[24] **С. М. Казиев.** Историко-археологическое обследование городища Кабалы (на азерб. языке), МКА, т. IV, Баку, 1964, стр. 40, табл. XI, 12, 14, 15, 19.

[25] **А. Л. Якобсон,** Археологические исследования на городище Орен-Кала, стр. 24, рис. 17.






Նկ. 24. Խեցեղեն անոթների տարբեր նմուշներ։

հայտնի են Դվինի միջնաբերդում և նույնպես թվագրվում են IX դ.։ 1970 թ. Խոր-Վիրապում՝ Արտաշատ մայրաքաղաքի պեղումների ժամանակ պատահական գտնվեց մի անոթի ոտք, որն իր զարդերով խիստ մոտենում էր Դվինի օրինակներին։ Դվինի VII տեղամասում, Ե քառակուսու 4-րդ խողովակաշարը բացելու ժամանակ 1,5 մ խորության վրա հայտնաբերվեց իր ձևով խիստ հետաքրքիր մի ճրագ, որը կրում էր նույնատիպ փորագիր զարդեր։

Ուշագրավ են քամիչների բեկորները (2305/107, 2326/64)։ Բեկորներից մեկը ներկայացված է ծորակով (նկ. $24_5$), որի ստորին մասում նախքան անոթի հետ միացնելը արված են ծակոտիներ։ Մյուսն անոթի վերին, բերանի մասն է (նկ. $24_4$, աղ. XXVI, 4)։ Այն ունի զույգ փոքր կանթեր, որոնք դրված են վզի կենտրոնական մասում և սիմետրիկ չեն։ Մյուս կանթը կրկնակի է և սկսվում է անմիջապես պսակի մոտից և ունի անցքեր։ Բերանը վերին մասում կրկնակի ծածկված է, որից հետո արված են անցքեր։ Ընդհանրապես նրա ձևերը, հատկապես կեղծ խողովակավոր կանթերի առկայությունը ցույց է տալիս, որ այս անոթը պետք է ունենար ինչ-որ նպատակ։ Հնարավոր է, որ այն եղել է փորձանոթ, ալքիմիական փորձերի համար։ Կարևոր է նշել, որ նույն տեղում (ց-19 քառակուսու մեծ հոր) գտնվել են նաև բրոնզե գդալիկներ և այլ մանր գործիքներ, որոնք անշուշտ պետք է կապված լինեին նույն աշխատանքների հետ։

VIII—IX դդ. կավանոթների ձևերի մեջ, ուսումնասիրության տեսակետից խիստ ուշագրավ է 1967 թ. հայտնաբերված (գտնվել է սյունազարդ սենյակի հարավային մուտքի մոտ 2,2 մ խորությունից), բարձր ոտքով, գնդաձև, քիչ վեր ձգված, լայն բերանով անոթը (նկ. $24_3$)։ Չափերն են. բարձրութ.՝ 31,0 սմ, բերանի տրամագիծը՝ 24,0 սմ, հատակի տրամագիծը՝ 15,0 սմ։ Անոթը վերին մասում ունի երեք կանթ, որոնք մի մասով միացված են դուրս փռված պսակին։ Ողջ արտաքին մակերեսը պատած է զարդերով՝ վերևից ներքև սանրի օգնությամբ արված երեք շարք ալիքներով, որոնք բաժանված են շուրջանակի գնացող 1—2 ակոսներով։ Պսակը և ոտքի ստորին մասն ունեն ձևավոր փորագիր զարդեր։ Անոթի սլացիկ տեսքը, համամասնությունները և զարդաբումը խոսում են պատրաստման մեծ վարպետության մասին։ Անոթը թվագրվում է VIII դ. վերջով (նրա կողքից գտնվել է եռաթև նետասլաք)։ Զուգահեռներ հայտնի չեն, սակայն զարդաձևերն ընդհանուր առմամբ խոսում են նրա թվագրության օգտին։ Նման տիպի անոթներ Դվինում և ընդհանրապես հայկական հնավայրերում չի հայտնաբերվել։ Ըստ երևույթին, մենք այստեղ գործ ունենք խեցեգործ վարպետի իրերի պատրաստման անհատական մոտեցման մի յուրօրինակ դեպքի հետ։

Ժողովածուի մեջ է մտնում նաև լայն բերանով, դեղնավուն մի գավաթ (2376/70)։ Այն ունի հարթ հատակ, լայն, կարճ վիզ և ուռուցիկ իրան։ Կանթը կտրվածքում ձվաձև է։ Բարձրությունը՝ 11,4 սմ, բերանի տրամագիծը՝ 9 սմ, հատակի տրամագիծը՝ 8,7 սմ (աղ. XXVI, 8, XXXVI, 3)։

Հետաքրքիր ձև ունի 2305/95 անոթը (աղ. XXXVI, 1)։ Այն կլոր է, 8 սմ բարձրությամբ, խեցին գորշ գույնի է, իսկ արտաքին մակերեսը փայլեցված է։ Պահպանվել է կանթը, որը հորիզոնական ելուստ է և իր ձևով նման կճուճների նույնատիպ կանթերին։ Անոթի վերին մասով անցնում են ակոսավոր երեք գոտիներ, ստորին մասով՝ երկուսը։ Անոթը թվագրվում է VIII դ. վերջով։ Այն գտնվել է երեքնուկաձև բերան ունեցող և նույն մշակումով սափորի հետ, շինության արևելյան պատի միջից։

Կենտրոնական թաղամասում հայտնաբերված խեցեղենի մեջ խիստ սակավ են դրոշմազարդ և կաղապարի օգնությամբ զարդարված անոթները։ Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ ընդհանրապես խեցեղենի զարդար-



ման հիշյալ տեխնիկան սկսում է երևան գալ սկսած VIII—IX դդ. (Մերձավոր Արևելք, Իրան)[26]։

Հայաստանում դրոշմազարդ խեցեղենը լայն տարածում է ստանում XI—XII դդ., իսկ կաղապարի օգնությամբ զարդարված անոթները նախորդում են դրոշմազարդին[27]։

Այդօրինակ խեցեղենի առաջին օրինակները մինչև այժմ հայտնի էին Անիից։ Դրանք սնդկամաններն են, որոնք կրում են բուսական և երկրաչափական բարդ զարդեր։

1970 թ. Դվինի կենտրոնական թաղամասի-ձ-21 քառակուսում, 1,10 մ խորությունից, X դ. շինության մնացորդների միջից գտնվեց թասի մի բեկոր (շրթնամաս), որն ամբողջությամբ պատած էր զարդագոտիներով (նկ. $25_1$)։ Գոտիների մեջ պատկերված են լայնատերև, երկար ցողուններով և պտուղներով ինչ-որ բույս, գուցե արմավենի, որոնց մեջ խառը տեղադրված են արմավենու պտղի կորիզներ հիշեցնող զարդեր։ Բուսական զարդերի միջև արված են մանր կետեր։ Պետք է ասել, որ նման յուրահատուկ զարդամոտիվով խեցեղեն հանդիպում է առաջին անգամ և դժվար է որևէ բան ասել նրա տեղական ծագման վերաբերյալ։ Կաղապարով պատրաստված թասի մի հետաքրքիր օրինակ կա Սամառայում[28], որը լրիվ արտաքին նմանություն ունի Դվինի օրինակին։ Հետաքրքիր է դրոշմազարդ սափորի բեկորը (աղ. XVII, 1), որն ամենայն հավանականությամբ թվագրվում է XI դ.։ Զարդագոտու վրա դրոշմված են խաչը ձեռքին հոգևորականի և կնոջ պատկեր։ Երկուսն էլ մերկ են։ Սափորի վրա պատկերված այս հետաքրքիր մոտիվը հավանաբար կապվում է պաշտամունքի, գուցե կուսակրոն հոգևորականների մեջ տիրող բարքերի հետ։

Նույն պեղավայրից գտնվել է նաև դեղնավուն մանրահատիկ կավից սափորի մի բեկոր, որի վրա կան վերադիր սպիրալաձև և ալիքաձև զարդեր (նկ. 25)։ Սափորի մի բեկորի վրա փորագրված է արաբատառ արձանագրություն՝ բաղկացած մեկ բառից (նկ. $25_6$)։

Կենտրոնական թաղամասի վերին շերտերում հայտնաբերված նյութերի մեջ բնորոշ են փոքրիկ կավե թասանման անոթները, որոնց մենք պայմանական աղաման ենք կոչում։ Դրանք օղակաձև նստուկով, ոչ խորը, ետ ծալված պսակով անոթներ են, որոնք մեծ քանակությամբ հանդիպում են Դվինի XII-XIII դդ. շերտերում (բարձրությունը՝ 2,5—4,0 սմ, բերանի տրամագիծը 6,0 սմ, հատակի տրամագիծը՝ 4,0—5,0 սմ)։ Աղամանները լինում են ջնարակած (հանդիպում է գերազանցապես միագույն կանաչը) և հասարակ։ Երբեմն պսակների վրա արված են լինում զարդեր։ Հետաքրքիր է նշել, որ 1968 թ. Դվինի քաղաքային թաղամասերից մեկում կատարված հետախուզական պեղումների ժամանակ, հայտնաբերված մեծ քանակությամբ արտադրական խոտանի մեջ, տարբեր անոթների հետ միասին, իրենց ծանրակշիռ տեղն ունեն նաև աղամանները։ Պետք է ենթադրել որ բացվող արհեստանոցը մասնագիտացված էր նաև աղամանների մասսայական արտադրության ուղղությամբ։

---

[26] A. U. Pope, Ceramic Art in Islamic times, A History. SPA, vol. II, p. 1471—1472.

[27] Բ. Ն. Առաքելյան, Հայաստանի քաղաքները և արհեստները IX—XIII դդ., հ. 1, էջ 229։

[28] F. Sarre, նշվ. աշխ., էջ 22։




Նկ. 25. Դրոշմազարդ խեցեղենի բեկորներ, ձիթաճրագ և քարե անոթ։

Կենտրոնական թաղամասում ջնարակած աղամաններ գտնվել են 1964 և 1965 թթ. (2305/35, 2326/7, 2455/23), իսկ հասարակ նմուշները՝ և բեկորները՝ 1966 և 1969 թթ. վերին շերտերի պեղումների ժամանակ, ուշ շրջանի թաղումների հետևանքով ավերված կառույցների միջից (Նկ. $29_{3,7,8}$ )։

Շինարարական խեցեղենի արտադրությունը Դվինի կավագործության ար-



հեստի կարևոր մասերից մեկն էր կազմում։ Այն պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ Դվինի շրջակայքը գրեթե զուրկ էր քարհանքերից, այդ իսկ պատճառով էլ աղյուսները և հում, և թրծած մեծ տեղ էին գրավում աշխարհիկ շինարարության մեջ։

Դվինն ուներ շատ բարդ, ճյուղավորված ջրամատակարարման սիստեմ, որով պետք է պայմանավորված լիներ առաջին հերթին կավե խողովակների՝ փողրակների արտադրությունը։ Միաժամանակ կավե խողովակները լայն կիրառություն ունեին նաև կոմունալ այլ պետքերի համար (թոնրակ, ծխնելույզ, բաղնիքի խողովակներ և այլն)։

Վաղ միջնադարյան շրջանից մենք ունենք մեծ քանակությամբ կղմինդրներ, հատկապես կենտրոնական թաղամասում։ Դվինն իր արտադրած աղյուսի, խողովակների և կղմինդրների մի մասը մատակարարել է հարևան շրջաններին։ Հատկապես մեծ կարող էր լինել կղմինդրի պահանջը վաղ միջնադարում, երբ գրեթե բոլոր մոնումենտալ շինությունները ծածկվում էին կղմինդրե տանիքով։

Կենտրոնական թաղամասում 1964—1970 թթ. գտնված այդօրինակ նյութերի մեջ ստվար խումբ են կազմում թրծած աղյուսները, որոնք շատ բազմազան են իրենց չափերով և գույներով (Նկ. $26_1$)։ Առաջին հերթին պետք է նշել, որ աղյուսները հստակ կերպով բաժանվում են երկու խմբի ժամանակագրական տեսակետից։ Պարզորոշ կերպով զատորոշվում են VIII և IX դդ. աղյուսները։

VIII դ. աղյուսները հայտնաբերվել են մեծ շինության բակում։ Նրանցով ծածկված էին փոքր ավազի եզրի քարերը։ Աղյուսները կարմրավուն են, համեմատաբար մեծ չափերով, շատ շուտ փշրվում են, որը վատ թրծման հետևանք է։ Չափերն են՝ 30,0×30,0×6,0 սմ։ Նույն տիպի աղյուսների բեկորներ, պատահականորեն թափված, գտնվել են նաև շինության հատակի տարբեր մասերում։

IX դ. աղյուսները լրիվ տարբերվում են նախորդներից։ Սրանք պատրաստված են ավելի կոկիկ, աչքի են ընկնում իրենց ամրությամբ։ Գույնը հիմնականում դեղնավուն է, չնայած հանդիպում են նաև բաց կարմրավուն։ Չափերը տարբեր են՝ 19,0×19,0×4,0, 23,0×23,0×4,0, 37,0×37,0×5,0, 39,0×39,0×5,0 սմ և այլն։ Փոքր աղյուսների մեծ մասը դուրս են եկել մեծ հորերից և լավ թվագրվում են։ Մեծ աղյուսները գտնվել են շերտերում և ժամանակագրական տեսակետից կարող են փոքր տատանումներ տալ։

Մեր նախնական դիտողությունները թույլ են տալիս ասելու, որ աղյուսների չափերի մեջ նկատվում են ինչ-որ օրինաչափություններ, որոնք, ըստ երևույթին, բխում են ժամանակաշրջանի կառուցողական ձևերի առանձնահատկություններից։ Եթե վաղ միջնադարում շատ էր տարածված 20,0×20,0×5,0 սմ չափերի աղյուսները[29], ապա IX դ., մասնավորապես կենտրոնական թաղամասից հայտնի նյութերում դրանք չեն հանդիպում։ Մեծ չափերի աղյուսները վաղ միջնադարյան շերտերում բացակայում են։

Կենտրոնական թաղամասի VIII—IX դդ. նյութերում կավե խողովակներ և կղմինդրներ չեն հանդիպում։ Սակայն XI—XII դդ. շերտում բացվեցին խողովակներ, որոնք տարբերվում են V—VII դդ. խողովակներից իրենց չա-

[29] А. А. Калантарян, Материальная культура Двина, стр. 13.



Նկ. 26. Շինարարական խեցեղեն։



վերով, գույնով և մշակմամբ (գտնվել են c-19 քառակուսու հորի մոտ)։
Դրանք բաց դեղնավուն են, ստորին նեղ մասում ունեն ընդգծված ուռուցիկ
շրջանաձև գոտի, հաջորդ խողովակին ամրացնելու համար։ Չափերն են. տրա-
մագիծը՝ 13—14 սմ, 18—19 սմ, երկարութ.՝ 43—45 սմ, հաստութ.՝ 1,8—
2,0 սմ, նկ. 26, աղ. XXXVI, 4)։ Նույն տեղից կան նաև այլ բեկորներ, որոնք
իրենց ձևով նման են հիշյալ խողովակներին և անկասկած նույն խողովակա-
շարին են պատկանել։
1970 թ. եկեղեցուց հյուսիս-արևմուտք, շերտում բացվեց կենտրոնական
թաղամասի ջրմուղի մի հատվածը։ Խողովակները կողքից և վերևից ամրաց-
ված էին քարերով։ Դրանք իրենց ձևով նման են նույն թաղամասի արևելյան
հատվածում գտնված ջրմուղի խողովակներին և թվագրվում են V—VII դդ.[30]։
IX դ. կղմինդրները հիմնականում դուրս էին եկել կիրառությունից և
միայն դրանով կարելի է բացատրել նրանց բացակայությունը ուշ շերտերում։
Փեղվող հատվածում պատահական գտնված բեկորները պատկանել են կա-
թողիկեի ծածկին, որը 893-ի երկրաշարժի ժամանակ փուլ էր եկել և կղմին-
դրները ափռել ողջ շրջապատում։ j-19 քառակուսում, V—VI դդ. այան խա-
րիսխի շուրջը մաքրելու ժամանակ, գտնվեց մի հարթ կղմինդր, որն իր ար-
տաքին ձևով որոշ չափով տարբերվում է VII դ. դասական կղմինդրներից։
Այն աչքի է ընկնում մեծ չափերով, ներկի թույլ առկայությամբ, վատ մշակ-
մամբ, և թրծումով։ Կղմինդրը պատկանում է V—VI դդ.։ Այդ թվագրումը
վերստին հաստատվում է 1967 թ. միջնաբերդի V—VI դդ. շինությունների շեր-
տում գտնված կղմինդրների բեկորներով, որոնք իրենց ձևերով կրկնում են
կենտրոնական թաղամասում գտնված օրինակին։
Շինարարական խեցեղենի հետ է առնչվում նաև նուրբ պատրաստված
սալիկները, որոնց կիրառությունը չի որոշվում (չափերն են՝ 36×26×3 սմ)։

## ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆ

Հայաստանի և Անդրկովկասի միջնադարյան ջնարակած խեցեղենի, մաս-
նավորապես նրա վաղ ձևերի առաջացման և զարգացման հարցերը հնագետ-
ների ուսումնասիրության լուրջ առարկա է դարձել։ Վերջին տասնամյակում այդ
ուղղությամբ կարևոր աշխատանքներ են կատարվել Հայաստանում, Վրաս-
տանում և Ադրբեջանում[31]։
Հայաստանում ջնարկած խեցեղենի գիտական ուսումնասիրությունը
գերազանցապես կապվում է արհեստավորական խոշոր կենտրոն միջնա-

---

30 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ. 80, Ա. Քալանթարյան, Դվինի
վաղ միջնադարյան շերտագրության հարցի շուրջը, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1969, № 4,
էջ 59, նույնի, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., էջ 20։
31 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Բ. Առաքելյան Քաղաքները և
արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. I, Б. А. Шелковников, Керамика и
стекло из раскопок гор. Двина, ТГМА, т. IV, 1952; его же, Поливная керамика из
раскопок гор. Ани, Ереван, 1957. Տե՛ս նաև նույն հեղինակի հոդվածները՝ «Տեղեկագիր»
Արմֆանի, 1940, № 4—5, 1942, № 6։ В. В. Джапаридзе, Керамическая промышлен-
ность Грузии X—XIII вв., Тбилиси, 1955 (на груз. языке). З. Майсурадзе, Грузинс-
кая художественная керамика XI—XIII вв., Тбилиси, 1954; А. Л. Якобсон, Художест-
венная керамика Байлакана; его же, Археологические исследования на городище
Орен-Кала в 1957 г. և այլն։

դարյան Դվին քաղաքի պեղումներից հայտնաբերված նյութերի հետ, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել ջնարակման տեխնիկայի զարգացման փուլերը IX—XIII դդ.։

1964—1970 թթ. Դվինի կենտրոնական թաղամասում հայտնաբերված ջնարակած խեցեղենը, որը գերազանցապես դուրս է եկել շինության տնտեսական բաժնի խոշոր կոնաձև հորերից, թվագրվում է IX դ. երկրորդ կեսով, վերին սահմանն ունենալով 893 թվականը։

Հայտնաբերված ջնարակած խեցեղենը բաժանվում է երկու մեծ խմբի՝ տեղական և ներմուծված։ Տեղական խեցեղենն իր հերթին հանդես է գալիս մի քանի ձևերով։

Բազմագույն ջնարակած խեցեղենի նախնական ձևերը ներկայացված են գերազանցապես ոչ խորը պնակներով, փոքրիկ թասերով և այլ տիպի անոթներով։ Նկարազարդումը հիմնականում կատարվել է երեք գույնով՝ մուգ-դարչնագույն, վառ-դեղնավուն և կանաչ։ Ջնարակման այս եղանակը հանդես է գալիս մի շարք առանձնահատկություններով։ Նախ նկարազարդումը կատարվել է խեցու վրա հիշյալ գույներով և ապա՝ պատվել թափանցիկ ջնարակով։ Նկարը, ըստ երևույթին, արվել է թաց խեցու վրա և կրկնակի թրծվել։ Զարդարման այս ձևն արդեն խոսում է այն մասին, որ տվյալ տիպի ջնարակումը շատ նախնական է և համապատասխանում է ջնարակած խեցեղենի սկզբնական էտապին։ Այս տեխնիկան լայն տարածում ուներ Միջագետքում և պատահական չէ, որ նման կատարումով անոթները Էռնեստ Կյունելը թվագրում է IX դարով[32]։

Տեխնիկական տեսակետից մի քայլ առաջ էր անոթների ներքին մակերեսի անգոբումը, մակերեսն ավելի հարթ և նկարն ավելի ցայտուն դարձնելու նպատակով։ Շատ հավանական է, որ այս ձևերը հանդես են եկել միաժամանակ։ Բացառված չէ, որ անգոբով պատելը, որը պայմանավորված էր ջնարակած անոթների արտադրության զգալի զարգացմամբ, երևան է գալիս քիչ ավելի ուշ, քան նախորդ ձևը։

Այս տիպի խեցեղեն Դվինում մեծ քանակությամբ հայտնաբերվել է կենտրոնական թաղամասում, նախորդ տարիների պեղումների ժամանակ։ Նման խեցեղեն նույն տեղից գտել է նաև Խաչիկ Դադյանը (1907—1908 թթ.), որը հետագայում տարվել է Զվարթնոց (ցուցադրված է Զվարթնոցի թանգարանում)։ Ըստ երևույթին, Դվինում սկսած IX դ. առաջին կեսից եռագույն խեցեղենի արտադրությունը (թաց կավի վրա, առանց անգոբի և անգոբով) լայն ծավալ էր ստացել։ Դվինի կենտրոնական թաղամասի պեղումները և շերտագրական դիտողությունները թույլ են տալիս ասելու, որ ջնարակման և նախշազարդման վերոհիշյալ ձևերը եղել են առավել նախնական, որից հետո երևան են գալիս միագույն ջնարակած անոթները և «անգոբով նկարազարդված» անոթները։ Կասկածից վեր է, որ նման զարգացում պետք է դիտվեր նաև Անդրկովկասի արհեստավորական այլ կենտրոններում, որոնք սերտ կապերի մեջ էին Դվինի հետ[33]։

[32] **Ernst Kuhnel**, Islamische Kleinkunst, Berlin, 1925, էջ 76—78, նկ. 36—37։

[33] **Н. Наджафова, Б. Шелковников**, Художественная глазурованная керамика Азербайджана IX века, ИАН, Аз. ССР, сер. общ. наук, 1958, № 4.

Պետք է նշել, որ հեղինակները Ադրբեջանի տերիտորիայում հայտնաբերված IX դ. խե-



Բազմագույն ջնարակած թասերը հանդես են գալիս երկու ձևով՝ փոքր, հարթ հատակով (աղ. XXVIII, 5), ուղիղ կտրված պսակով (2326/29,30) հատակի (բերանի տրամագիծը՝ 10,5—11 սմ, բարձրութ.՝ 2,5—4,5 սմ, հատակի տրամագիծը՝ 4,5—5,5 սմ) և մեծ օղակավոր նստուկով, կլոր պսակ, վերին մասում ուղիղ պատեր ունեցող պնակներով (2326/1, չափերը՝ 20×6,5×10 սմ)։ Զարդանախշումը հիմնականում երկրաչափական է և բուսական։ Ամենատարածված մոտիվը դարչնագույն և կանաչ գծերով արված քառակուսիների և շղանկյունների մեջ կանաչ և դարչնագույն սլաքների զարդն է, որն անոթի ներքին մակերեսի վրա դասավորված է շախմատաձև։ 1966 թ. Ի-18 քառակուսում հորում գտնված թասի բեկորը հատակի մի մասով իր վրա կրում է 6 թերթանի վարդյակ՝ երբեք մեծ, երբեք փոքր թերթիկներով։ Մեծ թերթիկների մեջ արված են կանաչ ցանցեր։ Տերևները բաժանված են դարչնագույն գծերով արված ցանցով, որոնց մեջ մեկընդմեջ արված են կանաչ սլաքներ և դեղին պուտիկներ (աղ. XXVII, 2)։ Արտաքուստ անոթն ունի դարչնագույն գծեր։ Այս զարդամոտիվը լայն տարածում ունի Դվինում և հանդիպում է դեռևս նախորդ տարիների պեղումներից հայտնաբերված նյութերի մեջ[34]։ Կարելի է վստահորեն ասել, որ այդ մոտիվը զուտ տեղական էր և Դվինի խեցեգործ վարպետների գեղարվեստական մտահղացման արդյունք։ Սլաքաձև զարդերը, որ այնքան լայն տարածում ունեին Դվինի ջնարակած խեցեղենի վրա IX դ., հետագայում անհետանում են, իրենց տեղը զիջելով ավելի բարդ կոմպոզիցիոն նկարների։

Անդրկովկասյան հուշարձաններում նման զարդով խեցեղեն շատ քիչ քանակությամբ հայտնի է Օրեն-Կալայում (Փայտակարան)[35], որը թվագրվում է X դ.։ Սլաքաձև զարդով խեցեղեն որոշ քանակությամբ հայտնի է միջինասիական հուշարձանների նյութերում։

Դվինում մասսայական է նաև դարչնագույն գծերով քառակուսիների մեջ դեղին պուտերով զարդամոտիվը։ Վառ դեղին գույնը առանձնակի շքեղություն է հաղորդում անոթին։

Վաղ տիպի ջնարակած անոթների զարդամոտիվների համար բնորոշ է կոմպոզիցիան կետազարդերով շրջապատելը կամ տարբեր ֆոները կետազարդերով լցնելը (աղ. XXVII, 1)։ Կետազարդերը հիմնականում դարչնագույն են, երբեմն՝ կանաչ։ Երկրաչափական զարդերից հայտնի են նաև տարբեր տիպի ցանցերը, կատարված կանաչ և դարչնագույն գծերով, շղանկյունիները, սիմետրիկ զարդերը և այլն (աղ. XXVIII, 3, XXX, 1)։ Ուշադրության է արժանի 1966 թ. Ց-20 քառակուսում գտնված թասի հատակի մասը։ Ջնարակը խիստ քայքայված է, սակայն նկատելի է, որ անոթի ֆոնը դեղնավուն է։ Անմիջապես հատակի վրա կանաչ գույնով, նուրբ ձեռով ընդգծված է հնգաթև աստղ։ Անոթի թրծումը շատ վատ է կատարված, այդ պատճառով կանաչ ջնարակով արված զարդերը աղճատված են և

ցեղենի քննության ժամանակ, աչքաթող են արել այս կարևոր տիպը, այդ համարելով լոկ անգոբով պատած բազմագույն ջնարակած անոթների տարատեսակ։ Տեղին է նշել, որ IX—X դդ. նման խեցեղեն տարբեր զարդանախշերով հայտնի է Օրեն-Կալայի համապատասխան շերտերում (տե՛ս Ա. Լ. Յակոբսոնի նշված աշխատանքները և նրա ուսումնասիրությունը)։

[34] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 209—210, նկ. 189։ Զվարթնոցի թանգարանում ցուցադրված խեցեղենի մեջ նույնպես առկա են հիշյալ զարդամոտիվները։ Տե՛ս Գր. Կարախանյան և Ա. Քալանթարյան, Զվարթնոցի խեցեղենը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4։

[35] **А. Л. Якобсон**, Художественная керамика Байлакана, стр. 239.

ընդհանուր բովանդակությունից զուրկ։ Բուսական զարդերի մեջ առանձնակի տեղ են գրավում վարդյակները և ոճավորված ծաղիկները։ Դրանց եզրագծերը հիմնականում տրվում է դարչնագույնով, իսկ ներսի մասը հարստացվում է դեղին և կանաչ տարբեր տիպի զարդամոտիվներով։ Սիրված մոտիվներից մեկը սուր ծայրով վերջացող ոճավորված արմավենու պատկերումն էր (արմավենազարդ)։

Հարուստ նախշեր ունի 2326/1 պնակը (աղ. XXVIII, 1, 4)։ Ներսի մակերեսը պատած է երկրաչափական և բուսական ներդաշնակ զարդերով։ Զարդը մի հավասարաթև խաչ է, որի կենտրոնում, կրկնակի դարչնագույն օղակներով արված շրջանի մեջ պատկերված է ոճավորված ծառ, որի ֆոնը հարստացված է վառ դեղին պուտերով և դարչնագույն փոքր կետերով։ Խաչի թևերի միջև արված են ձվաձև շրջաններ, որոնք կանաչ գծերով բաժանված են քառակուսիների, իսկ քառակուսիների մեջ ներդրված են դարչնագույն կետերով շրջապատված դեղին խալեր։ Դեղին և կանաչ գույների համադրությունը անոթին հաղորդում է շքեղ տեսք։ Պսակն արտաքուստ ունի դարչնագույն պուտիկներ (խալեր)։ Նման պուտիկներով ջնարակած թասի մի բեկոր հայտնաբերվել է 1966 թթ. պեղումների ժամանակ։ Անոթի արտաքին մասը դարչնագույն պուտիկներով զարդարելը նույնպես բնորոշ է Դվինի IX դ. ջնարակած խեցեղենի համար և հետագայում չի հանդիպում։

Կենտրոնական թաղամասում հայտնաբերված խեցեղենի մեջ ուշադրության են արժանի անոթի մի կափարիչ (նկ. 27, աղ. XXVIII, 2) և սափորի ստորին մասը (աղ. XXVIII, 3), որոնք երկգույն զարդարում ունեն։ Կափարիչը (2326/2) գրեթե կիսագնդաձև է, վերին մասում ունի բռնակ։ Արտաքին ամբողջ մակերեսը պատած է դարչնագույն պուտիկներով։ Կափարիչի վրա համաչափ դասավորված են 4 միանման ոճավորված բուսական զարդեր, որոնց վերին և ստորին մասերում կան դեղնավուն խալեր։

Սափորի ստորին մասը (2326/20) ծածկված է ուղղահայաց, դեպի հատակը իջնող դարչնագույն գծերով, որոնց միջև մեկընդմեջ դրված են կանաչ կետաշարքեր։ Անոթը պատած է թափանցիկ ջնարակով։ Սափորի վերին մասը, ըստ երևույթին, ունեցել է ճոխ հարդարանք։ Այդ են ցույց տալիս պահպանված որոշ մանրամասները։

Միագույն ջնարակած խեցեղենը ներկայացված է հինգ տարբեր անոթներով։ Ջնարակը մուգ կանաչ է (պղնձի օքսիդ)։ Պատրաստման եղանակով և իր նրբությամբ աչքի է ընկնում 1965 թ. գտնված տափաշիշը (2326/21)։ Այն ունի կլոր իրան, համեմատաբար երկար վիզ, ինչպես նաև ելուստաձև երկու կանթ՝ անոթը թելով կախելու համար (աղ. XXIX, 1), բարձրութ.՝ 15,5 սմ, իրանի տրամ.՝ մոտ 11 սմ։ Անոթն իր արտաքին տեսքով մերձենում է անտիկ շրջանի տափաշշերի ձևերին։ Այն թերևս պատկանել է եկեղեցական սպասների թվին, քանի որ հիշեցնում է Բյուզանդական կայսրության սահմաններում V—VI դդ. լայն տարածում ստացած պաշտամունքային անոթամպուլաների ձևերը[36]։

Անդրկովկասյան հուշարձաններում մեզ հայտնի չեն ուղղակի զուգահեռներ Դվինի տափաշշի համար։ Դրանք այդ շրջանում լայն տարածում ունեին Միջին Ասիայում, բայց կիրառական այլ նշանակու-

[36] Այդպիսի մի ամպուլա գտնվել է Դվինում։ Տե՛ս Ա. Ա. Քալանթարյան, Պաշտամունքային անոթ Դվինից, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1965, № 2։



թյամբ։ Օրինակ, Փայքենդում (Բուխարայի օազիս) գտնվել են մեծ քանակությամբ ջնարակած և հասարակ տափաշշեր։ Ջնարակած տափաշշերը նույնպես կանաչ գույնի են և թվագրվում են IX դ.։ Այդ տափաշշերը Դվինի օրինակից տարբերվում են իրենց արտաքուստ հարուստ հարդարանքով։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում օղակաձև ցածր նստուկով և ուղիղ պատերով գավաթը (2326/22, պահպանվել է 2/3 չափով). բարձրութ.՝ 11 սմ, բերանի տրամ.՝ 11 սմ, հատակի տրամ.՝ 7 սմ։ Անոթի իրանի կենտրոնական մասով շուրջանակի անցնում է ակոս (նկ. 26, աղ. XXIX, 4)։ Ջնարակումը կատարված է միայն արտաքին կողմից։ Կավը դեղնավուն է, մանրահատիկ։ Հիշատակության արժանի է վաղ միջնադարյան ծաղում ունեցող մի գավաթ, նույնպես գտնված կենտրոնական թաղամասում (1905/67), որն ուղղակիորեն կրկնում է վերոհիշյալ անոթի ձևը։ Նման տիպի մի անոթ հայտնաբերվել է Սամառայում (Արաբական խալիֆաթի մայրաքաղաքը 836—883 թթ. գտնվում էր Միջագետքում՝ Բաղդադի մոտ),որը նույնպես թվագրվում է IX դ.[37]։

Ջնարակի մասսայական օգտագործումը, ինչպես հայտնի է, համեմատաբար նոր երևույթ էր Մերձավոր Արևելքի կիրառական արվեստում։ Նրա սկզբները սկզբնավորում են, ամենայն հավանականությամբ, VIII դ. վերջում և IX դ.։ IX դ. մենք արդեն ունենք լավ թվագրված ջնարակած անոթներ, որոնք հայտնի են ինչպես Դվինում, այնպես էլ այլուր (Սամառա, Օրեն-Կալա և այլն)։ Բնական է, որ ջնարակման արվեստը սկզբնական էտապում չէր կարող մշակել իր գեղարվեստական, տեխնիկական ձևերը (հատկապես զարդանախշման բնագավառում) և իր վրա կրում էր տարբեր ազդեցություններ՝ մետաղի, գործվածքեղենի, ինչպես նաև փայտի փորագրության։

Խիստ հետաքրքրական է 2326/23 անոթը, որի վրայի զարդամոտիվը կատարված է հավանաբար փայտի փորագրության անմիջական ազդեցության ներքո։ Այն շրջանաձև, հարթ հատակով, 4,5 սմ բարձրությամբ մի անոթ է, որի արտաքին կողմում, վերին մասում շրջանաձև տրված է եռանկյունաձև երկշարք փորագիր զարդ, իսկ ստորին մասում՝ եռանկյունների և բազմանկյունների միախառնված փորագիր զարդագոտի (աղ. XXIX, 2)։ Կավը կարմրավուն է։ Նման անջնարակ մի անոթ գտնվել է նույն տեղից, որը նույնպես թվագրվում է IX դարով։ Այնտեղ զարդն ավելի կատարյալ է և բազմազան[38]։ Նույն տիպի երկրաչափական զարդերով անոթներ հայտնի են Օրեն-Կալայում, որոնք Ա. Լ. Յակոբսոնի կողմից թվագրվում են XII դ.[39]։ 1957 թ. Օրեն-Կալայում IX—X դդ. շերտերում գտնվել են կանաչ ջնարակով և նույն զարդամոտիվներով մի քանի անոթների բեկորներ[40]։

Զարդանախշման այս եղանակը, ըստ երևույթին, լայն տարածում ուներ արդեն IX դ.։ Փորագիր զարդերով մի քանի անոթներ հանդիպում են Սամառայում[41]։

Միագույն կանաչ ջնարակով է պատած Ե-20 քառակուսու հորերից

[37] F. Sarre, Die Keramik von Samarra, էջ 21։
[38] А. А. Калантарян, Раскопки центрального квартала.
[39] А. Л. Якобсон, ук. соч., стр. 282—286, табл. XXXVII, 2, 2а, 3, 4.
[40] Л. А. Якобсон, Археологические исследования. ..., стр. 17—18, рис. 8.
[41] F. Sarre, նշվ. աշխ., աղ. V։

մեկում հայտնաբերված փոքրիկ կճուճանման անոթը (բարձ.՝ 7 սմ, հատակի տրամագիծը՝ 4 սմ, բերանի տրամ.՝ 5 սմ)։ Անոթն, ըստ երևույթին, ընկել է կրակի մեջ և խիստ դեֆորմացիայի է ենթարկվել։ Այն ունի կլոր, կարճ վիզ և ուղիղ կտրված հատակ։ Ուսի վրայով շուրջանակի անցնում են երեք լայն ակոսներ, որոնց մեջ ջնարակը լցվելու հետևանքով մուգ կանաչ գույնն ավելի լավ է ընդգծվում։ Անոթը հորում հայտնաբերված հարակից նյութերով նույնպես թվագրվում է IX դ.։ Նույն տիպի անոթներ, նույն ակոսներով և միագույն կապտա-կանաչավուն ջնարակով հայտնաբերվել են Սամառայում[42]։

Միագույն կանաչ ջնարակով մյուս երկու անոթներից մեկը կաթնամանի բեկոր է ծորակով, հատակը չի պահպանվել։ Անոթի պսակը տափակ է, քիչ դեպի ներս թեքված։ Միագույն անոթների մեջ ուշագրավ է նույն շերտում գտնված թասը, որն իր նստուկի և ընդհանրապես արտաքին ձևով կրկնում է բազմագույն ջնարակած թասերի մեծ օրինակներին (պահպանվել է 1/3 չափով)։

Վերոհիշյալ միագույն կանաչ ջնարակով անոթների քանակությունը ցույց է տալիս, որ Դվինում արդեն IX դ. ջնարակած խեցեղենի արտադրությունը դարձել էր բազմակողմանի։ Նման խեցեղենի առկայությունը Անդրկովկասյան ժամանակամերձ հուշարձաններում կասկած չի հարուցում։ Առանձին օրինակներ հայտնի են Օրեն-Կալայում և Թբիլիսիում IX—X դդ. շերտերից։ Հավանաբար, նման զարդանախշումն աղերսներ ունի սասանյան ջնարակած անոթների հետ, որոնք գերազանցապես հանդես են գալիս կանաչ ջնարակով։

Միջին Ասիայում նույնպես կանաչ ջնարակը սկսվում է գործադրվել խեցեղենի արտադրության մեջ ջնարակման տեխնիկայի սկզբնական էտապներից[43]։ Աֆրասիաբում կանաչ ջնարակով պատած անոթներ հանդիպում են VIII դ. շերտերում։

**Անգոբով նկարազարդված** ջնարակած խեցեղենի առանձին բեկորներ հայտնաբերվել են պեղումների ժամանակ բուն շերտից, որոնց ուսումնասիրությունը կարևոր տեղ է գրավում Անդրկովկասի IX դ. ջնարակած խեցեղենի քննության մեջ։ Թասերի զարդերն արված են սպիտակ անգոբով և ծածկված թափանցիկ կամ դեղնա-կանաչավուն ջնարակով։ Բ. Առաքելյանը իրավացիորեն նկատել է, որ ջնարակման այդ ձևը՝ «նկարազարդում անգոբով» Հայաստանում, մասնավորապես Դվինում հանդես է գալիս IX դ. վերջում և X դ. սկզբում։ Դվինի անգոբով նկարազարդված խեցեղենի ուսումնասիրությունը երևան է բերում մի շարք ձևեր, առավելապես նկարազարդում անմիջապես խեցու վրա և նկարազարդում խեցու գույնին մոտ ֆոնի վրա։

Պետք է նշել, որ Ն. Նաջաֆովայի և Բ. Շելկովնիկովի հայտնած այն միտքը, թե անմիջապես խեցու վրա անգոբով նկարազարդած խեցեղեն գտնվել է միայն Ադրբեջանում, իսկ Դվինում ընդհանրապես չի հանդիպում[45], պարզապես հետևանք է նրանց անտեղյակության Դվինի վերջին տարիների պեղումների արդյունքներին։

[42] F. Sarre, նշվ. աշխ., էջ 25—27, № 97—98։

[43] Н. Н. Вактурская, О раскопках 1948 г. на средневековом городе Шемаха-Кала Туркменской ССР, Труды ХЛЭЭ, т. I, М., 1952, стр. 82.

[44] Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 235։

[45] Н. Наджафова, Б. Шелковников, ук. соч., стр. 97.



Հենվելով հնագիտական նյութերի շերտագրական և բազդատական խոր ուսումնասիրության վրա Ա. Յակոբսոնը նշում է, որ անգոբով նկարազարդված խեցեղենը լայն տարածում ուներ ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Վրաստանում ու Հայաստանում (Դվին)[46]։

Կենտրոնական թաղամասում հայտնաբերված հիշյալ խեցեղենի նմուշների զարդերը կատարված են սպիտակ անգոբով, պատած են թափանցիկ ջնարակով (աղ. XXXI, 1, 2)։ Բեկորներից երկուսի ֆոնը բաց շագանակագույն է, որի վրա ցայտուն երևան են գալիս սպիտակ գծերը։ Զարդերի մի մասը պուտիկներ են, հանդիպում են նաև շրջկենտրոն ավելի բարդ զարդամոտիվներ։

Կարևոր է խեցեղենի թվագրության հարցը։ Բոլոր ուսումնասիրողներն անգոբով նկարազարդված անոթները համարում են միջնադարյան ջնարակած խեցեղենի ամենավաղ տիպերը և թվագրվում են IX դ.։ Դվինում անգոբով նկարազարդված անոթները գերազանցապես հայտնաբերվում են X դ. շերտում։ Շատ հավանական է, որ այդ տիպը երևան է գալիս IX դ. վերջում, անմիջապես եռագույն ջնարակած թասերից հետո։ Անգոբով նկարազարդումը ջնարակած խեցեղենի զարդարման մեջ կարող էր տեղ գտնել միայն այն դեպքում, երբ անգոբն արդեն լայն կիրառություն ստանար և օգտագործվեր տարբեր նպատակներով։ Այդ առումով «նկարազարդում անգոբով» ձևը տեխնիկական տեսակետից մի քայլ առաջ էր, քան նախորդ ձևերը։

Կենտրոնական թաղամասում հայտնաբերված ջնարակած խեցեղենի հավաքածուում կան երկու փոքր, եռ ծալված շուրթերով ծանծաղ թասեր, որոնք ամենայն հավանականությամբ միջագետքյան IX դ. խեցեղենի ընդօրինակություններ են։ Երկուսի ներքին մակերեսը պատած է խուլ կաթնավուն ջնարակով, որը ֆոն է ստեղծում զարդերի համար։ Զարդերն արաբական գրերի ընդօրինակություններ են և չեն ընթերցվում (աղ. XXXII, 3, 7)։ Թվում է, որ դրանք նույնպես ներմուծված են, սակայն մանրազնին քննությունը երևան է բերում որոշ տարբերություններ։ Նախ ջնարակն իր որակով զիջում է ներմուծված օրինակների նույնանման ջնարակին և ունի ավելի խամրած տեսք։ Երկրորդ և ամենակարևորը՝ խեցին իր գույնով և որակով լրիվ տարբերվում է ներմուծվածներից և համապատասխանում է Դվինի անոթների խեցու գույնին։ 1965 թ. ց-19 քառակուսու հորում գտնվեց պնակի բեկոր՝ շրթնամասով։ Այն պատած է խուլ կաթնավուն ջնարակով, որը գրեթե չի տարբերվում միջագետքյան նույնատիպ անոթների ջնարակից։ Բեկորի շուրթի վրա կանաչ ջնարակով արված են մեծ խալեր, իսկ մի մասից իջնում են 3 հաստ գծեր (աղ. XXX, 1, աջից առաջինը)։ Պնակը նույնպես ընդօրինակություն է։ Նախ այն կարմրախեցի է և ամենակարևորը՝ արտաքուստ այն զուրկ է ջնարակից, մի հանգամանք, որը չի հանդիպում ներմուծված օրինակների վրա։ Ջնարակը շատ ամուր է և չի պոկվում խեցու վրայից։ Մնում է միայն նշել, որ տվյալ անոթները պատրաստված են կաթնավուն, խուլ ջնարակով պատած ներմուծված թասերի անմիջական ազդեցությամբ, նրանց տեղական ընդօրինակություններն են և նույնպես թվագրվում են IX դ.։

**Խեցեղենի ներմուծման** հարցի ուսումնասիրման համար բացառիկ նշանակություն ունի Դվինում հայտնաբերված Մերձավոր Արևելքի խեցեղեն

[46] А. Л. Якобсон, Художественная керамика Байлакана, стр. 232 и 236.

*անոթները, որոնց առկայությունը խոսում է Դվինի առևտրական լայն կապերի մասին։ Վերջին տարիներս կենտրոնական թաղամասում հայտնաբերվել է անոթների մի խումբ՝ ներմուծված Սամառայից։ Անոթների մակերեսային համեմատությունը Սամառայից ծագում ունեցող առարկաների հետ և տեխնոլոգիական առանձնահատկությունները խոսում են նրանց միջագետքյան ծագման մասին*[47]*։*

*Ներմուծված առարկաները ներկայացված են մեզ ամբողջական պնակով, մի քանի թասերով և բազմաթիվ բեկորներով։ Այդ անոթներն ունեն փափուկ, բաց դեղնավուն խեցի, որով առաջին հերթին տարբերվում են Դվինի տեղական արտադրանքից։ Անոթները պատած են կաթնավուն անթափանցիկ ջնարակով, որը հեշտությամբ պոկվում է խեցու վրայից։ Ջնարակապատումը կատարվել է անմիջապես թաց խեցու վրա և հետո այն թրծվել է։ Այս ամենը հատուկ է Սամառայի խեցեղենին և վերստին հաստատում է նրանց արտադրության վայրը։*

*Հնագիտական գրականության մեջ այս տիպի խեցեղենի ծագման վերաբերյալ երկու կարծիք գոյություն ունի։ Մի մասը գտնում է, որ այն արտադրվել է Միջագետքում (*F. Sarre*), մյուս խումբը նրա արտադրության վայրը համարում է Իրանը* (A. Pope)*։ Իրանում գտնված նույնատիպ խեցեղենը, որն իր խեցու որակով և ջնարակով շատ մոտ է Սամառայի խեցեղենին*[48]*, ամենայն հավանականությամբ բերված է Միջագետքից։ Բոլոր տվյալները ցույց են տալիս, որ այդ տիպի խեցեղենի արտադրության վայրը Միջագետքն է։*

*Դվինի թասերն ունեն բնորոշ ձևեր, գերազանցապես խորն են, դուրս փռված պռնկներով, հենվում են օղակավոր ցածր նստուկի վրա։ Անոթների մեծ մասը զարդարուն է, որը կատարված է կոբալտով։*

*Ուշադրության է արժանի 2326/28 պնակը, որի ներսի մակերեսում, կաթնավուն ֆոնի վրա կանաչ կոբալտով վերարտադրված է ոճավորված նռան ճյուղը, կենտրոնից հեռացող զույգ պտուղներով (աղ. XXXII, 6)։ Պնակի շրթի վրա արված են հավասար հեռավորության վրա դրված երեք զույգ կետեր։ Անոթի մշակումը և նախշազարդումը կատարվել է մեծ հմտությամբ։ Նռան պատկերի վերարտադրությունը անոթների վրա լայն տարածում ուներ Մերձավոր Արևելքում։ Նռան պտուղը համարվում էր պտղաբերության և առատության սիմվոլ։*

*Նման զարդով, կենտրոնում մեկ նռան պտուղով և ոճավորված տերևներով անոթ հայտնի է Շոշից, որը ներկայումս պահպանվում է Լուվրում*[49]*։*

*Նույն տիպի (զուտ արտաքին նմանությամբ) մի թաս հայտնաբերվել է 1964-ին (2305/24)։ Այստեղ զարդն արդեն այլ ձևի է և գույնի։ Անոթի կենտրոնում ներսից, կապույտ կոբալտով նկարված են ոճավորված տերևներ, իսկ շուրթին՝ նախորդ թասի նման արված են կապտավուն ցայտեր (աղ. XXXII, 4)։*

[47] *Սամառայից ծագում ունեցող անոթների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս* **Б. Шелковников,** Художественная керамика Двинских раскопок, „Известия„ Арм. ФАНа, 1940, № 4—5.

[48] **R. Ghirshman,** Cinq campagnes de fouilles a Suse (1946—1951), Paris, 1952, *էջ 4, նկ. 3։*

[49] **R. Koechlin,** A propos de la céramique de Samarra, „Syria", 1926, vol. 7, fasc. 3, pl. XLI, 2.



*Ընդհանրապես այս երկու անոթներն իրենց արտաքին ձևով և զարդարման եղանակով, հատկապես երկրորդը, մոտենում են 1938 թ. Դվինում, նույն տեղամասում գտնված նույնատիպ թասին (1617/124)*[50]*։ Ուղղակի զուգահեռները հանդիպում են Միջագետքի խեցեղենի հավաքածուներում*[51] *(աղ. XXX, 3)։*

*Կենտրոնական թաղամասում հայտնաբերվել են նման տիպի անոթների բազմաթիվ բեկորներ։ Նույն տիպի թասերից մեկը (հատակը բացակայում է) եզրին կրում է կապույտ ցայտեր (աղ. XXXII, 5)։ Մի այլ պնակ (պահպանվել է կիսով չափ, գտնվել է 1965 թ. ց-19 քառակուսու մեծ հորում), լրիվ զուրկ է նախշազարդումից։ Ջնարակը շատ մաքուր է, սպիտակին մոտ։ Անոթն իր արտաքին ձևով նման է 2326/28 պնակին։ Անոթների ձևերի տեսակետից հետաքրքրական է սկահակը (աղ. XXXII, 1), որը ծանծաղ է, չունի հենահատակ և զուրկ է նախշազարդումից։ Սկահակի եզրերը շեշտված դուրս են թեքվում (գտնվել է բեկորներով, պահպանվում է Դվինի հնագիտական բազայում)։ Նույնատիպ անոթներ հայտնաբերվել են Սամառայում և հայտնի են իրենց ճոխ հարդարանքով*[52]*։*

*Թասերի բեկորների մեջ առանձնանում է մի օրինակ, որը զարդարման տեսակետից ոչ մի նմանություն չունի վերոհիշյալ թասերի հետ, սակայն խեցու նույնությունը և ջնարակի պոկվելու հատկությունը մեզ թույլ է տալիս այն ևս ընդգրկել ներմուծված առարկաների շարքը։ Բեկորը նախշազարդված է երեք գույնով՝ կապույտ, մանուշակագույն և կանաչ (աղ. XXX, 1, ձախից ներքևինը)։ Զարդն արված է դեպի կենտրոնը ձգվող երեք գույների ներդաշնակ շերտերով։ Նման տիպի մեկ ամբողջական թաս գտնվել է նույն թաղամասում 1947 թ. (1847/59), որը և թվագրվում է IX դարով*[53]*։ IX դ. է թվագրվում միջագետքյան ծագում ունեցող նույն զարդերով ամբողջական թասը, որը հրատարակվել է Ա. Լեյնի կողմից*[54] *(աղ. XXX, 2)։*

*Նման, եռագույն ջնարակով թասերի բեկորներ հայտնի են նաև Սամառայում։ Սակայն Ֆր. Զառեն այդ տիպը համարում է արևելյան, ըստ երևույթին չինական խեցեղեն անոթների տեղական ընդօրինակություն*[55]*։ Իրականում այդ այդպես է, քանի որ ջնարակած թասերի այս տիպը շեղում է IX դ. միջագետքյան ջնարակի կիրառման կանոնիկ եղանակներից։*

*Հիշյալ խեցեղենի գյուտերն անդրկովկասյան հնավայրերում շատ քիչ են։ Վերջին տարիներին նման խեցեղեն սակավ քանակությամբ հայտնաբերվել է Օրեն-Կալայում, որը նույնպես միջագետքյան ծագում ունի և ներմուծվել է Սամառայից*[56]*։*

*1965 թ. Դվինում գտնվեցին մի պնակի բեկորներ (շրթնամասերը)։*

[50] **Б. А. Шелковников**, ук. соч., стр. 192—194; его же, Средневековая художественная керамика Ближнего и Дальнего Востока, «Известия» Арм. ФАНа, 1942, № 6 (20), стр. 6.

[51] **F. Sarre,** *նշվ. աշխ., աղ.* XVIII, № 167; **A. U. Pope,** *նշվ. աշխ., աղ. 573*e; **Arthur Lane,** Early Islamic pottery, London, 1947, *նկ. 88։*

[52] **F. Sarre,** *նշվ. աշխ., աղ.* XXVI—XXVII.

[53] Կ. Ղաֆադարյան, *նշվ. աշխ., նկ. 198։* **Б. А. Шелковников**, Керамика и стекло из раскопок гор. Двина, стр. 198.

[54] **A. Lane,** *նշվ. աշխ., նկ. 7* B.

[55] **F. Sarre,** *նշվ. աշխ., էջ 66—67, աղ.* XXXII, *4, № 244։*

[56] **А. Л. Якобсон,** *նշվ աշխ., էջ 245—246։*

Իրենց զարդանախշերով բեկորները պատկանում են շողյուն խեցեղենի արտադրությանը, բայց միաժամանակ ավելի պարզ ձևերով տարբերվում են նույնատիպ խեցեղենի ավելի դասական օրինակներից (XII—XIII դդ.), որոնք մեծ քանակությամբ հայտնի են Դվինում և Անիում: Վերոհիշյալ անոթը ներքուստ և արտաքուստ ունեցել է ճոխ զարդարում: Այն պատրաստվել է մանրահատիկ դեղնավուն կավից և բարակապատ է: Ներսից՝ ամբողջ եզրով արված են կլոր շրջանակներ, որոնց մեջ տեղադրված են երկգույն՝ կարմիր և դարչնագույն օղակներ (աղ. XXXII, 2): Այս ամենը վերցված է ոսկեգույն և կարմրավուն կետերի և մանր պտերների մեջ, որոնք ընդհանուր ֆոն են ստեղծում: Անոթի եզրերը շրջանակված է ոսկեգույն երիզներով: Բեկորները ըստ գտնվելու վայրի թվագրվում են IX դ. վերջով կամ X դ. սկզբով:

1966 և 1967 թթ. նույն տիպի խեցեղեն անոթների երկու բեկոր ես հայտնաբերվել է նույն թաղամասում, բայց այլ գույների ներդաշնակությամբ: Բեկորներից մեկը վառ կարմիր ջնարակով է պատած, որի ներսում նկատվում են ոսկեգույն պտուներ: Նման խեցեղեն, սակավ քանակությամբ, տարբեր ժամանակներում հայտնաբերվել են նախորդ տարիների պեղումներից ինչպես միջնաբերդում, այնպես և կենտրոնական թաղամասում: Չնչայած նյութերի սակավությանը, պարզ է, որ Դվինը առևտրական լայն կապ է ունեցել մերձավոր-արևելյան արհեստագործական խոշոր կենտրոնների հետ:

Դվինում շողյուն խեցեղենի վաղ տիպերի առկայությունը մեծ արժեք է ներկայացնում նրանց պատմա-հնագիտական ուսումնասիրության տեսակետից: Շողյուն խեցեղենի արտադրության ժամանակի և տեղի հարցը միմյանց հակասող մի շարք կարծիքների ու վիճաբանությունների առարկա է հանդիսացել մերձավոր-արևելյան խեցեգործության խոշոր գիտակների և ուսումնասիրողների մոտ, սակայն այդ հարցում վերջնական պարզություն չի մտցված: Նրանց մի մասը շողյուն խեցեղենի արտադրության հավանական կենտրոն համարել է Իրանը (Վիգնիեր, Պոպ, Միգեոն, Կյոխլին և ուրիշներ), մյուսները առաջ են քաշել Հոռմես-եգիպտական տեսությունը (Բուտլեր, Ալի Բեյ Բահջատ և այլն), մեկ այլ խումբ այն համարել է Միջագետքը (Զառե, Կյունել, Դիմանդ, Լեյն և ուրիշներ): Սամառայում թրծման հնոց և խոտան չի գտնվել, սակայն Ռեյում Էրիխ Շմիդտի պեղումների ժամանակ գտնվել է խոտան (Բոստոնի արվեստի թանգարանի և Ֆիլադելֆիայի համալսարանի միացյալ արշավախումբ[57]): Արաբ աշխարհագիր Իբն-ալ Ֆակիհը նշում է IX դ. Ռեյում «ոսկեզօծ անոթների» առկայության վերաբերյալ: 1927—1928 թթ. Ունվալայի կողմից Շուշում բացվել են թրծման հնոցներ շողյուն խեցեղենի բեկորներով և խոտանիներով (IX դ.)[58]: Ինչպես տեսնում ենք նյութերը շատ հակասական են և իրավացիորեն բանավեճեր են առաջացնում, սակայն մի բան պարզ է, որ արդեն IX դ. հիշյալ տեխնիկան նկատելի բարձրության վրա էր գտնվում:

Շողյուն խեցեղենի արտադրությունը Մերձավոր Արևելքում, ինչպես հայտնի է, տալիս է խոշոր ընդմիջում և նորից երևան է գալիս XII դ. երկրորդ

[57] A. U. Pope, նշվ. աշխ., էջ 1462, նույնի, Identification of Iranian Faience, III Международный Конгресс по Иранскому искусству и археологии, М.—Л., 1935, стр. 175.

[58] J. M. Unvala, Note on the Lustred Ceramics of Susa, BAIPA, № 2, 1939, 79.



կեսում ավելի կատարյալ ձևերով: Այս տիպի ամենավաղ անոթներից մեկը թվագրվում է 1179 թ. և պահվում է Բրիտանական թանգարանում: Կյունելն այդ ընդմիջումը բացատրում է նրանով, որ խալիֆաթի անկումից հետո արհեստավորների մի խումբ, որի ձեռքում էր կենտրոնացված շողյուն խեցեղենի արտադրությունը և, որոնք հավանաբար խստագույնս թաքցնում էին նրա պատրաստման գաղտնիքը, տեղափոխվում է Եգիպտոս, ուր աշխատանքային ավելի հարմար պայմաններ կային Ֆաթիմյանների արքունիքում: Ֆաթիմյանների անկումից հետո, 1170-ական թթ. նրանք թողնում են Եգիպտոսը և հիմնավորվում Ռեյում (Պարսկաստան), Ռաքքայում (վերին Միջագետք) և Իսպանիայում: Այս միտքը ջերմորեն պաշտպանություն է գտնում Լեյնի կողմից[59]:

Շողյուն խեցեղենի վաղ տիպերի վերաբերյալ այս էքսկուրսը կարևոր համարեցինք Դվինի նյութերի ուսումնասիրության կապակցությամբ, քանի որ այն լինելով Մերձավոր Արևելքի առավել խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոններից մեկը IX—X դդ., չէր կարող հեռու մնալ խեցեղենի արտադրության տեխնիկայի բնագավառում տեղի ունեցած նորություններից:

Դվինի շողյուն անոթի բեկորներին նույնատիպ խեցեղեն մեզ հայտնի է Անտիոքի ալ-Մինա թաղամասի պեղումներից[60]: Նման տեխնիկայով զարդարված անոթներ հանդիպում են նաև Սամառայում:

Դվինում հայտնաբերված շողյուն թասի բեկորներն իրենց զարդամոտիվներով և գույներով բաղդատվում են նաև Ֆուստատում (Եգիպտոս) հայտնաբերված խեցեղենի հետ: Ռ. Շնեյդերը Ֆուստատի նմանօրինակ խեցեղենը թվագրում է 880—900 թթ.[61], որին մենք լիովին համաձայն ենք: Շողյուն խեցեղենի բազմապիսի գյուտերը Ֆուստատում խոսում են այն մասին, որ այս քաղաքն էլ է նրա արտադրության կենտրոններից մեկը: Հավանական է, որ Դվինի անոթը ներմուծված լինի Եգիպտոսից:

Այսպիսով, Դվինի IX դ. ջնարակած խեցեղենն աչքի է ընկնում պատրաստման, անոթների ձևերի և զարդարման բազմազանությամբ: Ջնարակած խեցեղենի արտադրության բնագավառում Դվինը հանդիսացել է Անդրկովկասի խոշորագույն կենտրոններից մեկը և նկատելի կնիք է թողել այլ կենտրոնների արհեստային արտադրանքի վրա: IX դ. Դվինն առևտրական և մշակութային սերտ կապերի մեջ է եղել Մերձավոր Արևելքի, Եգիպտոսի և այլ երկրների հետ:

Խոսելով ջնարակած խեցեղենի մասին, պետք է կարևոր տեղ տալ անոթների, մասնավորապես քրեղանների ձևերին: Նրանց արտաքին ձևերի և առանձին մանրամասների ուսումնասիրությունը երևան է բերում մի շարք առանձնահատկություններ, որոնցով դրանք տարբերվում են մյուս դարաշրջանների նույնատիպ անոթներից: Մյուս կողմից շատ բնորոշ են ներմուծված ձևերը, որոնք գրեթե բացարձակ մեծամասնությամբ այլ տիպի են, եթե չհաշվենք տեղական ընդօրինակությունները:

Տեղական արտադրանքի քրեղանները բաժանվում են երկու խմբի՝ հարթ

[59] Arthur Lane, Medieval Finds at al Mina in North Syria, „Archaeologia" LXXXVII, էջ 29:

[60] A. Lane, նշվ. աշխ., աղ. XVI, 1:

[61] R. Schnyder, Tulunidische Lüsterfayence, „Ars Orientalis", vol. V, էջ 76, աղ. 9, նկ. 45:

հատակով և օղակաձև նստուկով։ Որպես կանոն հարթ հատակով քրեղանները ավելի փոքր են և չափերով համարյա միատեսակ (բարձրությունը՝ 4,5 սմ, հատակի տրամագիծը՝ 5,0 սմ, բերանի տրամագիծը՝ 10, 0 սմ)։ Այս քրեղանների ձևերը նույնն են՝ պատերը փոքր կորությամբ միանում են հատակին, իսկ պսակները ուղիղ են (նկ. $27_{1-4}$)։ Նույնիսկ արտաքին համեմատությունը ցույց է տալիս, որ նրանք միևնույն արհեստանոցում են



Նկ. 27. Ջնարակած քրեղանների և այլ անոթների ձևեր։

պատրաստվել, այդ մասին է խոսում նաև զարդարման միևնույն ոճը։ Ընդհանրապես ջնարակած անոթների սկզբնական ձևերի մասին խոսելիս, մենք չենք կարող նրանց զինել մասսայական արտադրության տեսակետից։ Մի բան պարզ է, որ նախնական շրջանում այդ արտադրությունը Դվինում կարող էին ձեռնարկել մեկ կամ երկու մեծ արհեստանոց։ Այստեղից էլ գալիս է ձևերի և հարդարման միատիպությունը։ Օղակաձև նստուկով քրե-




Նկ. 28. Ջնարակած քրեղանների ձևեր։

զաննների չափերը մեծ են (բարձ.՝ 7,3—7,5 սմ, հատակի տրամագիծը՝ 9,0—10,5 սմ, ոտքի բարձ.՝ 1,0 սմ, բերանի տրամագիծը՝ 19,5—21,0 սմ (նկ. $28_{5-7}$)։ Նստուկը մակերեսային է, մի բնորոշ հանգամանք, որ նրանց տարբերում է ավելի ուշ շրջանի քրեղանների նստուկներից։ Պատերի միացումը հատակին կորությամբ, նույնպես բնորոշ է այդ շրջանի ձևերին և շարունակում է իր գոյությունը մինչև X դ. վերջը (Դվինում այդ երևույթը լավ է նկատվում)։ Հայտնի է, որ XI—XIII դդ. անոթների նստուկները (խոսքը քրեղանաձև անոթների մասին է), ավելի խորն են, այսպես կոչված՝ կրունկաձև, իսկ պատերի միացումները հատակին գերազանցապես այլ սկզբունքով է կատարված։ Պսակի մասում այն ուղղահայաց դիրք ունի, իսկ հետո ուղիղ գծով միանում է հատակին, թեթևակի կորությամբ (նկ. $28_3$)։ 1968 թ. քաղաքի թաղամասերից մեկում արտադրական արհեստանոցների շրջանում գտնված հարյուրավոր անոթների ձևերը այդ տիպի են (XII—XIII դդ.)։

Բոլորովին այլ սկզբունքով են կատարված ներմուծված անոթները։ Այստեղ օղակաձև նստուկին համապատասխան մենք ունենք արդեն դուրս թեքվող պսակ (նկ. $28_{1-2}$), որի հետևանքով անոթների պատերը կտրվածքում ալիքաձև տեսք են ստանում։ Դվինում հայտնաբերված մերձավոր-արևելյան անոթների ընդօրինակությունները կատարված են ձևերի հետ մեկտեղ (նկ. $28_{3-4}$)։ Այլ դեպքում ընդօրինակությունը կկորցներ իր իմաստը։

# V. ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՊԱԿԻՆ

Կենտրոնական թաղամասի պեղավայրի շերտագրական պատկերը բնութագրելիս նշեցինք, որ վաղ միջնադարյան հնագիտական նյութերը, մասնավորապես ապակին, հայտնաբերվում են քիչ քանակությամբ։ Կարևոր է այն հանգամանքը, որ ապակին խիստ բնութագրական է ուշ անտիկ և վաղ միջնադարյան մշակույթին, հայտնաբերվում է միայն շինության հատակի վրա, իսկ բացակայում է հորերից դուրս եկող և IX դ. թվագրվող նյութերում։

V—VII դդ. ապակին պատրաստման եղանակով միատիպ է (սառը մշակման եղանակ)։ Այս տիպի ապակիների վերաբերյալ տպագրված են բազմաթիվ ուսումնասիրություններ և հոդվածներ[1], որտեղ լուսաբանված են տարբեր վայրերում հայտնաբերված տաշված ապակիների տեխնոլոգիան, կիրառման հնարավորությունները և այլն։ Չխորանալով տեխնոլոգիական հարցերի մեջ, կաշխատենք մի քանի դիտողություններ անել տվյալ ապակու թվագրության վերաբերյալ, կապված Դվինի նյութերի հետ։

Դվինի կենտրոնական թաղամասում հայտնաբերված վաղ միջնադարյան ապակին (նկ. $30_{2,7,12}$, աղ. XXXIII, 1) հաստ, դեղնավուն և կանաչավուն, տաշված բլթակներով (կլոր ու ձվաձև) թասիկների և սրվակների բեկորներ են։ Որպես պարտադիր կանոն ձվաձև բլթակներ ունեն միայն սրվակների բեկորները։ Մի այդպիսի սրվակ հայտնի է 1938 թ. պեղումներից, որը շատ մոտ է միջագետքյան նույնատիպ սրվակներին[2]։ Այս տիպի սրվակների բեկորներ մեր պեղումներից գտնվել են թվով հինգ հատ։ Նրանք կանաչավուն ապակուց են, 2—3 մմ հաստությամբ (c, d, e,—20 քառակուսիներում)։

Կլոր, փորագիր բլթակներով բեկորները պատկանում են գերազանցա-

[1] **М. А. Тиханова,** Из материалов Дубоссарского отряда Молдавской экспедиции, КСИИМК, № 57, 1955; **Э. А. Сымонович,** Стеклянная посуда середины I тысячелетия н. э. с нижнего Днепра. КСИИМК, № 69, 1957. Անդրկովկասյան ապակու վերաբերյալ տե՛ս Գ. Տիրացյան. Հացավան ամրոցի պեղումները 1962 թ. **Л. А. Чилашвили,** Городище Урбниси. **Р. М. Ваидов,** Мингечаур III—VIII вв., Դվինի ապակիների վերաբերյալ՝ **Р.М. Джанполадян,** Резное стекло из Двина, СА, 1958, № 1; Ա. Ա. Քալանթարյան. Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Մերձավոր Արևելքի տաշված ապակիների վերաբերյալ տե՛ս R. Pinder—Wilson-ի, C. J. Lamm-ի, **R. Ghirshman**-ի և այլոց աշխատությունները (նայել հաջորդ տողատակերը)։

[2] **R. Pinder-Wilson,** Cut-Glass wessels from Persia and Mesopotamia, the British Museum Quarterly, vol. XXVII, № 1—2, Autumn, էջ 33։



Նկ. 29. Քարե և կավե անոթներ:



պես թասերի, որոնք կիսագնդաձև են, հատակին ունեն մեծ օղակաձև նստուկ՝ անոթին հաստատուն նստվածք տալու համար (ապակու հաստութ.՝ 3—4 մմ): Թասերը հանդես են գալիս երկու ձևով: Քիչ դեղնավուն, խորը բլթակներով, անթերի մշակմամբ ապակիների խումբը թվագրվում է ավելի



Նկ. 30. Ապակե անոթների բեկորներ, ոսկրե գդալիկներ և զարդեր:

վաղ ժամանակաշրջանով (V—VII դդ.): Նման ապակու երկու բեկոր գտնվել է Ծ—20 քառակուսում: Ապակիների այս խումբը գերազանցապես դուրս է գալիս Դվինի միջնաբերդի V—VI դդ. շերտերից (տե՛ս 1962—1967 թթ. նյութերը պալատական դահլիճի և նրան կից շինության շերտերից)[3]:

[3] Նյութերը հրատարակված չեն և գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

կանաչավուն ապակիները, որոնք խիստ ցայտուն են, հանդիպում են ավելի ուշ շրջանի շերտերում և թվագրվում են VIII—IX դդ.։ Այս թվագրությունը առավել հաստատվում է Հացավան ամրոցում գտնված նյութերում, ուր կանաչավուն ապակիները բացակայում են[4]։

Տաշված ըլթակներով ապակիները բաղդատվում են նույնատիպ նյութերով, որոնք հայտնի են Ուրրնխսի, Մինգեչաուրի, Սուդիգիլանի և անդրկովկասյան այլ հուշարձանների պեղումներից։ Այդ նյութերի միատիպությունը բնականաբար հարց է դնում ապակիների տեղական կամ ներմուծված բնույթը պարզելու համար։ Դվինը վաղ միջնադարում Անդրկովկասի ապակեգործական կենտրոններից մեկն էր։ Այս անառարկելի փաստը հաստատվում է ապակու, այդ թվում և տաշված, բազմաթիվ գյուտերով։ Միաժամանակ տաշված ապակիները ներմուծվել են Իրանից և Միջագետքից, որոնք իրենց մշակմամբ և որակով լրիվ տարբերվում են տեղական օրինակներից և քանակությամբ քիչ են[5]։

Ապակե թասի խիստ հետաքրքիր բեկոր գտնվել է 1966 թ.։ Այն իր վրա կրում է շրջկենտրոն խորը զարդեր։ Ապակին կիսաթափանցիկ է և հաստ (4—5 մմ)։ Այդ տիպի ապակիները, որոնք նույնպես պատրաստված են սառը մշակման եղանակով, Անդրկովկասում գրեթե բացակայում են, իսկ մեզ մոտ գտնվել է առայժմ երեք բեկոր՝ երկուսը Դվինում, մեկը՝ Հացավանում։ Նույն տիպի ապակիներ մեզ առայժմ հայտնի են միայն Իրանից, այն էլ շատ քիչ քանակությամբ։ Անշուշտ, ինչպես Դվինի, այնպես և Հացավանի նշված ապակիները ներմուծված են հավանաբար Շուշից[6], որտեղ հայտնաբերված շրջկենտրոն զարդերով ապակիները թվագրվում են VI—VII դդ.։ Նույնատիպ ապակիներ հայտնի են նաև Կիշ քաղաքից[7]։ Միջնաբերդում 1967 թ. գտնված շրջկենտրոն զարդերով թասի կեսը դուրս է եկել վաղ մարզպանական շերտից և թվագրվում է IV—V դդ.։ Նույն ժամանակաշրջանով է թվագրվում նաև Հացավան ամրոցում գտնված բեկորը։

V—VIII դդ. է վերաբերում 1964 թ. C—19 քառակուսում գտնված փոքրիկ սրվակը։ Ապակին իր որակով մոտենում է տաշված ապակիներին (հաստութ.՝ 2մմ)։ Սրվակն ունի վեց նիստ, ընդ որում այդ նիստերը միմյանցից բաժանված են ավելի փոքր նիստերով։ Նիստի լայնութ. 0,5 սմ է, սրվակի բարձր.՝ 6,3 սմ։ Այն պատրաստվել է կաղապարում, ունի նեղ բերան և կարճ վիզ, որը նույնպես նիստերի է բաժանված։ Հատակը տափակ է։ Սրվակը գտնվել է շերտում և չունի զուգահեռներ IX դ. հորերում հայտնաբերված ապակե անոթների հոծ զանգվածում։ Ընդհանրապես IX դ. ապակու համալիրում բացակայում են հաստ ապակուց բազմանիստ սրվակները, որը մեզ ենթադրել է տալիս նրանց վաղ ժամանակաշրջանին պատկանելու մասին։ Այս տիպի անոթները կարող էին օգտագործվել օծանելիքի պահպանման և տեղափոխման համար։

[4] Հացավանում հայտնաբերված ապակիները դեղնավուն են և իրենց ձևով մոտենում են առաջին խմբին։

[5] Р. М. Джанполадян, Резное стекло, стр. 269.

[6] C. J. Lamm, Les verres trouvés a Suse. Syria, 1931, vol. XII. Նույնի, Mittelalterliche Gläser und Steinschnittarbeiten aus dem Nahen Osten, Berlin, 1929—1930; Dieulafoy L'Acropol de Suse, t. III, 1891, և այլն։

[7] D. B. Harden, Glass from Kish. Iraq, հ. 1, մաս 2, 1934, տե՛ս նաև Գ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1963 և 1965 թթ. պեղումների նյութերը, ՊԲՀ, 1968, № 1, էջ 288։



V—VIII դդ. ապակիների փոքրիկ ժողովածուի մեջ են մտնում մոզաիկ ապակու մի քանի օրինակներ ուլունքների և խաղափուլերի ձևով։ Մոզաիկ ապակիների պատրաստման բարդ տեխնիկան[8] միջնադարում կիրառվում էր միայն ուլունքների պատրաստման մեջ։ Կենտրոնական թաղամասում պեղումների ժամանակ գտնվել է երկու ուլունք՝ պատրաստված մոզաիկ ապակուց։ Մեկն ամբողջական է (2326/108), տակառաձև։ Ուլունքը բաց մոխրագույն է, որի մեջ ներդրված են դեղին և դարչնագույն կետեր և թելեր։ Մյուս ուլունքից (նույնպես տակառաձև) պահպանվել է միայն կեսը։ Այն իր վրա կրում է դեղին, կապույտ և դարչնագույն երանգներով շերտեր։ Երկու ուլունքներն էլ ըստ գտնված վայրերի թվագրվում են VIII դ., սակայն չի բացառված նրանց ավելի վաղ շրջանին պատկանելը։

Այդ նույն տեխնիկայով են պատրաստված փոքրիկ կոնաձև առարկաները[9]։ Դվինում այդ առարկաներից հայտնի է մոտ երկու տասնյակ։ Մոզաիկ եղանակով պատրաստված կոնաձև իրերի վերաբերյալ Սմիթն այն կարծիքն է հայտնում, որ նրանք ներդիրներ են[10]։ Իհարկե, այդ դույլը չի հավանականությունից, բայց մեզ թվում է, որ դրանք խաղափուլեր են։ Պետք է ասել, որ կենտրոնական թաղամասում գտնվել է մի այդպիսի կոնաձև իր՝ պատրաստված հասարակ կավից, մեկ հատ էլ՝ կարմրավուն տուֆից (2450/44)։ Մոզաիկ ապակուց կոնաձև խաղափուլը (բարձրութ.՝ 1,5 սմ, նստուկի տրամագիծը՝ 2,0 սմ) կապտավուն ֆոնի վրա ունի սպիտակ ներդիրներ։ Այն գտնվել է VIII—IX դդ. շերտերում, սակայն այդ իրերը հիմնականում ուշ անտիկ ժամանակաշրջանից են և հարատևում են մինչև վաղ միջնադարը։

Եվ վերջապես V—VIII դդ. ապակիների փոքրիկ խմբի մեջ են մտնում նաև խճանկարի հատիկների մի փոքրիկ հավաքածու, որոնք ապակու պաստայից են։ Հայաստանում ապակին խճանկարային արվեստում հավանաբար լայն տարածում էստանում սկսած VI—VII դդ.։ Դվինի մայր եկեղեցին VII դ. 20-ական թթ. վերջնական վերակառուցումից հետո, իր ներսում, հատակի և պատերի վրա ունեցել է ճոխ հարդարանք խճանկարի և, դույն, որմնանկարի ձևով։ Ապակե խճանկարը արվել է եկեղեցու պատին, քանի որ հիմնահատակի խճանկարը գույնզգույն քարերից է[11]։ Ապակե հատիկները կանում հայտնաբերվել են i—19 քառակուսու ստորին շերտում։ Դրանք փոքրիկ խորանարդներ են 0,5×0,5×0,5 0,7×0,7×0,7 1,0×1,0×1,0 սմ չափերի։ Հատիկները տարբեր գույնի են՝ կանաչավուն, կապտավուն, բաց դեղնավուն թափանցիկի հասնող։ Հատիկների մեջ կան առանձին օրինակներ, որոնք պատված են ոսկու բարակ շերտով։

## IX ԴԱՐԻ ԱՊԱԿԵ ԻՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Դվինը անդրկովկասյան ապակեգործական խոշոր կենտրոններից մեկն էր և իր արտադրանքով չէր զիջում մեծ հռչակ և տարածում ստացած

[8] Մոզաիկ ապակիների պատրաստման վերաբերյալ մանրամասն տե՛ս Н. Качалин, Стекло, М., 1959.

[9] Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը, աղ. XXXIV, 2—5։

[10] R. W. Smith, Glass from the ancient world. New-York, 1957, էջ 243—244։

[11] Ս. Պատրիկ, Խճանկարի արվեստը հայերի մոտ և Դվինում հայտնաբերված խճանկար հատակը, ՊԲՀ, 1964, № 2։

*մերձավոր-արևելյան կենտրոնների ապակե անոթներին։ Մինչև վերջին ժամանակներս ենթադրվում էր, որ Դվինում տեղական ապակու արտադրությունը սկզբնավորվել է X դ., հիմք ունենալով գերազանցապես Դվինի միջնաբերդում գտնված նյութերը։ Սակայն ոճական և որոշ քանակությամբ քիմիական անալիզները ցույց տվեցին, որ Դվինում ապակու արտադրության որոշակի առկայություն նկատվում է դեռևս վաղ միջնադարում։ IX դ. մենք արդեն ունենք մեծ հմտությամբ և գեղարվեստական բարձր ճաշակով պատրաստված ապակե անոթների հոծ զանգված, որոնց տեղում պատրաստելու հանգամանքը ոչ մի կասկած չի հարուցում։ Ելնելով նյութերի միատարրությունից և ապակու որակից, բացառված չէ այն հանգամանքը, որ դրանք պատրաստվել են մեկ կամ երկու մեծ արհեստանոցներում։ Գտնված նյութերի մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ այստեղ մենք գործ ունենք միևնույն ապակեգործ արհեստավորի կամ արհեստանոցի հետ, որի կնիքը նկատվում է պատրաստի արտադրանքի վրա։*

*Կենտրոնական թաղամասում գտնված նյութերի տեղական լինելու հանգամանքը նաև ապացուցվում է ապակե անոթների խոտանի գյուտերով։ Գտնվել են ապակե թասերի, ղամպարների և զարդարուն անոթների արտադրական խոտան, որն առաջացել է կաղապարների մեջ փչելու ժամանակ (2447/17, 2448/6)։*

*Կենտրոնական թաղամասում IX դ. թվագրվող ապակե անոթները գերազանցապես դուրս են եկել շինության մեծ հորերից։ Կիրառական տեսակետից նրանք բաժանվում են մի շարք խմբերի։ Քննենք դրանք առանձին-առանձին։*

**Փորագիր ապակե անոթներ.** *Կենտրոնական թաղամասում փորագիր ապակիները հայտնաբերվել են բեկորներով և շատ քիչ են։ Հիմնականում դրանք բաժակներ են, որոնք հանդես են գալիս երկու տիպով։ Առաջին տիպին կարելի է վերագրել հաստապատ (4,5—5,0 մմ), բաց դեղնավուն գույնի, ուղիղ պատերով և հարթ հատակով բաժակները (2447/10, 20), որոնք գտնվել են 1—18 քառակուսու փոքրիկ սենյակի հատակի վրա (նկ. $21_{8,11}$)։ Նրանցից մեկն իր վրա կրում է թույլ նշմարելի, սխեմատիկ արված հորիզոնական և ուղղահայաց «եղևնաձև» զարդեր, ուղղահայաց ակոսներ։ Բեկորները թույլ չեն տալիս ամբողջացնելու զարդը, սակայն այն տպավորությունն է ստացվում, որ փորագրող վարպետն աշխատել է պատկերել ոճավորված ծառ։ Երկրորդ անոթի վրա արդեն զարդն արված է խորը և այստեղ մենք ունենք փռված տերևների (գուցե՝ արմավենի) պատկերը (բարձրությունը՝ 10,0—11,0 սմ, բերանի տրամագիծը՝ 12,0 սմ)։*

*Բաժակների մյուս տիպը ևս ներկայացված է երկու անոթով։ Ի տարբերություն նախորդների, այստեղ ապակին թափանցիկ է, իսկ հատակները նեղ են և պատերը որոշ թեքությամբ դուրս են փռված (նկ. $31_5$)։ Այս բաժակների զարդերը պարզ են. բաժակների ստորին և վերին մասերը ուղղահայաց կամարներով միացած ակոսներով բաժանվում են նիստերի, իսկ, կենտրոնական մասում արված են հորիզոնական շուրջանակի ակոսներ. (2326/156)։ 2326/157 բաժակն ունի միայն հորիզոնական ակոսներ։*

*Այս տիպի անոթների պատրաստման տեխնիկական հնարների, թվագրության և պատրաստման վայրի վերաբերյալ կան բազմաթիվ աշխատանքներ, որոնք գերազանցապես նվիրված են Մերձավոր Արևելքի ապակեգործու-*



*թյանը*[12]*։ Դվինի նույնատիպ անոթները հատուկ քննության են ենթարկվել Ռ. Ջանփոլադյանի կողմից*[13]*, որն անոթների մի մասը տեղական արտադրության արգասիք է համարում։ Պետք է նշել, որ կենտրոնական թաղամասից հայտնաբերված ապակիները կարևոր են նաև թվագրության իմաստով և ճշտում են նրա սահմանները՝ IX—X դդ.։*

**Փոքր չափի սրվակներ.** *Կենտրոնական թաղամասի ժողովածուում շատ հազվադեպ են հանդիպում. հայտնի են ընդամենը երեք հատ։ Երկու սրվակները բարակապատ են և պատրաստվել են ազատ փչման եղանակով։ 2446/9 սրվակը գլանաձև է, կանաչավուն, նստուկը կլոր է, հավանաբար անոթը դրվել է պահպանակի վրա և կարող է ալքիմիկոսի փորձանոթ լինել (պահպանված մասի բարձրութ.՝ մոտ 4,0 սմ, տրամագիծը՝ 1,6 սմ, ապակու հաստութ.՝ 1 մմ)։ Նույնատիպ մի սրվակի հատակի մաս հայտնի է 1965 թ. պեղումներից։ Ապակին մանր, ցանցկեն հասնող ճաքեր ունի, սակայն պահպանված մասը ցույց է տալիս, որ այն եղել է գեղեցիկ սրվակ (2447/17)։ Տրամագիծը՝ 1,5 սմ, պահպանված մասի բարձրութ.՝ 1,0 սմ։*

*Երրորդ սրվակից պահպանվել է միայն բերանը և հատակը իրանի մի մասով։ Բեկորները ցույց են տալիս, որ այն եղել է քիչ ուռուցիկ փորով սրվակ, նեղ բերանով, համեմատաբար երկար վզով։ Վզի և իրանի միացման տեղում արված է վերադիր շուրջանակի զարդ։ Նստուկը փոքր է և օղակաձև (նկ. $32_6$)։ Բարձրութ.՝ մոտ 7,5 սմ, բերանի տրամագիծը՝ 1,9 սմ, հատակի տրամագիծը՝ 2,0 սմ։ Այն գտնվել է 1964 թ. պեղումների ժամանակ հորից և թվագրվում է IX դ.։ Հավանաբար, այս տիպի սրվակներն օգտագործվել են օծանելիքի կամ զանազան դեղանյութերի համար։*

**Մեծադիր սրվակներ.** *Հանդիպում են գերազանցապես բեկորներով (պահպանվել են բերանները և հատակները) և հասնում են շուրջ երկու տասնյակի։ Նրանք տարբեր հաստության և երանգի սրվակներ են, միայն մեկ օրինակի շրթին պահպանված է կանթի հետքերը (2446/1)։ Այն խիստ քայքայված, քիչ հաստ, կանաչավուն ապակուց սրվակի բերանի մաս է վզով։ Վզի վրա շուրջանակի գնում են վերադիր զարդեր (նկ. 31, աղ. XXXV,4)։ Պսակը դուրս է փռված և իր վրա ունեցել է բարձր կանթ (պահպանված մասի բարձրութ.՝ 6,0 սմ, բերանի տրամագիծը՝ 4,5 սմ, վզի տրամագիծը՝ 2,0 սմ)։ Սրվակների մի մեծ խումբ բարակապատ, վառորակ կանաչ ապակուց է, անփույթ ծալված շրթով և կարճ վզով (նկ. $32_5$, $33_{2-4}$)։ Բերանի տրամագիծը՝ 1,7—2,5 սմ։ Անգույն, թափանցիկ բարակապատ սրվակները զուրկ են պսակներից և ունեն համեմատաբար երկար վիզ (նկ. $32_7$, $33_1$)։ Բերանի տրամագիծը՝ 2,0—3,0 սմ։ Այստեղ կարևոր է նշել, որ բոլոր ծալված պսակով կանաչավուն սրվակներն ունեցել են ներճկված նստուկներ (նկ. $33_{8,9}$), իսկ անգույն սրվակների հատակներն օղակաձև են (2446/23, նկ. $33_{7,10-12}$)։ Հատակների տրամագծերը տատանվում են 2,5—4,8 սմ։ Կան նաև բաց շագանակագույն, մանուշակագույն ապակուց, ուղիղ պսակներով սրվակի բեկորներ, որոնք խիստ սակավ են հանդիպում կենտրոնական թաղամասի ժողովածուում և հավանաբար ներմուծված են (նկ. $33_{5,6}$)։*

---

[12] **C. J. Lamm,** Mittelalterliche Gläser., նույնի, Das Glas von Samarra, Berlin, 1928; նույնի, Glass from Iran in the national Museum, Stokholm, 1935 և այլն։

[13] **Р. М. Джанполадян,** Резное стекло Двина, стр. 268—274.



Նկ. 31. Ապակե անոթների բեկորներ։





Նկ. 32. Ապակե թասերի հատակներ և սրվակների բերաններ։




Նկ. 33. Ապակե սրվակների բեկորներ։

նստուկներ (նկ. $33_{8,9}$), իսկ անգույն սրվակների հատակներն օղակաձև են (2446/23, նկ. 33 $_{7,10—12}$)։ Հատակների տրամագծերը տատանվում են 2,5—4,8 սմ։ Կան նաև բաց շագանակագույն, մանուշակագույն ապակուց, ուղիղ պսակներով սրվակի բեկորներ, որոնք խիստ սակավ են հանդիպում կենտրոնական թաղամասի ժողովածուում և հավանաբար ներմուծված են (նկ. $33_{5,6}$)

Սրվակների բեկորներ են հայտնաբերվել նաև g—19 քառակուսու հորում, սակայն նրանք խիստ իրիզացիայի են ենթարկված (2447/21)։ Ընդհանրապես այդ հորի վերին շերտի ապակիները խիստ տարբերվում են ստորին շերտի ապակիներից և իրենց վրա կրում են աղերի ազդեցությունը։




Նկ. 34. Ապակե անոթների բեկորներ։

Սրվակներից երկուսը հաստապատ են։ Մեկը դեղին գույնի մասսիվ բերան է, կարճ վզով (բարձրութ.՝ 2,0 սմ), իսկ մյուսը կանաչավուն ապակուց, կարճավիզ սրվակի շրթամաս է (2446/15), որն արտաքին տեսքով որոշ նմանություն ունի սնդկամաններին (նկ. $34_4$)։ Նման տիպի ամբողջական

սրվակներ հայտնաբերվել են Ուրբնիսիում և ցուցադրված են Վրաստանի պետական թանգարանում (1—62—4038)։

Հիշյալ անոթներից տարբերվում է 2326/150 սրվակը (աղ. XXXIII, 2), որը գտնվել է 1965 թ. ց—18 քառակուսու հորում, հավանաբար, հոգևորականների կողմից թափված սպասքի հետ։ Այն շատ նուրբ եղանակով պատրաստված անոթ է, սլացիկ երկար վզով, փոքր դուրս փռված պսակով։ Վզի վերին մասով անցնում է վերադիր շրջանաձև զարդ։ Սրվակն ունի գեղեցիկ կանթ, որը մի կողմով հենվում է գնդաձև իրանին, իսկ վերին մասում միանում՝ պսակին։ Բարակապատ այս սրվակն իր վճիտ կապտավուն գույնով, կենտրոնական թաղամասում հանդիպող ապակիների մեջ եզակի է և հավանաբար այն ներմուծված է։

Բոլոր սրվակները պատրաստված են ազատ փչման տեխնիկայով։ Հիշյալ սրվակներին շատ մոտ կանգնած են Կապաղակից գտնված նյութերը, որտեղ նրանք ևս թվագրվում են IX դ.[14]։

**Սափորներ.** Այս տիպի անոթներից մեզ հասել են շատ քիչ քանակությամբ՝ այն էլ բեկորներով (պահպանվել են կանթերով վզերը և բերանները)։ Կենտրոնական թաղամասի պեղումների ժամանակ գտնված սափորները յոթն են, որոնք բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբի մեջ են մտնում կանաչավուն ապակուց, լայնաբերան, հավանաբար ցածրաիրան, ուռուցիկ իրանով սափորները (2446/20, 2326/164)։ Ապակիների մեջ նկատվում են պղպջակներ։ Անոթներն ունեն մասսիվ կլոր կանթեր, որոնք վերին մասում միանում են պսակին, իսկ ստորին մասում՝ վզի, իրանի միացման տեղին։ Վզի մասում վերևից և ներքևից անցնում են վերադիր գծեր (նկ. $31_{9,13}$, աղ XXXV, 5)։ Հետաքրքիր է նկատել, որ այս խմբի անոթների բերանի տրամագիծը և վզի բարձրությունը ուղիղ համեմատական են, մի երևույթ, որը նկատվում է նաև IX դ. կավե սափորների պատրաստման տեխնիկայում ևս (բերանի տրամագիծը և վզի բարձրութ.՝ 5,5—7,0 սմ)։ Նույնատիպ անոթներից մեկը անգույն ապակուց է, սակայն իրիզացիայի է ենթարկված (նկ. $31_1$, աղ. XXXVI.5)։ Այն վզի վրա կրում է կետազարդեր և օվալներ, ներառնված կետերի մեջ անմիջապես պսակի տակ (2326/176)։ Անոթների շուրթերը քիչ հաստացված են, ապակին բարակ է։ Նման սափորները պատրաստված են կաղապարի մեջ փչելու եղանակով։

Մյուս խումբը կազմում են ձևավոր բերանով անոթները, որոնք ներկայացված են երկու կանաչավուն և մեկ դարչնագույն շրթնամասերով։ Այս սափորները հաստ, որակով ցածր ապակուց են (2446/10,11)։ Դրանք իրենց ձևով մոտենում են նույն ժամանակաշրջանի կավե նույնատիպ անոթներին և հավանաբար ինչ-որ չափով կրում են նրանց ազդեցությունը (նկ. $34_1$)։

**Գավաթ բաժակներ.** կենտրոնական թաղամասից գտնված ապակե իրերի ժողովածուում իրենց ուրույն տեղն են գրավում գեղարվեստական բարձր ճաշակով պատրաստված բաժակ-գավաթները, որոնց քանակը շուրջ չորս տասնյակ է, իսկ բեկորները հարյուրներով դուրս են գալիս պեղավայրի տարբեր հատվածներում։ Պետք է նշել, որ նման բաժակներ Դվինում

[14] Ф. О. Османов, Стеклянные изделия из города Кабалы (на азерб. языке). МКА, т. V, Баку, 1964, стр. 153, табл. 1, 9, 10.



հանդիպում են առաջին անգամ և, ամենակարևորը, դրանք կապվում են եկեղեցական սպասքի[15] հետ։ Գավաթ-բաժակները գերազանցապես ուղիղ պատերով, կլոր ներճկված հատակով, հաստացված պսակներով անոթներ են, տարբեր զարդերով և գույների տարբեր երանգներով։ Այդ բաժակների համար որպես կանոն բնորոշ է բերանների տրամագծերի և բարձրությունների համապատասխանությունը։ Որպես բնորոշ հատկանիշ կարելի է նշել նաև այն հանգամանքը, որ բոլոր բաժակները, չնչին տարբերություններով, միևնույն որակի են, մի չափի են (բարձրութ.՝ 8,5—9,5 սմ, բերանի տրամագիծը՝ 8,5—9,5 սմ, հատակի տրամագիծը՝ 6,0—7,0 սմ), որը խոսում է նրանց միևնույն արհեստանոցի արտադրանքին պատկանելու մասին, կիրառական տեսակետից միևնույն նպատակը հետապնդող պատվիրատուի մասին։ Ժամանակագրական տեսակետից հիմնականում թվագրվելով IX դ., նկատվում են որոշ տեխնիկական տարբերություններ 1964 թ. և 1965 թ. գտնված ապակիների մեջ։ Մեզ թվում է, որ 1964 թ. ապակիները, որոնք միատարր են, հիմնականում անգույն և զարդերը խիստ նախնական, մի քանի տասնամյակ ավելի վաղ են, քան 1965 թ. գտնված ապակիների հոծ զանգվածը։ Այդ են ապացուցում նաև հորերից գտնված արաբական դրամները։

Գավաթ բաժակների մի մեծ խումբ պատրաստված է թափանցիկ, անգույն բարակ ապակուց և չունի զարդեր (2326/142, 151, 152 և այլն)։ Նույն խմբի մեջ կան բաժակներ (աղ. XXXV,2), որոնք ստորին մասում ունեն վերադիր թելերով զարդ (2326/139), ունենալով արված սեղմված զարդեր (2146/18, 2447/12,2326/143 և այլն (նկ. $31_{10,12,14}$), ուռուցիկ զարդեր (2446/3)։ Իրենց զարդերով և գույներով հատկապես աչքի են ընկնում 1965 թ. ց—18 քառակուսու հորում թափված 14 բաժինները, որոնք ամբողջական են (աղ. XXXIV)։ Դրանք գերազանցապես կանաչավուն ապակուց են և ողջ մակերեսին ունեն թեք ալիքներ (2326/134, 136, 138)։

Ավելի լայն, հակառակ ուղղությամբ արված ալիքներով կանաչավուն ապակիներով բաժակները հաստ ապակուց են, կիսաթափանցիկ (2326/140, 142,2447/2) և մեծ մասամբ գտնվել են ց—19 քառակուսու մեծ հորում։ ց—18 քառակուսու հորից գտնված ապակիների մեջ իրենց նրբերանգ ճաշակով աչքի են ընկնում երկուսը։ Դրանցից մեկը մուգ դեղնավուն բարակ ապակուց բաժակ է (2326/135), որն իր վրա կրում է ուռուցիկ զարդեր (տե՛ս նաև 2326/145)։ Մյուսը՝ մուգ դարչնագույն բաժակ է (2326/133), որի հաստ պատերին արված են փոքրիկ բշտիկներ։ Նման բշտիկներով զարդեր հանդիպում են նաև կանաչ գույնի բաժակների վրա, նախորդ և հաջորդ տարիների նյութերի մեջ (2446/4, 2450/23 և այլն)։

Գավաթ-բաժակների ուսումնասիրվող նմուշների տիպերից հայտնաբերվել են Հյուսիսային Կովկասից[16]։ Կրուպնովն այն կարծիքին է հայտնում, որ դրանք ներմուծվել են Սիրիայից[17]։ Ապակե բաժակները, որոնք հայտնաբեր-

[15] Ապակիների այս խումբը հրատարակվել է Հռ. Ջանփոլադյանի կողմից, որը հանգամանորեն կանգ է առնում նրանց կիրառական նշանակության վրա։ Տե՛ս Р. М. Джанполадян, Новые данные о стеклоделии Двина, КСИА, № 120, стр. 28—30.

[16] МАК, VIII, табл. CXIV, 4,5.

[17] Е. И. Крупнов, Новые источники по древней и средневековой истории Северного Кавказа, КСИИМК, № 78, М., 1960, стр. 116—117.

վել են Զմեյսկայա ստանիցայից, թվագրվում են VIII—IX դդ. և խիստ նման են Դվինի օրինակներին։

**Ղամպարներ.** Ապակե անոթների մեջ մեծ խումբ են կազմում տարբեր չափերի և գույների թասերը, որոնց մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ դրանք պատկանել են եկեղեցուն, օգտագործվել են որպես ղամպարներ եկեղեցու և կաթողիկոսական պալատի շքեղ ջահերի համար[18]։

Հայտնի է, որ հայկական եկեղեցիները զարդարված են եղել բազմաթիվ ջահերով։ Հայ պատմիչները բազմիցս նշում են այն տպավորության մասին, որը ստեղծում էր տաճարի ներքին լուսավորությունը ծիսակատարությունների ժամանակ[19]։ Հիանալի ջահ է ունեցել Անիի մայր տաճարը[20], իսկ **Գագկաշենի պեղումների ժամանակ** գտնվել են մի ջահի մնացորդներ, ապակե ղամպարների բեկորներով[21]։ Ջահի մնացորդներ են




Նկ. 35. Ապակե ղամպարների բեկորներ։

[18] А. А. Калантарян, Раскопки центрального квартала Двина 1964, 1965 гг.

[19] Ստեփանոս Տարոնացի, Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1885, էջ 185։ Պատմություն Արիստակեսի Լաստիվերտցւոյ, Երևան, 1963, էջ 55։

[20] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա., էջ 273—274։

[21] Н. Я. Марр, Ани, М.—Л., 1934, стр. 64—65.



գտնվել նաև Դվինի կաթողիկոսական պալատի պեղումների ժամանակ[22], որն իր վրա ուներ 20 ներդիր ճրագակալներ ապակե ճրագների համար։

Ապակե ղամպարները, որոնք դրվել են ջահերից կախված և ամրացված ճրագակալների վրա, բաժանվում են մի քանի խմբի[23]։

Առաջին խմբի մեջ են մտնում ոչ խորը, ալիքավոր և հարթ պատերով թասերը, որոնց մեծ մասն ունի դուրս ծալված պսակներ, ներճկված հատակներ (2305/118, 2446/2, 19 և այլն)։ Դրանք մեծ մասամբ գտնվել են 1964 թ. պեղումների ժամանակ բացված հորերում, սակայն բեկորներով հանդիպում են ողջ պեղավայրում, եկեղեցու շուրջը։ Ղամպարները թափանցիկ են, կապտականաչավուն և դեղնականաչավուն երանգներով։ Այս խմբում հանդիպում են նեղ և լայն մատնեքներով թասեր։ Նման անոթների մեջ լույսը բեկվում է և առանձին շքեղություն և հանդիսավորություն է տալիս։ Նման անոթներ հայտնի են նաև մերձավոր-արևելյան կենտրոններից (բարձրութ.՝ 3, 0—5, 0 սմ, բերանի տրամագիծը՝ 10,0—11,0 սմ, հատակի տրամագիծը՝ 7,0—8,0 սմ,)։ Նույն խմբի թասերի մեջ հանդիպում են օրինակներ, որոնք ունեցել են փոքր կանթեր պսակի մոտ, ջահից կախելու համար (նկ. $31_{15,16}$, $35_{4-14}$, աղ. XXXV, 6)։

Երկրորդ խմբի մեջ են մտնում կիսակլոր, անգույն ապակուց թասերը, որոնց հատակները գրեթե կլոր են, իսկ պսակները քիչ հաստանալով ներս են թեքվում։ Դրանք չունեն մատնեքներ, ապակին խիստ բարակ է։ Նման անոթների բեկորներ համեմատաբար քիչ են գտնվել։

Երրորդ խումբը ներկայացված է շուրջ 100—120 բեկորով և մի քանի ամբողջական անոթներով (2326/144,25 2446/5,16,22 և այլն)։

